

# ԷՋՄԻԱԾԻՆ



ԱՊՐԻԼ

1996

АЖ146

ԾԳ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ապրիլ
1996

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**
Այսօր ճարյավ ի մեռելոց ....................................................... 3

Ա. Ե. Ա. - Էջմիածինը՝ Հարության խորան ....................................................... 6
Փրկչի ճրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետի կողմից քույր Եկեղեցիների ճոգևոր պետերին ուղղված շնորհավորական գրությունների ցանկը ....................... 7
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետի զատկական պատգամը....................................................... 9
Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Ապրիլ 24-ի առիթով....................................................... 13
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայզերի պաշտոնական այցը Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ....................................................... 17
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար Կոնրադ Ռայզերի պատգամը Հայկական Ցեղասպանության տարեդարձի առթիվ ....................................................... 24
Ապրիլի 24-ը Մայր Աթոռում ....................................................... 25
**Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ** - Ավագ շաբաթը Մայր Աթոռում ....................... 27
**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ** - Վեհափառ Հայրապետի գահակալության մեկ տարին ....................................................... 32
Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Մայր տաճարում Կրկնազատկին, Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալության Ա տարեդարձի առթիվ ....................................................... 36
Հանդիսություն՝ նվիրված Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարվան ....................................................... 39
Համերգ՝ նվիրված Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձին....................................................... 40
**ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - Հանդիսություն՝ նվիրված Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձին ....................... 42
Գարեգին Ա Կաթողիկոսը Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշան շնորհեց բարերար Արթուր Մարտիրոսյանին ....................... 44
Գարեգին Ա Կաթողիկոսին ճանձնվեց Երևանի Պետական Համալսարանի պատվավոր դոկտորի դիպլոմ ....................... 46
**ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ ԺՈՌՈՅԱՆ** - Վեհափառ Հայրապետի այցը Ազգային գրադարան ....................................................... 48
**ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ** - Հայ Եկեղեցին 1914 թվականին .......... 51

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ - Հայ Եկեղեցին և արևմտահայության խնդիրները 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում ....62
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ - Անգլիան և հայ գաղթականությունը առաջին աշխարհամարտի տարիներին ....72
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - Փրկության ափ ....80
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Գրական ավանդույթը Ալիշանի տեղագրական հատորներում ....89
ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ - «Հայկազյան բառարանի նորոգումը» ....102

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Վիրահայոց թեմի Ախալցխայի շրջանի եկեղեցիների և մեկ հուշամատուռի օծումն ու վերաբացումը ....108
Բ. Ա. Գ. - Զատկական օրերը Բաթումիի հայոց համայնքում ....110

Ընդունելություններ Մայր Աթոռում ....112
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ - Եկեղեցական քնմ. լուրեր ....118
"ЭЧМИАДЗИН" официальный журнал Эчмиадзинского Католикосата ....120
«Etchmiadzin» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzin....122
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin ....124

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ*

# ԱՅՍՕՐ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ

*Այսօր մեռելներից հարություն առավ Ճշմարիտ Աստված, մահվամբ հաղթեց մահին և իր հարությամբ մեզ կյանք պարգևեց:*

*Սիրով ընդունենք հարությամբ տրված կյանքի պարգևը, արժանի դառնանք այդ պարգևի շնորհներին և այն մեր կյանքում դարձնենք ճշմարիտ ուրախություն:*

*Քրիստոնյայի համար ճշմարիտ ուրախությունը հարության շնորհով ապրելու հույսն է: Այդ հույսն է կենդանացնում մարդու հոգին, կազդուրում և խրախուսում:*

*Եկեղեցու բեմից եկող գարնանային հնչումն այսօր, ճառագայթված աստվածային Հոգու հրով, թող կիզի բոլորիս հոգիները, որ մենք լցվենք աստվածային գիտությամբ և ըմպենք հարության «բաժակն ուրախարար», որ պայծառանանք կյանքի արևով՝ արբելով կենաց Բանի ծաղկավետ քաղցրությամբ:*

*Ո՜ն, ուրեմն, կապտամաքուր այս հանդեսին սաղմոս ասենք ու օրհնություն, որպես մաքրված «Նո՛ր ժողովուրդ» նո՛ր երգ երգենք Նորոգողին, որովհետև՝*

*Այսօր հարյավ ի մեռելոց...*

*Մեր Տերը՝ Փրկիչը:*

*Այսօր փարատվեց մահվան տրտմությունը, Հրեղեն զորքերի հետ մենք էլ ցնծանք:*

## ՓԱՌ՛Ք ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՆԱԶՕՐ ՀԱՐՈՒԹՅԱՆ

*Որքա՜ն գեղեցիկ է հավատքի սերը, որն այսօր հնչեցնում է ավետիսը լուսապայծառ Հարության.*

*Փա՛ռք Քրիստոսի ամենազոր Հարության:*

*Փա՛ռք նրա հարության անմահարար խորհրդին:*

*Բացենք մեր հոգիների պատուհանները և պարուրվենք լուսատեսիլ այս խորհրդով:*

*Քննենք մեր հոգիների խորաններում հարության խորհուրդը:*

*Քննենք մեր զգայարաններով մեր մարմնի տաճարներում:*

*Զարդարվենք հարության լույսով և ապա դառնանք երգակից Քրիստոսի հարությունն ավետող հրեշտակին:*

*Եկեղեցին, որ պատգամախոսն է Տիրոջ հարության, այսօր հրավիրում է բոլորիս հարության հույսով ապրելու ճշմարիտ*

*առաքինության և առաքինությամբ մեր կյանքը ապրելու ճշմարիտ Նորոգության:*

*-Փա՛ռք Քրիստոսի*
*ամենակոր Հարության,*
*որ ավետիսն է մեր կյանքի նորոգության,*
*որ օրհներգն է մեր կյանքի լինելության,*
*որ սննդատուն է մեր կյանքի գոյության:*

*Այս գերագանց տոնի առիթով, դառնանք Հարության որդիներ,*
*Աստծո հարության լույսի սպասավորներ,*
*Եկեղեցու առաքելության կոչման քարոզիչներ,*
*Կյանքը հարությամբ կիզող լուսարարներ:*

## ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԵՐԳՈՒՄ ԵՆՔ ՔԵԶ

*Սրբափայլ զգեստներով պարդարված, այսօր հրեշտակների հետ երգում ենք Քեզ, Հարուցյալ Փրկիչ:*

*Մենք՝ հողեղեններս, հրճվում ենք հոգեղենների հետ և նույն փառատրությամբ օրհնում Քեզ՝ Հարուցյալ Փրկիչ:*

*Քո պարգևած անսահման բարիքները դարձնելով ճշմարիտ կյանքի շավիղներ, առաջնորդվում ենք առաքինությամբ:*

*Ի՞նչ կա ավելի գերագանց, քան Հարության լույսը,*

*Ի՞նչ կա ավելի փառավոր, քան Հարության փառքը.*

*Աստված իր հարությամբ մեզ կյանք պարգևեց,*

*Մենք էլ մեր հերթին Աստծուն պարգևենք մեր առաքինի կյանքի պտուղները՝ մեր փառաբանությունն ու օրհնությունը, խոնարհությունն ու հեզությունը, եղբայրասիրությունն ու ողորմածությունը, որ մենք հաճելի դառնանք նրա աստվածային տեսությանը:*

*Սրբափայլ զգեստներով պարդարված, այսօր վերստին հրեշտակների հետ*
*երգում ենք Քեզ, Հարուցյալ Փրկիչ:*

*Մենք՝ հողեղեններս, հրճվում ենք հոգեղենների հետ և նույն փառատրությամբ օրհնում Քեզ, Հարուցյալ Փրկիչ:*

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԽՆԴՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍԸ

*Տիեզերական խնդության Ավետիսն է այսօր զվարթ տարածվում գարնանաբեր իր շնչով: Հարության հուրն է արծարծվում բոլորիս սրտերում:*

*Կամավոր երկյուղածությամբ գոհություն հայտնենք մեր Տիրոջը, որ հաղթեց խավարային ուժերին և մեզ լուսավորեց իր շնորհներով:*

*Հաղորդակից դառնանք մեր Տիրոջ հարությանը և հոգենորոգ վայելչությամբ օծվենք հարության շողերով:*

*Հարության այդ նույն շողերով՝*

*Ջերմացնենք մեր սրտերը,*

*Գոտեպնդենք մեր հոգիները,*

*Առողջացնենք մեր մարմնի մասերը, որ արժանի դառնանք Հարության փառավոր տոնախանդեսին:*

*Փառավորենք Քրիստոսի Հարությունը,*

*Այն Հարությունը, որ մեզ կյանք պարգնեց,*

*Այն Հարությունը, որով փրկվեցինք,*

*Այն հարությունը, որով ազատվեցինք մեղքերի բռնավոր կապանքներից:*

*Այն Հարությունը, որով սրբվեցինք անօրենություններից,*

*Այն Հարությունը, որ մեզ, ազատագրելով երկրային տիղմից, տանում է դեպի չինք ու պայծառ երկինք,*

*Այն Հարությունը, որ մեզ ընծայեց Հոր Աստուծո անսահման փառքի ժառանգությանը:*

*Արդ, վայելելով Քրիստոսի Հարության բարիքները, ամուր պահենք երկնքի արքայությանն արժանի դառնալու մեր հավատքը:*

## ՓԱՌԱՎՈՐՅԱԼ Է ՔՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Արդ, Քրիստոսի հարությամբ ամրապնդենք մեր հավատքի Տաճարը՝ մեր աղոթքները առաքելով սրբության Խորանին:*

*Բազմագութ Աստուծո Հարության շողերով պարուրենք մեր սրտերը՝ մեզանից խպառ վանելով դառնության հեծությունը:*

*Մարդասեր Աստուծո Հարության անճառ քաղցրության խուռքերով սնենք մեր մտքերը:*

*Երկայնամիտ Աստուծո Հարության խաղաղարար ցողով ցողենք մեր կյանքի ճանապարհը, որ արժանանանք Նրա քաղցրահայաց տեսությանը:*

*Որպեսզի արդարությունը մեզ առաջնորդի,*

*Որովհետև հավերժ է նրա ողորմությունը,*

*Հաշտության փրկությունը մեզ երբեք չլքի,*

*Որովհետև հավերժ է նրա ողորմությունը,*

*Ողորմածությունը մեզ արթուն պահի,*

*Որովհետև հավերժ է նրա ողորմությունը,*

*Բարեպաշտությունը մեզ առողջացնի,*

*Որովհետև հավերժ է նրա ողորմությունը,*

*Եվ առաքինի բոլոր գործերը*

*Դառնան իսկապես պայծառ սրբություն:*

# ԷՋՄԻԱԾԻՆԸ՝ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՆ

*Էջմիածինը,*
*արդ, այսօր դարձած*
*հարության խորան.*
*Փառավորում է քո Հարությունը*
*Հայկյան աշխարհում:*
*Հայոց աշխարհի բոլոր տեղերում*
*Դարձել է իրոք երգ սիրանունդ*
*և հիանալի:*
*Հայոց երկրի բոլոր կողմերում*
*Համեղաճաշակ տաղ է այն դարձել:*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*ցնծության ձայնով օրհնում է Աստծուն,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*և տարածում է լույսը խնդության,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*լուսապայծառ հրեշտակի հանգույն,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*Երուսաղեմի տաճարի նման,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*մաքրափայլ վարդի քնքուշ շողանքով,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*լուսապարդ խաչի շողարձակումով,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*լուսավորչաշող կանթեղի նման,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*հավերժ ղողանջող*
*սուրբ զանգի հանգույն,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*մշտնջենաբուխ ավազանի պես,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*մարգարեների վառ տեսիլքներով,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*առաքյալների տիրականչ ձայնով,*
*Լուսավորվել է Էջմիածինը՝*
*օրհնյալ սրբերի փառապսակով,*
*Եվ օրհնաբանում սաղմոսերգությամբ,*
*Օրհնում քնարով, տավղով, ծնծղայով*
*Սուրբ և կենարար Լույսը Հարության:*

*Ա. Ե.Ա.*

# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ).

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍԻՆ (Ստամբուլ).

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻՑ Բ-ԻՆ (Մոսկվա).

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու
Պապ և Պատրիարք, Նորին Սրբություն ՊԱՐԹԵՆԻՈՍ Գ-ԻՆ (Կահիրե).

Երուսաղեմի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ).

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե).

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՈՒԼՈՍԻՆ (Ադիս Աբեբա).

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ).

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի).

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ).

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա).

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս).

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս).

Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ).

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս).

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՋՈՐՋ ԿԱՐԵՅԻՆ (Լոնդոն).

Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք).

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԵԼԻՆ (Բելգրադ),

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),

Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե),

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
Դոկտ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐԻՆ (Ժնև)

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի ընդհանուր քարտուղար
Դոկտ. ԺԱՆ ՖԻՇԵՐԻՆ (Ժնև)

Մխիթարյան ուխտի ընդհանուր Աբբահայր
ԳԵՈՐԳ վարդապետ ՊԱԼՅԱՆԻՆ (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԳՈԺԱՆՅԱՆԻՆ (Վիեննա):

***

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մեկ անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների միջև:

***

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը շնորհավորական գիր է ուղարկել Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը, Երուսաղեմի և Կ. Պոլսո Հայոց Պատրիարքություններին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին:

Այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ ու հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր ու նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

# ՅԱՐՈՒԹԻՒՆ

# Ի ՎԵՐԱՅ ԵՐԿՐԻ ԵՒ Ի ՅԵՐԿԻՆՍ

Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին օրերու ամենէն զարմանահրաշ դէպքերէն մէկը այն էր որ իր խաչի մահէն և յաղթական յարութենէն առաջ Ան յարութիւն տուաւ իր բարեկամին՝ չորեքօրեայ ի մահ ննջեալ և ի գերեզմանի ամփոփեալ Ղազարոսին: Յովհաննէս Աւետարանիչ կը պատմէ թէ ինչպէս երբ Յիսուս լսեց Ղազարոսի մահը, փութաց ի Բեթանիա, այս վերջինոյն տունը, որպէսզի զայն վերարթնցնէ մահուան քունէն, վերստին կեանք շնորհէ անոր: Ղազարոսի երկու քոյրերէն մէկը բարեպաշտն Մարթան՝ ընդառաջ երթալով Մեծ Վարդապետին, ըսաւ անոր.

-*«Ով Տէր, եթէ այստեղ ըլլայիր, եղբայրս չէր մահանար»* :

Յիսուս պատասխանեց.

-*«Քու եղբայրը յարութիւն պիտի առնէ»* :

-*«Գիտեմ»* , ըսաւ սգաւոր քոյրը, *«պիտի յառնէ ան յարութեան վերջին օրը»* :

Այն ատեն էր որ Յիսուս յայտարարեց.

*«Ես իսկ եմ յարութիւնը և կեանքը. ան որ ինծի կը հաւատայ, թէպէտ և մեռնի, պիտի ապրի: Եւ ան որ կ'ապրի և ինծի կը հաւատայ, յաւիտեանս պիտի չմեռնի»* (ՅՈՎՀ. ԺԱ. 25 - 26 ) :

Յիսուս բացայայտօրէն ըսել ուզեց որ յարութիւնը միայն մահէն ետք ապրուելիք վիճակ չէ, այլ նաև այս երկրի վրայ ապրուելիք կեանք, որ Իրմով՝ Քրիստոսով է ներշնչուած և ներթափանցուած ու տիրապետուած: Ան որ կը հաւատայ Քրիստոսի, այսինքն՝ իր կեանքի մէջ ներկայ կ'ունենայ զՔրիստոս, կ'ապրի ու կը գործէ Անոր ապրած և ուսուցած ճշմարտութիւններով, բարոյական սկզբունքներով և հոգևոր արժէքներով, մահ չի ճանչնար, մէկ խօսքով՝ յաւիտենական արժէքներով կը յաւերժացնէ իր կեանքը թէ՛ երկրի վրայ և թէ՛ երկինքի մէջ:

Մենք առհասարակ սովոր ենք Քրիստոսի յարութիւնը առնչելու կամ նոյնիսկ նոյնացնելու անդենական կեանքին հետ: Անմահութիւնը սակայն սոսկ մահէն ազատ ըլլալու հոգեկան գոյավիճակը չէ, ֆիզիկական և ժամանակաւոր աշխարհէն վեր և անդին: Յիսուս ըսաւ. *«Ես իսկ եմ յարութիւն և կեանք»*, մահը խորտակեց կեանքո՛վ: Այնպէս ապրեցաւ, և սորվեցուց մեզ ապրիլ, որ մահը չկարենայ վերջ դնել այդ կեանքին, ոչ թէ անշուշտ մարմնաւոր գոյութեան, այլ այդ գոյութիւնը իմաստաւորող և արժեցնող կեանքին, որուն մէջ կան ապրումներ, իրագործումներ, որոնց մէջէն անմահ հոգին ինքզինք կ'արտայայտէ և կը յաւերժացնէ, ինչպէս Բարին մարդկային արարքին մէջ, Գեղեցկութիւնը՝ քարին, գոյնին և ձայնին մէջ, Ճշմարտութիւնը՝ խօսքին ու կեանքին մէջ:

Յիսուս աւելցուց. *«Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտ և մեռնի* (այսինքն՝ իր ֆիզիկական գոյութիւնը վերջ գանէ աստուածաստեղծ մեր նիւթեղէն բնութեան աստուածադիր օրէնքովը), *ան պիտի ապրի»*: Պիտի ապրի թէ՛ իր երկրաւոր կեանքի ընթացքին դրսեւորած անմահ ապրումներովը և թէ՛ իր թողած և յաւերժօրէն ապրող ու խօսող վկայութիւններովը, գործերովը: Եւ երբ հողը փճանայ իր մէջ՝ հողայնութենէն վեր մնացող և հոգեղէն բնոյթ, տարողութիւն ու արժէք ունեցող իր արարքներովը ան կը մնայ անմեռ, յաւերժայիշատակ և վկայ՝ անմահական արժէքներու:

***

Այսպէ՛ս հաւատացին բոլոր ճշմարիտ քրիստոնեաները աշխարհի չորս ծագերուն, քրիստոնէական պատմութեան բոլոր ժամանակներուն՝ առաջին օրերէն սկսեալ մինչև մեր այսօրուան օրերը: Այս հաւատքով ապրեցան և նոյնիսկ մարտիրոսական վկայութեամբ մահը դիմակալեցին անոնք, որոնք, երբ հարկը պահանջեց, նոյնիսկ իրենց երկրաւոր կեանքն ընծայեցին որպէս գին իրենց անմահական և երկնային կեանքին համար: Յարութեան հաւատքը եղաւ անոնց կեանքին մղիչ ոյժը: Անմահութեան գաղափարով ապրուած կեանքը եղաւ անոնց կեանքին հարազատ ոճը: Յարութեան յոյսը անդրշիրիմեան անմահութեան՝ յոյսը եղաւ անոնց կեանքի յարացոյց փարոսը: Քրիստոսի հետ յաւերժօրէն հաղորդ մնալու փափաքը եղաւ անոնց կեանքին անդրագոյն ձգտումն ու տեսիլքը:

Ան որ գիտէ ճիշտ կարդալ քրիստոնէական եկեղեցւոյ երկհազարամեայ պատմութիւնը, չի կրնար այնտեղ չտեսնել յարութեան գաղափարին, հաւատքին և կենսատու ոյժին ներգործութիւնը: Սուրբերու և նահատակներու անվերջ շարանը այդ ճշմարտութեան պերճախօս հանդիսադրութիւնն է ոևէ բանիմաց և անկեղծ մարդու համար: Քրիստոնէութեան պատմութիւնը միանգամայն արիւնոտ և արևոտ պատմութիւն մըն է: Արեան հեղումը, սակայն, կեանքին վերջակէտն ըլլալէ աւելի՝ անմահութեան բանալին է, որովհետև յարութեան հաւատքին և յոյսին վկայութիւնն է ան:

***

Մեր հայ ժողովուրդի ողջ պատմութիւնը, գրականութիւնը, արուեստը անսասան և անհերքելի փաստը կուտան Յարութեան հաւատքին և ոյժին յաղթանակին՝ մեր ազգին այնքան յաճախակիօրէն սպառնացած մահուան հարուածներուն դիմաց:

Մեր հայրերը միշտ երգեցին, և երգել կուտան մեզի այսօր.

*« Փա՛ռք յարութեան քո, Տէր*
*Ոչ դադարեցայց, Քրիստոս, օրհնել զՔեզ*
*Զամենայն աւուրս կենդանութեան իմոյ»* :

Այո՛, մենք չդադրեցանք հաւատալէ Անոր յարութեան, չդադրեցանք օրհնելէ Անոր յարութիւնը մեր ամբողջ կեանքի ընթացքին: Անոր յաւիտենաշունչ կեանքը ընդելուզուեցաւ մեր կեանքին, մեր

ազգի համայնական կեանքին ինչպէս կրակը կը տարրանայ երկաթին մէջ և երկաթը կը զգենու հրեղինութեան բնութիւնն ու ոյժը, որոնց դիմաց ժանգը կը մեռնի, փոշին ու կեղտը կը չքանան, մեղքը մեր կեանքին վրայ կը դադրի ունենալէ իր մահացնող ազդեցութիւնը:

Այսօր, ազատ ու անկախ մեր հայրենիքին մէջ, երբ լծուած ենք այն վճռական և ապագայատեսիլ գործին, որուն նպատակն է վերագտնել մեր ազգային ինքնութեան ամենէն հարազատ ապրումներն ու գաղափարները, կեանքի ուղղութիւնն ու նկարագիրը, քրիստոնէական հաւատքի վերակենդանութիւնը ամենէն էական ոյժերէն մէկն է մեր փրկութեան և յաւերժացման ուղևորութեան համար դէպի մեր ապագան: *Այդ Հաւատքին սիրտը յարութեան գաղափարն է*, որ կոչուած է կեա՛նք դառնալու իր իսկատիպ հարազատութիւնը և ճշմարտութիւնը ունենալու համար: Իմացական, տեսական գաղափար չէ ան, ոչ ալ սոսկ անդենական կեանքի ակնկալութիւն և սպասում: Ան կե՛անք է մեր կեանքին իմաստ տուող, Աստուծոյ կեանք-տուրքը բարեաց աղբիւրի վերածող, երջանկութեան ոսկի բանալին մեր ձեռքերուն մէջ դնող: Այո, Հայաստանը եղաւ յաճախ Գեթսեմանի անձկալից պարտէզ, եղաւ քարքարոտ Գողգոթա, եղաւ խաչի ճանապարհ և դարձաւ արիւնաքամ խաչելութիւն: Հայութեան պատմութիւնը, սակայն, եղաւ մի՛շտ *յարութեան* յաղթանակ:

⁂

Այդ պատմութեան շարունակման և զարգացման պատասխանատուութեան առջև կը գտնուինք բոլոր ապրող հայերս թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի և թէ՛ արտասահմանի մէջ: Յարութեան շունչը միայն կրնայ ըլլալ մեր ներկայ գոյութեան կենսընթացային շարժիչ ոյժը: Յարութեան հաւատքին հպարտ *ժառանգորդները* չենք կրնար ըլլալ միայն. պէտք է դառնանք անոր յառաջացնող *ջահակիրները*:

Աշխարհի այսօրուան դրութեան մէջ մարդիկ առհասարակ կ'ապրին երկրասահման կեանքով և երկրագնաց ընթացքով: Հոգևոր արժէքներու, յաւիտենական ճշմարտութիւններու անհաղորդ մթնոլորտ մը կը տիրէ չորս դին: Գիտական, ճարտարարուեստական քաղաքակրթութեան մը յառաջ բերած փորձութիւնն է այդ. այսինքն՝ գոհանալ միայն շօշափելի տեսնուածով և մարմնական հաճոյքներու վայելքներով: Հարկ է զգոյշ և զգաստ կեցուածք որդեգրել, որպէսզի մեր բո՛ւն եղածը, մեր հոգեղէն, անմահական գոյութեան տարածքը զոհ չերթայ մեր ունեցածին, մեր մարմնաւոր պարունակին, զի "*Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգտէ*" (ՅՈՎՀ. Զ. 64), ինչպէս կ'ըսէ մեր Տէրը և Ճշմարտութեան երկնաւոր Վարդապետը՝ Յիսուս Քրիստոս:

Նոյն այդ աշխարհին մէջ, այսօր չենք կրնար չնշմարել այն դրական և լուսաւոր նշանները, որոնք հոգևոր վերարթնութեան մը յուսալից երևոյթները կը պարզեն: Հետևենք կեանքի ա՛յս գիծին, ոյժ տանք հոգևոր անանց արժէքներուն:

Քրիստոսով մարմնաւորուած ճշմարտութիւնները անմահացուցիչ են, ինչպէս Ինք ըսաւ. "*Ես իսկ եմ յարութիւն և կեանք*" ու իր Յարութեամբը ցոյց տուաւ այդ անմահութեան ճամբան ողջ մարդկութեան համար: Եթէ հաւատանք Իրեն և հետևինք Իր կեանքին և ուսուցումներուն՝ անմահութեան անսպառ երջանկութիւնը կ'ապրինք մեր մէջ: Յաւիտենական կեանքի գիտակցութեամբ ապրիլ մահկանացու մեր կեանքը՝ կը նշանակէ փրկել այդ կեանքը մահուան, ոչնչացման վտանգէն: Յիսուս յստակ ու շեշտ բառերով ըսաւ. *«ան որ կ'ապրի և ինծի կը հաւատայ՝ յաւիտեանս պիտի չմեռնի»*:

***

Հաւատացեալ հայորդիք,

Եկէք Զատկի այս առաւօտուն վերանորոգենք մեր մէջ անմահական կեանքի ձգտումն ու ճաշակը: Բիւրեղացնենք և զօրացնենք մեր հաւատքը Յիսուսի Յարութեամբ մեզի տրուած ճշմարտութեան վրայ, թէ՝ եթէ անմահական արժէքներու գիտակցութեամբ ապրինք մեր կեանքը երկրի վրայ՝ յաւիտենական կեանքը ապրած կ'ըլլանք մեր մահկանացու կեանքին իսկ մէջէն և կը հասնինք անդենական կեանքի երանութեան: *«Երկնքի արքայութիւնը»* միայն երկինքի մէջ չէ, այլ մե՛ր մէջ, մեր ապրած կեանքի ներաշխարհին մէջ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի բառերով՝ *«արքայութիւնն երկնից ի ներքս ի ձեզ է»* (ՂՈՒԿ. ԺԷ. 21) :

Երկու շաբաթներ ետք, Ապրիլ 24-ին, պիտի վերապրեցնենք մեր մէջ մեր Ապրիլեան եղեռնի զոհերուն յիշատակը: Յարուցեալ ազգի աչքերով պիտի նայինք անոնց մահուան և այդ մահուան մէջ պիտի տեսնենք մեր ազգի յարութեան շքեղ իրողութիւնները: Այսինքն՝ յարութեան լոյսով կնքուած անոնց մահովը խափանուած պիտի գտնենք մահը մեր ազգին և պիտի ողջունենք նոր արևածագով բացուած յարութեան նոր շրջանը մեր ազատ ու անկախ Հայաստանի հողին վրայ և ողջ հայ ժողովուրդի կեանքին մէջ ի Մայր Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի:

Այդ լուսավառ հոգեկան ապրումներով կ'ողջունենք ձեզ բոլորդ 1700 տարիներ առաջ յարութեան հաւատքին՝ Քրիստոնէական կրօնին՝ ազգային հաւատք, պետական կրօն հռչակման այս սրբազնասուրբ կեդրոնէն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն: Ի բոլոր սրտէ կ'աղօթենք որ յարութիւնը ապրիք ի վերայ երկրի և ի յերկինս և ձեր կեանքը վերածէք փառատրութեան առ Աստուած և սպասաւորութեան ազգիս հայոց անմահութեան. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

7 Ապրիլ 1996 , Ս. Զատիկ
Մայր Աթոռ Ս. Էջմիածին

## ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԱՊՐԻԼ 24-Ի ԱՌԻԹՈՎ

### ՀՆԳԱՄԱՍՆԵԱՅ ՁՐՈՅՑ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՏՕՆԻՆ

24 Ապրիլ 1996 ...

Դարձեալ ժամադրուած ենք մեր նահատակներուն հետ, և անոնց մէջէն, իր–րու հետ, ուր ալ ըլլանք, ի Մայր Հայաստան թէ ի ծագս աշխարհի:

Անցեալ տարի 80–րդ մեր ժամադրութիւնն էր երկնարձակ մեր նահատակներուն և մեր՝ ապրողներուս միջև: Միշտ այս օրն էր, 17 Ապրիլ, երբ Ութսունամեակի առիթով իմ առաջին խօսքը որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց ուղղեցի մեր համայն հայ ժողովուրդին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, ուր կարծես դեռ կը հնչեն լռած ձայները Տէրզօրեան նահատակներուն, այն վերապրող գաղթականներուն մէջէն որոնք հազարներով պատսպարուեցան այս սրբազնասուրբ վեհավայրին մէջ, այստեղ գտնելով վերակենդանութեան շունչ, նոր շունչ հայրենի հողին զօրութեամբը տրոփող:

Այս տարի, 81–րդ այս ժամադրութեան, եկէք փակենք մեր անձերը բոլոր այն ապրումներուն, խոհերուն, ձայներուն և զգացումներուն, որոնք բաժինն են մեր առօրեային, մեր ամենօրեայ սովորութենականացած կեանքի արտայայտութիւններուն, և նստինք զրոյցի.–

#### Ա. Նահատակներուն հետ

Դուք որ կայիք ու չեղաք, կը ջնջէիք և անշնչացաք, կ՚ապրէիք և մեռաք, ապագայ ունէիք և դարձաք անցեալ, այսօր եկած ենք ձեզի ըսելու.– թէև չեղաք՝ միշտ կը մնաք, թէև անշնչացած՝ բայց միշտ կը ներշնչէք, թէև մահացաք՝ բայց կ՚ապրիք յաւերժ, թէև անցեալի վերածուեցաք՝ բայց երբեք չանցաք: Մենք՝ ձեր զաւակները և թոռները կանք այսօր և այնպէս կը զգանք որ մեր զաւակներն ու թոռները և անոնց զաւակներն ու թոռներուն թոռները պիտի ապրին: Եւ այս բոլորի կեանքովը դուք պիտի անմահ ապրիք: Ձեր հոգևոր ծննդավայր Ս. Էջմիածնէն այսօր ես կը վկայաբերեմ ձեզ այն ինչ որ անհա տարի մը ամբողջ տեսայ մեր մայր հայրենիքին մէջ, նո՛ր կեանք, ազատութեան շունչով լիցքաւոր և անկախ պետականութեամբ կերպաւորուած, ինքնակամ յառաջացնացութեամբ կշռութաւոր, Արցախեան արդար պայքարի կամքովը պիրկ ու հայ ժողովուրդի իրաւունքներու գիտակցութեամբն ու նախանձախնդրութեամբը տոգորուն:

«Նահատակք պանծալիք» և «մարտիրոսք ցանկալիք», երանական ձեր խաղաղութեան մէջ հրճուեցէ՛ք և օրհնեցէ՛ք մեզ որ կարենանք միայն այսպէս՝ հարազատ ձեր ոգւոյն և հաւատարիմ ձեր սուրբ կտակին:

### Բ. Մենք մեզի հետ

Իւրաքանչիւրը ինք իր անձին հետ, ինքնամփոփ՝ իր ներանձնեայ խորանին մէջ: Կ'ապրինք այնպիսի ժամանակներու մէջ և այնպիսի աշխարհներու մէջ, ուր մարդկային կեանքերուն մէջ հոգեսպան երևոյթները օրէ օր կը բազմանան և սուր հանգամանք կ'առնեն նիւթապաշտական և հեշտակենցաղային պայմաններուն մակընթացութեամբը: Կ'ապրինք, այո՛, բայց ապրիլ կայ և ապրիլ կայ: Կ'ապրինք օր մը չըլլալո՞ւ համար, թէ կ'ապրինք երբեք չմեռնելու գիտակցութեան ու հաւատքին ներգործութեամբը մեր մէջ: Տասը օրեր առաջ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յարութեան կենսատու դէպքը տօնեցինք և հաղորդուեցանք անմահութեան շունչովը: Ահա հայութեան յարութեան շքեղ երևոյթն է որ այժմ կ'ողջունենք Ապրիլեան նահատակներու ոգեկոչման այս օրերուն

Եկէք ջինջ հայեացքով, անկեղծ ինքնատեսութեամբ նայինք մեր ներաշխարհին մէջ, ուր այսօր կ'արտացոլայ պատկերը մեր նահատակներուն: Սրբենք փոշին, մաքրենք կեղտը, որոնք կը կպին մեզի յատուկ անուններով՝ անտարբերութիւն, եսակեդրոնութիւն, աշխարհայնապաշտութիւն, ունայնասիրութիւն, հանդուրժողութիւն և յարակից այլ բառերով հանդերձուած: Ապրիլեան եղեռնի նահատակներուն յիշատակը թող դառնայ արցունք ինքնամաքրութեան և նոր արիւն յաւերժակենդանութեան:

### Գ. Իրարու հետ

Նոյն անունն ու արիւնը, նոյն հաւատքն ու լեզուն, նոյն հայրենիքն ու ճակատագիրը, նոյն անցեալն ու նոյն ապագան ունեցող մարդիկ ենք ՀԱՅ բառով համամկրտուած:

Այսօր, երբ նահատակներու հոգիին պրիսմակին մէջէն կը նայինք իրարու՝ չենք կրնար չտեսնել մեր միութիւնը, որ անոնց մահովը փաստուեցաւ, և՛ մեր թշնամիին կողմէ, որպէսզի մեր կեանքո՛վը ապրի ու գործէ մեր ազգի զօրութեան սիրոյն և մարդկութեան բարիքին համար:

Նստինք զրոյցի իրարու հետ, բնականաբար նոյն անձերը չենք անհատապէս: Տարբերութիւնները մեր մարդկային և ազգային գոյութեան բնական պայմաններուն մաս կը կազմեն, ինչպէս ուրիշ ազգերու պարագային: Բայց նոյն անձերը պէտք է ըլլանք հաւաքապէս: Միասնութիւնը մեր ճիտին պարտքն է, մեր

եկեղեցւոյն և ազգին, մեր հայրենիքին և պետութեան բնական պահանջքը ի սէր մեր նահատակներու յաղթանակին զօրեղացման և տեւականացման:

Նահատակներու յիշատակը մեր միասնութեան շաղախն է, տարբերութիւններու նուազման, հակամարտութիւններու չքացման, ներդաշնակ գործակցութեան զարգացման ներզօր ոյժն ու գործօն դերը:

### Դ. Ուրիշներու հետ

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր հաղորդակցութիւնը ուրիշներու հետ, ոչ-հայ մարդոց, պետութիւններու, եկեղեցիներու, կազմակերպութիւններու հետ, մարդկային այսօրուայ կեանքին մէջ անքակտելիօրէն շաղախուած իրականութիւնն է համաշխարհային մակարդակի վրայ: Դեռ շատեր կան, որոնք կ'անգիտանան մեր նահատակներու ցեղասպանութեան իրողութիւնը, ուրիշներ կան որոնք կը փորձեն մոռացութեան տալ կամ ստուերի տակ թողուլ զայն, ուրիշներ ալ կան որոնք կ'այլափոխեն պատմական իրողութիւնը և կ'անտեսեն ճշմարտութիւնը:

Նստինք զրոյցի բոլորին հետ անխտիր. չըլլանք միայն վկայողները կատարուած ցեղասպանութեան իրողութեանը, այլ մեր ստեղծարար կեանքովը և արդարութեան հաստուցման պահանջքովը ըլլանք տէ՛րը մեր դատին: Միայն այն ատեն և միայն այդ կամքի և նպատակի միահամուռ արտայայտութեամբն է որ մեր զրոյցը ուրիշներուն հետ յարգանք պիտի պարտադրէ և մեր ձայնին լսելիութեան երաշխիք պիտի ընծայէ:

Ուրիշներու հետ մեր այս զրոյցին մէջ մեր նահատակներու արեան ձայնը թող դառնայ մեր կեանքի՛ն ձայնը:

### Ե. Աստուծոյ հետ

Ո՛վ Տէր երկնի և երկրի, արարիչ ամենայն արարածոց, տուիչ կենաց, բաշխիչ բարութեանց և աղբիւր արդարութեան, Ապրիլեան եղեռնի Քու հայ զաւակներուդ հոգիները Քու մօտդ են այժմ: Ի խորոց սրտի այս հայցողական խօսքը կ'ուղղենք Քեզի խնդրելով որ երկնքի մէջ շնորհես անոնց այն ինչ որ չկրցան ունենալ ու վայելել երկրի վրայ - երջանկութիւնն երանական Քու սիրովդ ապրած ըլլալու և իրենց ազգը ապրո՛ղ տեսնելու:

Նայուածքդ ամենատես և պայծառակերպող իջեցո՛ւր և ցանէ՛ մեր՝ ապրողներուս մէջ, բիւրեղացո՛ւր մեր կեանքը թէ՛ մեր նորանկախացեալ Հայաստանի և թէ՛ աշխարհասփիւռ հայութեան մէջ: Զօրացո՛ւր մեզ, մաքրէ՛ մեր հոգիները, ուղղէ՛ մեր քայլերը դէպի արդարութիւն: Կակղացո՛ւր քարացեալ սրտերն ու մթագնեալ

միտքերը բոլոր անոնց, որոնց հոգիները դեռ փակ կը մնան ճշմարտութեան, արդարութեան և խաղաղութեան հանդէպ:

Քու Միածին Որդւոյդ ի Հայաստան իջման այս վայրէն, իմ ամբողջ ժողովուրդիս անունով, կ'աղաչեմ Քեզ Տէր, Դուն որ «Արդարութեան Արեգակ»էն Լեռան Քարոզով ճառագայթեցիր սա բառերը. «Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին», տո՛ւր որ այդ քաղցէն ու ծարաւէն դեռ տառապող և արդարութեան համար պատարագուած նահատակներու ժառանգորդ Քու Հայ ժողովուրդը յագենայ և, ուրիշ ազգերու հետ միասնաբար և եղբայրաբար վայելէ պտուղները արդարութեան և խաղաղութեան:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ապրիլ, 1996
Ս. Էջմիածին

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅՁԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ուրբաթ, Ապրիլ 19-ի առավոտյան ժ. 4.15 պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերը:

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանում Ընդհանուր Քարտուղարին դիմավորեցին Մայր Աթոռի Դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, բարձրաստիճան հոգևոր հայրեր, պաշտոնատար անձինք:

Մեծահարգ հյուրին Մայր տաճարում իր Պաշտոնական ողջույնը հղեց Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շրջապատված թեմակալ առաջնորդներով, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռի Միաբանության անդամներով, ինչպես նաև Հոգևոր Ճեմարանի ուսանողությամբ:

Գոհաբանական աղոթքից հետո Նորին Սրբություն Գարեգին Ա. Կաթողիկոսն ասաց.

«Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անունից մեծագույն երջանկության և հոգեկան խորը բավարարվածության զգացումով եմ ողջունում Ձեզ այստեղ, Մայր տաճարում, Հայ Եկեղեցու սրբազնագույն վայրում:

Ես ցանկանում եմ, որ Ձեր պաշտոնական այցելությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անունից հանդիսավոր կերպով սկսվի աղոթքի մեջ և՝ աղոթքո՛վ, քանզի աղո՛թքն է սկիզբը քրիստոնեական ճշմարիտ միասնության:

Անշուշտ, այն վայրը, ուր մենք կանգնել ենք այսօր, խորհրդանշում է Քրիստոնեական միասնությունը, որը խարսխված է Քրիստոսին անձին մեջ: Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն, այս վայրում 301 թ. մեր Տեր Հիսուս Քրիստոսը երկնքից վար իջնելով՝ նշել է որպես տեղը Հայոց Հողում կառուցվելիք Իր առաջին Ս. Տաճարի: Դա այն ժամանակն էր, երբ Եկեղեցին Միասնական էր և Ընդհանուր, և վստահ եմ, որ այն այդպիսին կլինի և այսօր:

Ես կցանկանայի ողջունել Ձեզ և, ի դեմս Ձեզ, նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին անդամակցող քույր Եկեղեցիներին: Կուզեի ողջունել նաև Ձեր, ինչպես և իմ Տունը՝ Ժնևում, Ձեր բոլոր աշխատակիցներին, որոնց հետ Դուք երկար ժամեր եք անցկացնում ամուր պահելու համար այն միասնությունն ու համերաշխությունը, որը մենք վայելում ենք այսօր:

Ես իրապես հավատում եմ, որ այս այցելությունը ավելի կարժևորի՝ մեկ ընդհանուր Աստուծո, մեկ Ավետարանի և Միասնական Եկեղեցու գաղափարը»:



Իր պատասխան խոսքում Դոկտ. Ռայզերն ասաց.

«Ձերդ Սրբություն, ինձ համար սա շատ կարևոր պահ է: Ես ցանկանում եմ արտահայտել այն զգացումները, որ ապրեցի Ձեր խոսքերը լսելիս:

Երբ Դուք ընտրվեցիք Ամենայն Հայոց Կաթողիկոս, ես պաշտոնական այցելությամբ գտնվում էի Հռոմում՝ որպես հյուրը Հովհաննես-Պողոս Պապի, և չկարողացա անձամբ ներկա լինել այդ հանդիսավոր արարողություններին: Իմ առաջին այցելությունը խորհրդանշական է, քանի որ այն համընկնում է Ձեր՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու և գահակալելու առաջին տարելիցին: Եվ մինչ այդ հանդիսավոր և պատասխանատու պահը մենք Ձեզ հետ էինք մեր աղոթքներով:

Մենք, անշուշտ, օտար չենք իրար: Իրականում մենք միասին երկար ճանապարհ ենք անցել: Ձեր՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի փոխնախագահ լինելու ընթացքում, Ձեզ անձնապես համարում էի իմ ավագ ընկերներից մեկը և առաջնորդվում Ձեր իմաստուն խորհուրդներով: Եվ ոչ միայն ես:

Հետևաբար ես կցանկանայի իմ երախտագիտությունն արտահայտել՝ Խորհրդին անդամակցող քույր Եկեղեցիների միասնության գործին ցուցաբերած Ձեր աջակցության և օժանդակության համար:

Սա այցելություն է նաև Հայ Եկեղեցուն: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եղել է մեկը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին նվիրված Եկեղեցիներից՝ որպես ապացույց Քրիստոնյա Եկեղեցիների Միասնության:

Ուզում եմ հիշել այն անշահախնդիր համերաշխությունն ու հոգատարությունը, որը վայելեց Հայ Եկեղեցին ահեղ երկրաշարժի օրերին:

Մտաբերում եմ Ձեր Երջանկահիշատակ նախորդի, Վազգեն Ա. Կաթողիկոսի օրհնանքները, երբ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը իր գագաթնակետին էր հասել:

Հիշում եմ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Հայ Եկեղեցու ներկայացուցիչների և այլ ընկերությունների՝ վերջերս կայացած միասնական համաժողովը՝ «Կլոր սեղանը», որի ընթացքում մշակվեց մի միասնական ծրագիր՝ Հայ Եկեղեցու վերանորոգության և առավել կենսունակորեն գործելու ուղղությամբ:

Խորապես տպավորիչ էր համաժողովին Ձեր ողջույնի խոսքը, որում Դուք հանգամանորեն ներկայացրեցիք Ձեր կողմից տնօրինվող պարտականությունները:

Ես ցանկանում եմ արտահայտել իմ հարգանքն ու հիացումը Ձեր հայտնած տեսակետների բյուրեղության, հստակության համար, համոզված եմ, որ երբ դրանք կիրառություն գտնեն իրականության մեջ, կդառնան Հայոց օրհնված Հողում Քրիստոնեական վկայության վերազարթոնքի փառավոր մի օրինակ»:

Հավարտ արարողության, Նորին Սրբություն Գարեգին Ա. Կաթողիկոսը և մեծահարգ հյուրը, թափորի ուղեկցությամբ առաջնորդվեցին դեպի Վեհարան, ուր տեղի ունեցավ նրանց առաջին առանձնական զրույցը:

Կեսօրին Դոկտ. Ռայզերը խորհրդակցություն ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ, հանդիպեց թեմակալ առաջնորդներին և Միաբանության անդամներին: Դոկտ. Կոնրադ Ռայզերին ներկայացրեց Նորին Սրբությունը, որից հետո Ընդհանուր Քարտուղարը խոսեց ԵՀԽ խնդիրների մասին՝ հատուկ շեշտելով, որ այն սոսկ կազմակերպություն չէ ժնևում, այլ՝ Եկեղեցիների հաղորդակցման, հարաբերվելու միջոց՝ իրապես արժևորելու այդ հարաբերությունները: Դոկտ. Ռայզերը պատասխանեց նաև իրեն ուղղված հարցերին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Երեկոյան ժամը 5-ին Նորին Սրբություն Գարեգին Ա. Կաթողիկոսը և Դոկտ. Կոնրադ Ռայզերը հանդիպեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Նորին Վսեմություն Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Քրիստոնեական բարեկամության ջերմ և անկեղծ մթնոլորտում քննարկվեցին Հայ Եկեղեցուն, Հայաստանի Հանրապետությանը և նրա ժողովրդին վերաբերող հարցեր: Զրույցի ընթացքում խոսվեց նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Նշվեց, որ հակամարտությունը հարկավոր է կարգավորել խաղաղ ճանապարհով:

Նախագահի նստավայրից Դոկտ. Ռայզերը առաջնորդվեց դեպի Ս. Սարգիս եկեղեցի՝ այցելություն տալով Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանին: Սրբազան Հայրը ողջունեց մեծահարգ հյուրերին, որից հետո շարականների կատարմամբ հանդես եկավ մանկական երգչախումբը:



Դոկտ. Ռայզերը իր ուրախությունն հայտնեց Հայաստանում տարածվող հոգևոր վերազարթոնքի համար:

## ԱՅՑԵԼՈՒԹՈՒՆ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ, Ս. ԳԱՅԱՆԵ ՏԱՃԱՐՆԵՐ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվելու իր երկրորդ օրն սկսեց այցելությամբ Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե տաճարները:

Ս. Գայանե տաճարում և Ս. Գայանեի տապանաքարի մոտ աղոթելուց հետո, Դոկ. Ռայզերը այցելեց վանքում գտնվող Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության կենտրոն, ուր հանդիպեց Կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանի հետ, որը և Դոկտ. Ռայզերին ներկայացրեց Կենտրոնի աշխատակիցներին: Գլխավոր Քարտուղարը ուրախությամբ ծանոթացավ այդ նվիրական գործին նվիրված աշխատակիցներն և այնտեղ տարվող հետևողական աշխատանքներին:

Այնուհետև Դոկտ. Ռայզերը անթաքույց հիացումով ծանոթացավ հայ ճարտարապետության գոհարներից 7-րդ դարի կառույց Ս. Հռիփսիմեի տաճարին:

Ժամը 11-ին Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Դոկտ. Ռայզերը, ընկերակցությամբ հոգևոր և պաշտոնատար բարձրաստիճան այրերի, մեկնեցին Երևան, ուր ներկա եղան Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի և պետական ակադեմիական երգչախմբի միացյալ

համերգին՝ նվիրված Ցեղասպանության 81-րդ տարելիցին: Նվագախումբը և երգչախումբը, Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ կատարեց մեծն Կոմիտասի հանճարեղ գործերը:

Ժամը 2.30-ին Վեհափառ Հայրապետն ու Ընդհանուր Քարտուղարը ուղևորվեցին դեպի Խոր Վիրապ, հայոց մեծագույն վկայարանը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի 13-ամյա տանջանքների գուբը:

Պատվարժան այցելուները այնտեղ տեսան նաև մկրտվող երեխաների: Նորին Սրբությունը երեխաներին հրավիրեց միանալ իրենց աղոթքներին, հորդորեց իրենց ողջ կյանքի ընթացքում հավատարիմ մնալ մկրտության մեծ խորհրդին: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը գոհության աղոթք վեր առաքեց առ Աստված՝ անկախ պետականության և ազգային կյանքի վերազարթոնքի համար:

Ապա հարգարժան հյուրերը ծանոթացան վանքի համալիրին, որը վերանորոգման խիստ կարիք ունի:

Ուշ երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ընթրիքի մտերմիկ ընթացքին, դոկտ. Ռայզերը հանդիպեց թեմական առաջնորդների և Հայ Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչների հետ: Զրույցի ընթացքում նրանք խոսեցին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին վերաբերող կարևոր խնդիրների և մեր Եկեղեցու անելիքների մասին:

## ՔԱՐՈԶ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Կիրակի, Ապրիլ 21-ին, իր այցելության երրորդ օրը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերը ներկա եղավ Մայր տաճարում մատուցվող Ս. Պատարագին և քարոզ խոսեց հավատացյալների և զանազան երկրներից ժամանած հյուրերի առջև: Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մինչ Դոկտ. Ռայզերի հանդես գալը, մեկ անգամ ևս ողջույնի խոսք ուղղեց մեծահարգ հյուրին. «Վստահաբար կարող եմ ասել, որ առաջին անգամն է, որ Լութերական Եկեղեցու պատվարժան ներկայացուցիչը քարոզում է այս Խորանից», ասաց Վեհափառ Հայրապետը: «Իմ սիրտը լցված է անչափ ուրախությամբ, քանի որ այսօր մենք տոնում ենք Երուսաղեմում Քրիստոնեական Եկեղեցու իրապես տիեզերական դառնալու, հիմնադրվելու օրը: Այսօր, համաձայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծիսական ավանդության, մենք նշում ենք Աշխարհամատրան Տոնը, որը խորհրդանշում է Աղոթատունը Համայն Աշխարհի: Մենք վերհիշում և վերակոչում ենք առաջին Եկեղեցու, Վերնատան խորհուրդը, ուր առաջին հավատացյալները և նորադարձները հավաքվում էին լսելու առաքյալների քարոզները, աղոթելու, առաջնորդվելու նոր հոտը»:

Ապա, քարոզ խոսեց Դոկտ. Ռայզերը: Նա իր շնորհակալությունն արտահայտեց նախ առ Աստուած, որ իրեն հնարավորություն է ընձեռել աղոթելու Քրիստոնեական ավանդական այս սրբազնագույն վայրում, որից

հետո հավատացյալներին հրավիրեց իր հետ միասին խորհրդածել Բարի Հովվի առակի շուրջ՝ ասելով. «Հոտը վստահում է անձնուրաց հովվին և լսում նրան: Նրանք ապրում են համայնական կյանքով: Ոչխարները կարողանում են տարբերել բարի հովվին՝ վատ, կեղծ կամ վարձկան հովվից: Քանի որ նրանք գիտեն, որ վարձկան հովիվը ջանք չի թափում հոտի համար, մինչդեռ, բարի հովիվը իր կյանքը կտա իր ոչխարների համար և ետ կբերի կորուսյալներին, քանի որ դրանք իրենն են»: Նվիրյալ հովիվները շփվում են այլ հոտի ոչխարների հետ ևս, ասաց Դոկտ. Ռայզերը: Նա ավելացրեց, որ այս յուրահատուկ հանդիպումը մի նոր խթան կհանդիսանա միջեկեղեցական հարաբերությունների զարգացման գործում:

***

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը և ԵՀԽ Ընդհանուր Քարտուղարը, թեմակալ առաջնորդների, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, միաբան հայրերի և պաշտոնեության ընկերակցությամբ, ուղևորվեցին դեպի Ծիծեռնակաբերդ՝ Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը: Այստեղ նրանք դիմավորվեցին Երևանի քաղաքապետ Աշոտ Միրզոյանի, կառավարության և քաղաքապետարանի այլ պաշտոնյաների կողմից:

Ընդհանուր Քարտուղարը ծաղկեպսակ զետեղեց և լուռ աղոթքով հարգեց մեկ ու կես միլիոն անմեղ նահատակների հիշատակը: Տեղի ունեցավ կարճ հոգեհանգստյան արարողություն:

Այնուհետև Դոկտ. Ռայզերը այցելեց Ցեղասպանության թանգարան: Թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը անհրաժեշտ տեղեկություններ հաղորդեց այնտեղ պահպանվող մասունքների, փաստաթղթերի մասին:

Ընդհանուր Քարտուղարը խոր հուզմունքով այցելուների մատյանում գրառումներ կատարեց իր տպավորությունների և զգացումների մասին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ «ԱՐՄԵՆԻԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և գահակալության առաջին տարեդարձի առթիվ և ի պատիվ ԵՀԽ Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերի, Կրոնի Գործոց Խորհրդի Նախագահ Լազար Սուքյանի կողմից «Արմենիա» հյուրանոցում տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին բարձրաստիճան պաշտոնական անձինք և հոգևոր հայրեր, Հայ Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գործադիր Վարչության Տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Եգիպտոսի արտակարգ և լիազոր դեսպանները, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կրոնի Գործոց Խորհրդի նախագահ Պրն. Սուքյանը շնորհավորեց Վեհափառ Հայրապետի Ընտրության և Գահակալության առաջին տարեդարձը:

Ապա իր ողջույնի խոսքը հղեց Դոկտ. Կոնրադ Ռայզերին: Պրն. Սուքյանը իր գոհունակությունն արտահայտեց Եկեղեցիների միասնականության, սերտ համագործակցության առթիվ՝ ընդգծելով, որ անգնահատելի է քույր եկեղեցիների կողմից ցուցաբերված աջակցությունն ու օգնությունը պայքարի ու տքնանքի այսպիսի մի ժամանակաշրջանում, որը մեծ սփոփանք է երկրաշարժի վերքերը նոր թոթափող հայ ժողովրդի համար:

Գարեգին Ա. Կաթողիկոսը խոսեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի սերտ գործակցության մասին՝ մեր Եկեղեցու՝ ԵՀԽ-ին անդամակցելու պահից ի վեր (1962 թ.): Նորին Սրբությունը հավաստիացրեց, որ Հայ Եկեղեցու պատասխանատվությունը միջեկեղեցական հարաբերություններում էլ ավելի կմեծանա ապագայում:

Ավարտելով խոսքը, Վեհափառ Հայրապետը Դոկտ. Ռայզերին նվիրեց Ս. Էջմիածնի և Արարատի զարդաքանդակներով արծաթե հուշանվեր:

Դոկտ. Ռայզերը, դեռ Ծիծեռնակաբերդ կատարած այցելության տպավորության տակ, խոսեց Մեծ Եղեռնի օրերին ցավ ու տառապանք տեսած ժողովրդի մասին, իր խոհերն արտահայտեց ջարդված և ջարդվող այլ ժողովուրդների վերաբերյալ՝ ընդգծելով, որ այլևս չպետք է թույլ տալ, որ որևէ ժողովուրդ երբևէ արժանանա մեկ այլ ժողովրդի կողմից նման բռնությունների:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆ

Ապրիլի 22-ին Դոկտ. Ռայզերը, ընկերակցությամբ Ներսես արքեպս. Պոզապալյանի, մեկնեց Սևան, ուր նրանց դիմավորեց Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Սրբազան Հայրը Ընդհանուր Քարտուղարին առաջնորդեց Սևանի Վանքում գտնվող Վազգենյան Դպրանոց և մեծահարգ հյուրին ներկայացրեց Դպրանոցի սաներին: Դոկտ. Ռայզերը քաջալերական և հորդորական խոսք ուղղեց նրանց՝ հաջողություններ մաղթելով ուսման ասպարեզում:

Կեսօրին Սևան ժամանեց նաև Վեհափառ Հայրապետը:

Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կողմից, ի պատիվ մեծահարգ հյուրերի, տրվեց ճաշ:

## ՄԵԿՆՈՒՄ

Դոկտ. Ռայզերը Շվեյցարիա վերադարձավ Ապրիլի 22-ին:

«Զվարթնոց» օդանավակայանում Ընդհանուր Քարտուղարին ճանապարհեցին Մայր Աթոռի Դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, Կրոնի Գործոց Պետական Խորհրդի Նախագահ Լազար Սուքյանը, բարձրաստիճան հոգևորականներ:

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 23-ին Հայաստանից Շվեյցարիա վերադարձավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերը, որը պատվարժան հյուրն էր Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Վերադարձից հետո Դոկտ. Ռայզերը Ապրիլ 24-ի՝ Մեծ եղեռնի նահատակների հիշատակի օրվա առթիվ իր պատգամն է հղել հայ ժողովրդին, որն ընթերցողներին ենք ներկայացնում թարգմանաբար.

«Սուրբ Էջմիածին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն տված իմ պաշտոնական այցելությունից (19–23 Ապրիլ, 1996) վերադարձին, ցանկանում եմ անձամբ մասնակից դառնալ Հայ Ժողովրդի խոհերին, որն այսօր ոգեկոչում է Հայկական Ցեղասպանության հիշատակը, որ տեղի ունեցավ 1915 Ապրիլ 24-ին:

Հայաստանում անցկացրած մի քանի օրերին ես կարողացա այցելել խորապես տպավորիչ ազգային հուշարձանը (Ծիծեռնակաբերդ, Երևան) և ծաղկեպսակ զետեղել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անունից՝ ի հարգանս Ցեղասպանության զոհերի հիշատակի:

Ոչ ոք կարող է կանգնել հավերժական բոցի առջև կամ թանգարանում ականատես լինել բացահայտ փաստերին և սրտով ու մտքով խորապես չհուզվել և չազդվել: Այսօր Ցեղասպանությունը ոգեկոչել ազատ Հայաստանի մեջ, մեզ մղում է նայելու դեպի ավելի անդին, քան այս երկրի ողբերգական ժառանգությունը:

1997-ին Կրացում (Ավստրիա) կայանալիք Եվրոպական Եկեղեցիների երկրորդ Համագումարի նախօրյակին մեր այս հիշողությունը (Հայկական Ցեղասպանության) հարկ է, որ մեզ մղե, որ խոստանանք, որ ամեն ինչ կանենք, որպեսզի նման արհավիրքները այլևս երբեք չպատահեն: Հավատքի տեր եղող մարդիկ կոչված են լինելու գործիչները խաղաղության և վերահաշտության:

Թող Աստված օրհնի բոլոր այն ջանքերը, որոնք ուղղված են Հայաստանի Եկեղեցու և ժողովրդի կյանքը վերակերտելու և թող Հայաստանին շնորհի ապրել ապահովության մեջ իր դրացի երկրների հետ»:

ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

# ԱՊՐԻԼԻ 24-Ը
# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլ 24-ի առավոտյան ժամը 10.30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձրաստիճան հոգևոր հայրերի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, պաշտոնատար անձանց և Սփյուռքից ժամանած հյուրերի ուղեկցությամբ, Մայր Աթոռից ուղևորվեց դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ իր հարգանքի տուրքը և աղոթքը մատուցելու ի հիշատակ Մեծ եղեռնի անմեղ զոհերի:

Վերադառնալով Ծիծեռնակաբերդից, Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Մայր տաճարում Եղեռնի նահատակների 81-րդ տարելիցին մատուցվող Ս. Պատարագին՝ արարողությամբ Լոս Անջելեսից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանի:



Հավարտ սրբազան արարողության Գարեգին Ա. Կաթողիկոսը, շրջապատված հանդիսավոր թափորով, առաջնորդվեց դեպի Մայր Աթոռի շրջափակում Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանը, ուր Նորին Սրբության բարձր նախագահությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

Արարողությունից հետո հայ ժողովրդին իր Պատգամը տվեց Նորին Սրբություն Գարեգին Ա. Կաթողիկոսը: «Ապրիլ 24-ը, տարվան 365 օրերուն մեջ պետք է լինի մեր հոգենորոգության, ինքնամաքրման, ինքնազորացման օր, – ասաց Վեհափառ Հայրապետը: – Այս օրը մենք պետք է նայինք նահատակներու հայելիին մեջ՝ մեզի տեսնելու ոչ այնպիսին, ինչպիսին որ ենք, այլ այնպիսին՝ ինչպիսին պիտի՛ լինենք»:

Ծանուցանելով իր Պատգամը, Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ ստացել է Հայաստանից մեկ օր առաջ մեկնած Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերի հեռագիրը, որում Գլխավոր Քարտուղարը միասնություն ու համերաշխություն է արտահայտում իր Մեծ Ողբերգությունը սգացող հայ ժողովրդին: Դոկտ. Ռայզերը գրում է, որ 1997 թ. կայանալիք Եվրոպայի Եկեղեցիների երկրորդ Համագումարում բոլոր մասնակիցները պետք է վստահեցնեն, որ անելու են ամեն ինչ, որպեսզի նման արհավիրքներ այլևս չկրկնվեն:

Ավարտելով իր Պատգամը, Վեհափառ Հայրապետը հայ ժողովրդին մաղթեց իր հավատքի մեջ լինել հաստատուն, ցուցաբերել ամուր կամք՝ նորանկախ հայրենիքի պետականության կերտման նվիրական գործում:



**ԱՊՐԻԼ 24. ԷՋՄԻԱԾԻՆ, 1996 Թ.**

# ԱՎԱԳ ՇԱԲԱԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

*«Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցէ.*
*Եւ ամենայն որ կենդանի է և հաւատայ յիս՝ մի՛ մեռցի ի յաւիտեան»:*
(ՀՈՎՀ. ԺԱ 25 – 26)

## ԾԱՂԿԱԶԱՐԴ

*Օրհնություն Դավթի Որդուն,*
*Օրհնյալ է նա, որ գալիս է*
*Տիրոջ անունով:*
*Օրհնություն Բարձրյալին»:*
(ՄԱՏԹ. 21:9)

Իր Փրկչին՝ խոստացված Մեսիային, ընդառաջ գնացող բազմության շրթներից հնչող երկնաբույր այս օրհներգը մարտի 31 -ի կիրակի օրը մեկ անգամ ևս հաղթականորեն հնչեց մեր Եկեղեցու կամարների ներքո և արձագանքեց հավատավոր հայորդիների հոգիներում: Այո, Ծաղկազարդ էր Մայրավանքում, Ծաղկազարդի Սուրբ և անմահ Պատարագ էր մատուցվում նաև հայոց բոլոր եկեղեցիներում:

Ինչպես Երուսաղեմում էր՝ դարեր առաջ թափորը համրաքայլ և ինքնավստահ ընթացքով Տիրոջն առաջնորդում դեպի Սողոմոնյան տաճարը, որ Երուսաղեմի փառքն էր ու Հին Ուխտի ժողովրդի հավատքի միջնաբերդը, այնպես էլ այսօր, դարձյալ թափոր կազմած հավատացյալ ժողովուրդը դեպի նորօրյա Երուսաղեմյան տաճարն էր առաջնորդում իր սիրելի հովվապետին՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա Հայրապետին:

Գիշերային և առավոտյան ժամերգություններից հետո, ժամը 10.30-ին, Մայր տաճարում սկսվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ խորհրդանշող տոնին նվիրված Սուրբ և անմահ Պատարագը: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր Մայր Աթոռիս դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Երեկոյան ժամը 16.30-ին կատարվեց Դռնբացեքի գեղեցիկ ու անկրկնելի կարգը: Արարողության խորհուրդն ու իմաստը բացահայտող «Բաց մեզ Տէր»-ին հետևող փոխասացությունը, որ տեղի էր ունենում փակ խորանի վարագույրի ետևում, ներկա հավատացյալին մեկ անգամ ևս հիշեցրեց կատարածի օրը տեղի ունենալիք դատաստանը: Պատկերավոր կերպով ներկայացվեց նաև վերջին դատաստանը, որի մասին այնքան հաճախ խոսում էր Հիսուս:

Ասենք, որ Դոնբացեքի արարողությունը ավետարանական ոչ մի դեպքի և ոչ մի տոնի հետ չի առնչվում, այլ պարզապես վերջին դատաստանի տեսանելի պատկերն է տալիս հավատացյալներին: Դոնբացեքի արարողությունը խոսակցության, հարց ու պատասխանի ձև ունի:

## ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

Ըստ Հայաստանյայց Եկեղեցու տոնացույցի, Ավագ շաբաթ է կոչվում Ծաղկազարդին հաջորդող շաբաթը, որն ավարտվում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությամբ կամ Զատիկով: Ավագ է կոչվում նաև այդ շաբաթվա յուրաքանչյուր օրը: Երկուշաբթի օրվանից սկսյալ Հայոց Եկեղեցիներում, հընթացս առավոտյան և երեկոյան արարողությունների, ընթերցվում են Հիսուսի կյանքի վերջին շրջանին վերաբերող ավետարանական հատվածներ:

Դառն իրականություններով լի էր Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին հանգրվանը: Երուսաղեմ հաղթական մուտքից մի քանի օր անց նույն ամբոխը, որ կիրակի օրն Իրեն ձիթենու ճյուղերով և արմավենու ոստերով էր դիմավորել՝ բացականչելով, թե ***«Օրհնյալ է Տիրոջ անվամբ եկողը»***, այժմ արդեն խելահեղորեն բղավում էր. ***«Ի խաչ հան զդա...»***:

Ավագ շաբաթվա առաջին երեք օրերում հատկանշական արարողություններ չկան: Սակայն սովորություն է դարձել դրանք կոչել այդ օրերին ընթերցվող Ավետարաններում հիշատակվող դեպքերի անուններով: Ավագ երկուշաբթին հիշատակն է չորացած թզենու, Ավագ երեքշաբթին՝ տասը կույսերի, Ավագ չորեքշաբթին՝ անբարո կնոջ ձեռքով Քրիստոսի օծման:

## ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ավագ շաբաթվա օրերից յուրահատուկ կերպով է առանձնանում Ավագ հինգշաբթին: Այդ օրը հավատացյալ բազմությունն ի մի էր եկել Մայրավանքում մասնակցելու Վերջին ընթրիքը և Հաղորդության Սուրբ Խորհրդի հաստատումը խորհրդանշող Սուրբ և անմահ Պատարագին: Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը:

Հիսուս վերջին ընթրիքի ընթացքում վերցրեց հացը, օրհնեց, գոհացավ, տվեց Իր աշակերտներին՝ ասելով. ***«Առեք, կերեք, սա է իմ մարմինը»***: Ապա վերցրեց գինին, օրհնեց, գոհացավ և դարձյալ տվեց աշակերտներին՝ ավելացնելով. ***«Առեք, խմեցեք, սա է իմ արյունը»***: Նաև պատվիրեց, որ այսուհետ, ի հիշատակ Իրեն, նրանք նա նույնը կատարեն: Այսպես հաստատվեց Հաղորդության Սուրբ Խորհուրդը: Իսկ հետագայում այն վերածվեց այսօրվա Ս. Պատարագին՝ խորհրդանշելով նաև Քրիստոսի զոհաբերությունը:

Հընթացս Սուրբ Պատարգի, ներկա հավատացյալներին Աստվածային սիրո մասին իր պատգամը հղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը:

Հավարտ Սուրբ Պատարագի, Ամենայն Հայոց Խրիմյան Հայրիկի

գերեզմանի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ սիրելի Հայրապետի ծննդյան օրվա:

ՈՏՆԱԼՎԱ

Երեկոյան ժամը 16-ին Մայրավանքում, հընթացս Ոտնալվայի մեծախորհուրդ արարողության, որ հիշատակն է Տիրոջ տված օրինակի, ներկա հավատավոր հայորդիներին սիրո և խոնարհության իր դասը տվեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Հովհաննես Ավետարանիչը գրում է. *«Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները և մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: Ապա ջուր վերցնելով՝ սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ և սրբել սրբիչով»* (ՀՈՎՀ. ԺԳ 4-5):

Հետագայում Ոտնալվայի արարողությունը կարգեց Ս. Եփրեմ Խուրին, իսկ ԺԲ դարում հայերենի թարգմանեց Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը:
Մայրավանքի Խորանի վարագույրի բացվելուց հետո, ընթերցվեց աղոթք, որում հիշվեց Քրիստոսի մարդեղության խորհուրդը, փրկագործությունը: Ապա ջուրը խաչաձև կաթեցվեց կոնքի մեջ և ընթերցվեցին Սուրբ Գրային հատվածներ: Հովհաննես Պլուզ վարդապետի սիրո մասին գրված աղոթքն ընթերցեց Հայոց Հայրապետը:

Ավետարանի ընթերցումից ու օրվա հատուկ շարականների երգեցողությունից հետո, ընթերցվեց յուղի և ջրի համար գրված աղոթքը: Որից հետո Ավետարանով օրհնվեցին ջուրն ու յուղը:

Այնուհետև տոնականորեն զգեստավորված Նորին Սրբությունը, ծնկի գալով, լվաց իրեն շրջապատող տասներկուսի ոտքերը և օծեց յուղով:
Մեր Տերն Իր աշակերտների ոտքերը լվաց միայն ջրով: Այսօր յուղով օծումը խորհրդանշում է այն անուշաբույր յուղը, որ մեր Տիրոջ ոտքերին թափեց անբարո կինը:

Ոտնալվայի արարողությունից հետո ներկա հավատացյալներին բաժանվեց օրհնված յուղը՝ տուն տանելու համար:

ԽԱՎԱՐՈՒՄ

Համաձայն Հայոց Եկեղեցու օրացույցի, Ավագ ուրբաթը «Յիշատակ է չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Քանի որ եկեղեցական օրենքով հաջորդ օրն սկսվում է երեկոյան ժամերգությունից հետո, հետևաբար ուրբաթ օրվա հիշատակը կատարվում է հինգշաբթի երեկոյան:

Մայր տաճարում հավաքված հավատացյալները, հոգիներում անափ տխրություն ամբողջ, եկել էին մասնակցելու Տիրոջ երկրավոր կյանքը խորհրդանշող ամենատխուր արարողությանը, որ ծանոթ է Խավարում անվամբ:

Արարողությունն սկսվեց երեկոյան ժամը 19-ին: Խորանի վրա վառվող տասնմեկ մոմերը խորհրդանշում էին Տիրոջ առաքյալներին, սև գույնով ներկվածը՝ Հուդային: Մեջտեղում վառվող ամենամեծ մոմը խորհրդանշում էր Տի-

րոջը՝ Հիսուս Քրիստոսին: Հընթացս արարողության ընթերցվեցին յոթ Ավետարաններ, որոնք բովանդակում էին Հիսուսի Գեթսեմանի պարտեզում աղոթելը, Հուդայի գալը, մատնելը, Հիսուսին ամբոխի ձեռքը հանձնելը, Աննայի ու Կայիափայի մոտ տարվելը, ծեծվելը, ապտակվելն ու անարգվելը, Պետրոսի երեք անգամ ուրանալն ու զղջալը: Ավետարանի յուրաքանչյուր ընթերցումից հետո մարվում էր յուրաքանչյուր կողմից մեկական մոմ: «Տէր յերկնից» շարականից հետո հանգցվեցին եկեղեցու բոլոր լույսերը, և հնչեց «Փառք ի բարձունս»-ը:

Օրվա խորհուրդը մեկնող խոսք ասաց ներկաներին «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը:

«Մագնա»-ի երգեցողության ժամանակ կրկին վառվեցին լույսերը, դուրս բերվեց նաև մեջտեղի մոմը:

Հավարտ արարողության երգվեց «Խաչի քո Քրիստոս»-ը և կատարվեց խնկարկություն:

Մոմերը հանգցնելը խորհրդանշում էր աշակերտների թողնելն ու փախչելը, իսկ մեջտեղի մոմը, որ Տիրոջ խորհրդանիշն էր, ցույց էր տալիս Նրա մենակ ու անօգնական վիճակը:

## ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ

Ավագ ուրբաթը հիշատակն է Քրիստոսի խաչից իջեցվելուն: Առավոտյան ժամը 11.30-ին Մայր տաճարում, համաձայն տոնացույցի, կատարվեց Տիրոջ խաչելության կարգը: Ընթերցված Ավետարանները բովանդակում էին Հիսուսի՝ Պիղատոսի մոտ տարվելը, մահվան վճիռը, Գողգոթայի վրա խաչվելը, արեգակի խավարումը, երկրագնդի մթնելը և խաչի վրա Հիսուսի մահը:

Ավագ ուրբաթ օրը Սուրբ Պատարագ չի մատուցվում, քանի որ այդ օրը Քրիստոս Ինքը, որպես կենդանի զոհ, պատարագվեց խաչի վրա:
Ավագ ուրբաթ օրվա երեկոյան, հընթացս ժամերգության, տեղի ունեցած արարողությունը խորհրդանշում էր Քրիստոսի թաղումը:

Եկեղեցում, խորհրդանշական ձևով պատրաստված Հիսուսի գերեզմանի առջև, ծնկի եկած երգվեց «Սուրբ Աստված»-ն առանց փառավորյալի, կարդացվեց Ավետարան: «Լույս զվարթ»-ի երգեցողությունից հետո, կատարվեց Նախատոնակ: Այնուհետև, հավարտ «Պարգևատուն» շարականի երգեցողության, թափորով կատարվեց խնկարկություն: Մայրավանքի շուրջբոլորը պտտվելուց հետո, որպես հիշատակ Քրիստոսի թաղման, վերջում երգվեց «Խաչի քո Քրիստոս»-ը:

Արարողությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով:

## ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

Ավագ շաբաթ օրը Մայրավանքում Սուրբ Զատկի Ճրագալույց էր:
Նախ երեկոյան ժամը 17-ին սկսվեցին երեկոյան ժամերգությունն ու Սուրբ Գրային հատվածների ընթերցումները: Ապա մատուցվեց Ճրագալույցի

խթման Սուրբ և անմահ Պատարգը: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վարդապետ Նաջարյանը:

Զատկի Ճրագալույցի երեկոյան է վերջանում նաև Մեծ Պահքը, որ, ըստ հնավանդ սովորության, լուծվում է ձկով, ձվով և յուղով:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց Սուրբ Հարության նախատոնակը: Այնուհետև ներկա հավատացյալներից յուրաքանչյուրը շտապեց տուն՝ իր ընտանիքի անդամների հետ միասնաբար, համաձայն նախնյաց սովորույթի, հավաքվելու տոնականորեն պատրաստված սեղանի շուրջը և ընթրելու:

ԶԱՏԻԿ

***«Եթե Քրիստոս հարություն չի առել,***
***ապա զուր է մեր քարոզությունը,***
***զուր է նաև ձեր հավատքը»***:
(Ա ԿՈՐՆԹ. ԺԵ 14 )

7 ապրիլի, կիրակի. «Տօն հրաշափառ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», նաև «Տօն աւետեաց Սրբուհւոյ Կուսի Մարիամու»:

Ցնծություն էր ապրում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, քանզի Տիրոջ հարությամբ մահվան դեմ տարած հաղթանակը եղավ մարդկության պատմության մեծագույն նվաճումը: Քրիստոս Իր տնօրինական առաքելության ընթացքում ուսուցանեց հարության ճշմարտությունը, այլ խոսքով ասած՝ սիրո, զոհողության, ներության, տառապանքով ու համբերանքով առլեցուն կյանքը քարոզեց, որի փառապսակը եղավ Իր հրաշափառ հարությունը:

Հարության մեծախորհուրդ ավետիսը մեկ անգամ ևս վերապրելու ակնկալությամբ էին Մայրավանքում մատուցվող Ս. Պատարագին իրենց մասնակցությունը բերել հավատավոր հայորդիները: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը:

Սուրբ Հարության Պատարագով հավատացյալների հոծ բազմությունը մեկ անգամ էլ, հարության երջանկաբեր զգացողությանը համախառնված, ճշմարտապես ընկալեց, թե Քրիստոսի հրաշաբեր Հարության ավետմամբ է փոխանցվում նաև բոլոր մահացածների հարության հույսը, քանզի օրվա խորհուրդն ու իմաստը բացահայտող շարականի բառերով ասած՝ ***«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»***:

Ուրեմն՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունն Քրիստոսի...

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ

*Եկեղեցու հայրերը խորհրդաբանորեն եկեղեցին համեմատել են Նոյան տապանի հետ, քանի որ նրանում փակվելով Նոյ նահապետը փրկվեց ջրհեղեղի ալիքներից, իսկ մենք էլ եկեղեցի մտնելով ենք խուսափում աշխարհային կյանքի մեղքի ալիքներից և ինչպես տապանը անցնելով աշխարհակուլ ալիքների միջից «նստաւ... ի լերինս Արարատայ», այնպես էլ Լուսավորչի գահի բոլոր նվիրյալ և արժանավոր գահակալները անցնող դարերում ունեցել են մի նպատակ՝ ժամանակի բռնությունների, հավատուրացության պարտադրանքների, դավանա-քաղաքական խարդավանքների ահագնացող ալիքների միջից անխորտակ և «անսայթաք գնացիւք» վարել մեր եկեղեցու նավը:*

*1995 թ. ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի ընտրությամբ և ապա վերջինիս հաջորդած գահակալությամբ (4–9 ապրիլի), վերացավ սգո քողը Լուսավորչի գահից և մեր եկեղեցու նավը վարելու նվիրականագույն, բայց և բարձրագույն ու ծանրագույն պատասխանատվությունը վիճակվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:*

*Գարեգին Վեհափառը Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձավ Հայաստանի անկախության վերականգնումից մոտ հինգ տարի հետո, երբ անցնող յուրաքանչյուր տարին քանդելով նախորդ շրջանի կոմունիստական գաղափարախոսությամբ պայմանավորված սահմանափակումները, իր հերթին առաջադրում էր նորանոր խնդիրներ նախկին խորհրդային փակ համակարգից համաշխարհային հանրակցության մեջ ներառվող Անկախ Հայաստանի Հանրապետությանը:*

*Այս իրողությունը մի նոր և վճռորոշ հանգրվանի առաջ է կանգնեցրել և Հայ եԵկեղեցուն նրա առջև ծառացած բազմաթիվ հոգսերով և խնդիրներով՝ աղետի գոտու տակավին չսպիացած վերքը, Արցախի հարցը, պատերազմով ու սոցիալական ծանր վիճակով և գործազրկությամբ պայմանավորված բարոյական ձևախեղումները, ծավալվող հոգևոր վերազարթոնքի շարժումը Էջմիածնի «Լուսոյ խորանն» ուղղելը, որպեսզի մարդիկ չընկնեն տարբեր աղանդների լարած նենգապատիր որոգայթները, Հայ Եկեղեցու ավանդականության զուգակցումը արդի աշխարհի իրողություններով պայմանավորված ժողովրդին ընկալելի և սրտամոտ կենդանի քարոզչությանը, առավել գործուն մասնակցությունը միջեկեղեցական հարաբերություններին և էկումենիկ շարժմանը: Եվ վերջապես Հայոց Դարձի 1700-ամյակը Գարեգին Վեհափառի բնորոշմամբ մի «նոր հոգեգալստի» վերածելը մեր ժողովրդի կյանքում, այդ տարելիցին հաղորդելով և համաքրիստոնեական ու միջազգային տարողություն՝ ազգային կյանքում ներառելով ու աշխարհին ներկայացնելով Հայ Եկեղեցու հայրերի ու եռամեծար վարդապետների հոգևոր ժառանգությունը:*

*Թեև ժամանակի առաջադրած խնդիրները լուծելու համար ժամանակ է հարկավոր, սակայն ժամանակային հապաղումը կարող է կորստաբեր լինել: Այս պատճառով Վեհափառ Հայրապետը գահակալությունից անմիջապես հետո՝ մայիսից, սկսեց հովվապետական ուղևորությունների շարքը՝ նշանաբան ունենալով Ավետարանի նշանավոր խոսքերը. «Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն» (Հովհ. Ժ 14):*

*Նորին Սրբությունը առաջինը այցելեց աղետի գոտի, ուր մինչ այդ եղել էր աղետալի երկրաշարժից ընդամենը մի քանի օր անց, որպես կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո՝ երջանկահիշատակ Վազգեն Առաջինի հետ: Գարեգին Վեհափառն այնուհետև մեկնեց հերոսական և անպարտելի Արցախ, ապա հաջորդեցին Հայաստանյան ներքին թեմերին տրված այցելությունները: Դրանց ընթացքում Վեհափառը ոչ միայն հայաստանաբնակ ժողովրդին մեկ անգամ ևս հաղորդակից դարձրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրական ավանդներին, այլև երկրաշարժի ու պատերազմի հարվածները կրած շրջանների բնակիչներին գոտեպնդեց ոգեշունչ իր խոսքով՝ բերելով տարագիր հայության օրինակը, որը 20-ական թթ. ծովափնյա ինքնաշեն հյուղակներում ապաստանելուց հետո, իր մեջ կամք ու կորով գտավ կառուցելու հայկական թաղամասեր իրենց եկեղեցիներով, դպրոցներով և մշակութային-ազգային ակումբներով: Վեհափառը շարունակ հորդորում էր անընկճելի նույն կամքով գործի լծվել՝ օր առաջ վերականգնելու պատերազմից և երկրաշարժից ավերված տները:*

*Սփյուռքի թեմերում էլ Գարեգին Ա-ն արդեն շեշտում էր կարևորությունը հայրենի ավանդներին կապված մնալու և նորանկախ Հայաստանի զորացմանը սատար կանգնելու՝ վեր մնալով նեղ հայացքներից և մոտեցումներից՝ առաջնորդվելով ընդհանրական շահերով ու արտահայտելով միասնական կեցվածք:*

*Հովվապետական այս ուղևորություններին զուգահեռ Վեհափառը ունեցավ նաև միջեկեղեցական և միջազգային կարևոր հանդիպումներ, որոնցում շեշտվեց միջեկեղեցական կապերի հետագա ընդլայնման և քրիստոնեական սիրո ոգով գործակցելու կարևորությունը: Տարբեր երկրների և միջազգային հեղինակավոր մի շարք կազմակերպությունների ղեկավարների հետ տեսակցություններում Գարեգին Ա-ն ներկայացրեց հայության կյանքում և միջազգային ասպարեզում մեր Եկեղեցու վերապահված դերն ու կարևորությունը, ինչպես նաև անդրադարձավ Հայաստանի Հանրապետության համար կենսական կարևորություն ունեցող տարբեր խնդիրների՝ իր երախտագիտությունը հայտնելով Հայաստանին ցուցաբերվող օգնության համար:*

*Այս հանդիպումները մեկ անգամ ևս հավաստեցին այն բարձր հեղինակությունը, որ միջեկեղեցական ու միջազգային ասպարեզներում ունի Ս. Էջմիածինը և անձամբ Գարեգին Վեհափառը:*

*Ժողովրդի ընդհանուր քրիստոնեական դաստիարակությամբ և նոր սերնդի կրոնական կանոնավոր կրթությամբ մտահոգ Վեհափառը առանձնակի ուշադրություն դարձրեց քրիստոնեական քարոզչության և կիրակնօրյա դպրոցների*

ընդլայնմանը: Նույն այս նպատակով և Հայ Եկեղեցու կենդանի ավանդությունը ու անընդհատ հաջորդականությունը շարունակելու համար բազմիցս շեշտելով հոգևորական նոր սերնդի պատրաստության կարևորությունը, իր անձնական ամենօրյա ուշադրության կենտրոնում պահեց Հոգևոր ճեմարանը և այլ հոգևոր թեմական դպրանոցներ ու կրոնի ուսուցիչների պատրաստության դասընթացներ:

Միջազգային ճանաչում ունեցող և տարբեր գիտական ու հոգևոր ծանրակշիռ ուսումնասիրությունների հեղինակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին եթե փորձենք եկեղեցական մարզից դուրս գտնվող մեկ այլ բնորոշում տալ, ապա վստահաբար պետք է անվանենք Ուսուցիչ: Վեհափառը ուսուցիչ էր, երբ գահակալն էր Կիլիկյան Աթոռի: Վեհափառն այսօր էլ ուսուցիչ է: Ձեռնյած բազմազբաղ և ծանրաբեռն առօրյային, նա ոչ միայն դասավանդում է Հոգևոր ճեմարանում, այլև պարբերաբար հանդիպում կիրակնօրյա և հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետ՝ բուն դասավանդմանը զուգընթաց ներկայացնելով և իր ըմբռնումները ուսուցչի կոչման ու առաքելության մասին:

Հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգությունը մեր ազգային կյանքում ներառելու և աշխարհին ներկայացնելու համար Գարեգին Վեհափառը մի նոր լիցք հաղորդեց նաև Մայր Աթոռի տպարանի գործունեությանը: Ընդամենը մեկ տարվա ընթացքում լույս տեսան մի քանի տասնյակ գրքեր, որոնք կամ գիտական աշխարհին ուղղված ծանրակշիռ մենագրություններ էին, կամ էլ կրոնա-եկեղեցական ամենատարբեր բնագավառներին վերաբերող թեմաները ու հասկացությունները դյուրընկալելի կերպով ժողովրդին ներկայացնող հանրամատչելի գործեր, հոգևոր մտածումներ ու խոհեր:

Վեհափառ Հայրապետը տարբեր առիթներով բազմիցս ասել է, որ 1700-ամյակի նշումը հպարտության, ինքնափառավորման փոխարեն պետք է դառնա 1700-ամյա մեր քրիստոնեական ժառանգությունը լուսարձակի ներքո դնելու մի սքանչելի պատեհություն, որ այդ ժառանգության հոգևոր արժեքների վերակենդանացումը լինելու է մի նոր ոռոգում, նոր ջրտուք այսօրվա և վաղվա կյանքում, իսկ հետադարձ նայվածքը անցյալին պետք է վերածվի առաջահայաց մղումի, զարգացման, զորացման՝ վերանորոգումի շարժումի փոխակերպելով տնտեսկատարությունների շրջագծում գտնվող մեր բոլոր անելիքները: Գարեգին Ա-ն քանիցս նաև շեշտել է, որ եթե մեր Եկեղեցին առաքելական է, ապա Էջմիածինն էլ առաքելություն է, քրիստոնեական ոգին մեր ժողովրդի հոգում վառ պահող մի առաքելություն: Այդ առաքելության նվիրյալ առաջնորդն է այսօր Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հայոց միջնադարի խորագիտությամբ և արդի աշխարհի իրողությունների ու ընդհանուր եկեղեցական կյանքի և միջազգային հարաբերությունների իմացությամբ և իր գիտելիքները ու փորձառությունը մեր Եկեղեցուն և հայ ժողովրդին ծառայեցնելու վճռականությամբ:

Կաթողիկոսական ընտրություններից անմիջապես հետո Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը շնորհավորական իր

*խոսքում ասաց. «Վեհափառ Տեր, ես չեմ կասկածում, որ Դուք Ձեր ողջ կարողությունն ու եռանդը, Ձեր ողջ հոգին կնվիրեք Հայոց Եկեղեցու բարգավաճման և հայ ժողովրդի լուսավոր ապագայի կերտման գործին: Եվ ես, կարծում եմ, իրավունք ունեմ Ձեր անունից հավաստելու, որ Դուք որպես հայ ժողովրդի հոգևոր հովիվ, ես որպես Հայաստանի նախագահ, ձեռք-ձեռքի տված պիտի մեր գլուխը մատաղ անենք այս ժողովրդին»:*

*Մեր Եկեղեցին տարբերակում է երկու նահատակություն՝ արյան և անարյուն, վերջինով նկատի ունենալով ամենօրյա տքնաջան աճողի աշխատանքն ու նվիրումը: Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալությունից անցել է մեկ տարի և ծրագրված, հղացած ու արդեն իրականացած և իրականացող գործերը վկայում են, որ Վեհափառը ընթանում է Հայաստանի Հանրապետության նախագահի քնորոշած մատաղի՝ անարյուն նահատակության ճանապարհով ի փառս Հայաստանյայց Ս. Եկեղեցու պայծառության և մշտանորոգության ու մեր ժողովրդի և հայոց պետականության հարատևության:*

*Ամենաբարձրյալն Աստված Ամենայն Հայոց Կաթողիկոսության գահի վրա երկար կյանք թող պարգևի Վեհափառ Հայրապետին և արդյունաշատ գործունեություն՝ շնորհելով «ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»:*

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

# ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿՐԿՆԱԶԱՏԿԻՆ, Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ Ա ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

(14 ԱՊՐԻԼԻ 1996)

"Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն":

"Խնդրեցէք ի Քրիստոսէ զի շնորհեսցէ զսա մեզ ընդ երկայն աւուրս":

"Խնդրեցեք Քրիստոսից, որպեսզի Նրան մեզ շնորհի երկար տարիներ":

Սիրելի հավատացյալներ, մենք տակավին գտնվում ենք Քրիստոսի հրաշափառ հարության շնորհների շրջանում: Անցյալ Կիրակի տոնեցինք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնը: Նա մեզ համար խաչվեց, թաղվեց, սակայն իր թաղումից երեք օր հետո, ինչպես մարգարեներն էին գուշակել, մեռելներից հարություն առավ:

Քրիստոսի հարությանը հաջորդող Կիրակին մեր Հայրապետները կոչել են Կրկնազատիկ, կամ Նոր Կիրակի:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մեռելներից հարություն առավ և Իր հարությամբ նորոգեց մարդկային և նորաստեղծ եկեղեցու կյանքը: Քրիստոսի հարությունը նոր եկեղեցու հիմնադրությունն է, որովհետև աշխարհում ապրող հուսահատված մարդկությունը նրա հարությամբ, հավիտենական կյանքի ու հարության հույսով նորոգվեց:

Կա՞ր արդյոք ավելի մեծ պարգև Աստծու կողմից մարդկությանը շնորհված, քան Աստվածորդու միջոցով մեզ տրված Քրիստոսի հարությունը: Այն հաղթանակն էր մահվան դեմ: Հարության այս օրերին հավիտենական կյանքի հույսի նրագն է, որ մեր էության մեջ վերաղկայծում է և լուսավորում ամբողջ մեր ներկան ու ապագան: Նոր Կիրակի այս օրը մեզ համար նաև ուրախության ու ցնծության օր է, որովհետև Աստծո կամքով անցյալ տարի այս օրերին Հայաստանյայց Եկեղեցին ունեցավ իր նորընտիր Հայրապետը, Լուսավորչի Աթոռի գահակալը՝ Նորին Սրբություն Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Հայոց Հայրապետի գահակալությունը մեզ համար եղավ նոր կյանքի սկիզբ և, հավանաբար, նախախնամության կամքով այս տարի Նոր Կիրակիի օրը հիշատակում ենք նրա գահակալության առաջին տարեդարձը: Մենք մեծ սիրով և վերանորոգ հույսերով մեր ժողովրդի և Եկեղեցու հոգևոր կյանքի առաջնորդությունը հանձնել ենք մեր Հայրապետին: Նորոգ մեր կյանքի հետ նաև նորոգ Հայրապետ ունենալը մեզ համար և՛ կարևոր է, և՛ շատ թանկ:

Մեկ տարի է անցել Հայոց Հայրապետի գահակալության օրվանից: Նա որպես հոգատար հովվապետ առաջին հերթին այցելեց ներքին բոլոր թեմերը, եղավ Արցախում, Վրաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Միացյալ Նահանգներում:

Հեշտ չէ մեկ տարվա ընթացքում այսքան շատ ճամփորդելը, միաժամանակ, որպես Հայրապետ, պատասխանատու անձ շունչ սպառել իր ժողովրդի համար քարոզություններով և պատգամներով: Ինչպես նաև լինել ամբողջ հայության խոսնակը և ներկայացուցիչը ոչ միայն հայության առջև, այլ նամանավանդ միջազգային հանրության առջև: Ուր որ էլ գնաց Վեհափառը, հայ ժողովրդի վարկն ու պատիվը բարձր պահեց: Նրան հանդիպած բոլոր մարդիկ այն կարծիքը հայտնեցին, թե որքան բախտավոր է Հայաստանյայց Եկեղեցին, որ իր գահին ունի այսպիսի իմաստուն, գործունյա, հեռատես, քաղաքագետ մի Կաթողիկոս:

Վեհափառ Հայրապետը մեր մայրավանքում նոր շունչ բերեց, վերանորոգեց միաբանական կյանքը, իր միաբաններին ծառայության, խոնարհության, սիրո, զոհողության և նվիրումի կոչեց:

Նա նոր շունչ ու ոգի տվեց հոգևոր դպրոցներին, շատ կարևորեց հոգևոր դաստիարակությանը կոչված ուսուցիչների վերապատրաստումը, որպեսզի նոր սերունդը կարողանա նրանց միջոցով ստանալ այն, ինչ կորցրել էր 70 տարիների ընթացքում:

Սիրելի հավատացյալներ, Վեհափառ Հայրապետի գործունեությունը թերևս կարելի է բազմաթիվ դասակարգումների բաժանել, սակայն ես այսօր դրանցից մի քանիսը միայն կնշեմ:

Վեհափառ Հայրապետը առաջին հերթին գրի ու գրականության մարդ է: Նա ոչ միայն ստեղծագործում է, այլև քաջալերում բոլոր ստեղծագործողներին: Դրա արդյունքը խիստ շոշափելի է: Այս մեկ տարվա ընթացքում լույս են տեսել կրոնական բովանդակությամբ ավելի քան 60 տարբեր գրքեր ու գրքույկներ Մայր Աթոռի տպարանից: Դրանց նպաստը անժխտելի է նոր սերնդի դաստիարակման գործում:

Վեհափառը արվեստի և մշակույթի մարդ է: Նրա սիրտը բաբախում է հայոց ոգու զարկերով, նա ոգևորվում է հայ մշակույթի արժեքներով և ինքը քաջալերում է դրանց ստեղծումն ու արարումը:

Վեհափառ Հայրապետը նաև դաստիարակ է և ուսուցիչ: Նրա մոտ հաճախ կարելի է տեսնել Հոգևոր Ճեմարանի մեծ ու փոքր սաներին, այլ կրթական հաստատությունների ուսանողներին, որոնք սիրով ունկնդրում են Վեհափառի դասերը, հայրական խրատներն ու հորդորները՝ կյանքում դրանք անպայման իրականացնելու ակնկալիքով: Ինքը՝ Վեհափառ Հայրապետը ևս այցելում է բազում կրթական հաստատություններ: Նա սիրում է բաժանել իր խոհերն ու մտածումները, իր գիտելիքները նրանց հետ, որպեսզի նոր սերունդը աճի ու մեծանա որպես աստվածավախ, եկեղեցասեր սերունդ, որպեսզի նա սիրի իր հողը և նվիրվի իր հայրենիքին ու ժողովրդին, իր մշակույթին ու Եկեղեցուն: Վեհափառը նոր սերնդի ուսանողներին համարում է ապագայի սերմնացաններ:

Վեհափառ Հայրապետը նաև էկումենիստ է, համաշխարհային քրիստոնեական եկեղեցիների միութենական աշխատանքների ջատագով: Նա և՛ Աստվածաշնչային Ընկերության ասպարեզում, և՛ հատկապես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում ու Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Միության մեջ երկա՜ր-երկա՜ր տարիներ շատ կարևոր ու երախտաշատ ծառայություն է մատուցել ի պատիվ Հայ Եկեղեցու, ազգի ու մշակույթի: Այս ամենով, այնուամենայնիվ, հնարավոր չէ Վեհափառի գործունեությունը ամբողջական

կերպով բնութագրել և ներկայացնել: Վեհափառը ճշմարիտ հովվապետ է, հովիվ է՝ մտածող և մտահոգվող իր հոտի, իր ժողովրդի հոգևոր կյանքով և նրա հոգևոր սննդով, "Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց":

Իր 45 տարիների երկար հոգևոր կյանքը նա առավելապես ծառայեցրել է հովվական գործին՝ մարդկանց հոգիները փրկելու, նրանց դաստիարակության և նրանց հոգիների սերմնացանը լինելու աստվածային սրբազան գործին: Նա իբրև իսկական հոգևորական և հովվապետ միշտ ձգտել է մարդկանց վեր պահել առօրյա հոգսերից ու մտահոգություններից, մարդկանց հոգիներն ու սիրտը բարձրացնել դեպի Աստված: Եվ դա վստահաբար հաջողվել է նրան:

Սիրելի հավատացյալներ, այսօր Հայաստանյայց եկեղեցու համար շատ էական է և անհրաժեշտ ունենալ Գարեգին Առաջին Կաթողիկոսի նման մի հովվապետ, որ հովվի Սուրբ Գրիգոր Լուսավորչի հոտը և առաջնորդ լինի այդ հոտի քրիստոնեական ոգով դաստիարակության գործին և ճակատագրի բերմամբ նրա շատ դառն ստալինյան շրջանի դառնությունները ամոքի և վերանորոգ հաստատի յոթանասուն տարիների ընթացքում խախտված հավատը մեր ժողովրդի:

Այսօր Նա իր ժողովրդի հոգուն ու մտքին ամուր հենարան է դարձել, այն հոգուն, որ երկար տարիներ շարունակ փորձել են մարդիկ դատարկել, և այն մտքին, որ ստիպել են լռել: Այսօր այս ամենը մեզ համար հացից առավել կարևոր են:

Ինքը՝ Վեհափառը ևս հավատավորն է այն ճշմարտության, որ հոգին առաջնային է մարմնից: Մարդու համար շատ ավելի անհրաժեշտ է Աստծու հետ հաղորդակցվելը, Աստծու շնորհով լցվելը, քան իր առօրյա սովորական հոգսերն ու մտահոգությունները հոգալը:

Սիրելի հավատացյալներ, գահակալության այս տարեդարձի ուրախ օրը շնորհավորենք Ամենայն Հայոց Գարեգին Վեհափառ Հայրապետին՝ մաղթելով նրան աստվածային անսպառ ուժ ու եռանդ, Ահարոնի աղոթքի զորությունը, Մովսեսի՝ տեսիլքը իր ժողովուրդը փրկելու կամքը, Դավթի աղոթքի զորությունն ու ծառայության գիտակցության ուժը, ինչպես նաև Սողոմոն Իմաստունի երկնային իմաստությունը՝ հովվելու և առաջնորդելու համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նավը դեպի խաղաղ նավահանգիստներ:

Աղոթենք, որ հարուցյալ Փրկիչը Իր հրաշալի հարությամբ Հայաստանյայց Եկեղեցուն և նրա հովվապետին պարգևի նորոգ կյանք՝ բազում տեսիլներով:

Փառք Բարձրյալն Աստծուն: Երկար կյանք Հայոց իմաստուն Հայրապետին,

Ամեն:

## ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱՆ

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

«Զբանն զոր ես խօսեցայ
ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք»:
/ՀՈՎՀ. Զ 64/

Ապրիլի 10-ը առավել հիշարժան և ոգևորիչ էր Մայր Աթոռի միաբանության և սարկավագների համար, քանզի օրվա տոնականությունը, շաղախված հերթական իմաստալից խրատ-խորհրդի մոտալուտ ակնկալությանը, ամենքին դարձրել էր առավել անհամբեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը նրանց ընդունեց հայրական սիրով ու ջերմ ժպիտով: Միաբանության անունից Նորին Սրբությանը գահակալության առիթով շնորհավորանքի խոսք ասաց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Արիստակեսյանը: Շեշտելով օրվա կարևորությունը և Նորին Սուրբ Օծությանը մաղթելով արևշատություն՝ սրբազան հայրն ավելացրեց, որ Ս. Էջմիածնի միաբանության յուրաքանչյուր անդամ իր հիշողության ծալքերում խորին երկյուղածությամբ է պահպանում մեկ տարի առաջ նույն օրերին տեսածն ու ապրածը, որն այսօր պատմություն է դարձել: Պատմություն, որը, սակայն, բոլոր ժամանակներում էլ ցանկալի ու դաստիարակիչ ավանդներ, վեհ գաղափարներ և անմեկնելի խորհուրդներ է պարագրում:

Հավարտ սրբազան հոր երախտիքի խոսքի, Վեհափառին միաբանության անունից հանձնվեց գեղեցիկ ծաղկեփունջ:

Ապա խոսեց Ամենայն Հայոց Հայրապետը, ի մասնավորի հիշելով մեր նախնյաց սրբասուրբ և խորախորհուրդ խրատները, որոնց բարեխիղճ հետևողը միշտապես կքայլի դեպի Աստվածային սերն ու հավիտենական կյանքը տանող ուղով: Որպես բարի ու քաջ հովիվ, ցանկություն հայտնեց իր հոտի յուրաքանչյուր անդամին միշտապես տեսնել նույն տոնական տրամադրությամբ, որով իրեն են ներկայանում: Նաև հիշեցրեց, որ իրեն միայն այն ժամանակ երջանիկ ու նվիրված հովվապետ կհամարի, երբ ներկաներից յուրաքանչյուրն իր կյանքի միշտավառ կանթեղը դարձնի Աստծու չունչը ամփոփող Մատյանը, Հարանց վարքի սրբալույս էջերը, ինչպես նաև նախնյաց իմաստալից ու ոգեշունչ պատմությունները:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց գեղեցիկ նախաձեռնության համար:

Հանդիպումն ավարտվեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի և «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ:

## ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Մարդաշատ էր Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճը: Ներկաների թվում էին Մայրավանքիս միաբաններ, արժանապատիվ տեր հայրեր, Հոգևոր ճեմարանի սաներ, հյուրեր: Համերգը, որ նվիրված էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի գահակալության անդրանիկ տարեդարձին, նախագահում էր Նորին Սրբությունը:

Էջմիածնի հոգևոր երգի «Թարգմանչաց» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Միհրան Ղազելյան) իր ելույթն սկսեց «Տերունական աղոթք»-ի երգեցողությամբ:

Վեհափառ Հորը ներկաների անունից շնորհավորանքի ու սրտի խոսք ասաց հոգեշնորհ Տ. Կարապետ աբեղա Հարությունյանը:

Երգչախմբի կատարմամբ նախ հնչեցին Կոմիտասի «Գովեա Երուսաղէմ» , Ջարեհ արքեպիսկոպոս Ազնավորյանի «Որպես լոյս», Վարդան Սարգսյանի «Ցարեալից» շարականները, ապա Պերգոլեզիի «Ստաբաթ Մաթեր»-ը:

Մեներգերով հանդես եկան Կարինե Ավետիսյանը և Գոհար Էրոեջյան-Ղազելյանը: Նվագակցում էր Հրաչ Մկրտչյանը:

Այնուհետև հնչեցին հոգևոր թեմաներով այլ կատարումներ:

Հավարտ հոգեպարար հանդիսության, իր շնորհակալության խոսքն ու հայրական պատգամը ներկաներին հղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նա ի մասնավորի ասաց. «*Անչափ շնորհակալ եմ ինձ պարգևած այս անկրկնելի վայրկյանների համար: Բոլոր արվեստները ծագել են կրոնից: Աստվածաշունչն է դրանց հիմքը: Դուք այսօր ձեր կատարումներով մեկ անգամ ևս համոզեցիք մեզ:*

*Ավելի լավ նվեր ակնկալել չէի կարող: Ապրեք, որ ձեր շաբաթների տքնաջան աշխատանքով, փորձով կարողացաք այսօր ուրախացնել մեզ, հոգևոր երաժշտությունը մատուցել մեզ այնքան գեղեցիկ ձևով: Նախանձախնդիր եղեք ձեր գործին, որպեսզի շարունակ կարողանանք ունկնդրել ձեր կատարումները:*

*Ամենքն էլ երգում են: Սակայն ընտրության ճիշտ կատարումը հաջողության գրավականներից մեկն է: Դուք կարողացել էիք ճիշտ ընտրություն կատարել:*

*Ես այսօր, այստեղ գալուց առաջ, ինձ հետ այս փոքրիկ գիրքը՝ մատյանն եմ վերցրել: Մի՛ նայեք, որ փոքր է, մի ամբողջ իմաստություն է իր մեջ պարփակում: Մեր հինգերորդ դարի իմաստասերներից մեկի՝ Եզնիկ Կողբացու գիրքն է այն, որ «Եղծ աղանդոց» է կոչվում, սակայն պետք է լիներ թերևս*

*«Յաղագս Աստուծոյ»: Ահա այս փոքրիկ, բայց իմաստուն մատենիկը հորդորում է մեզ աշխատասիրության: Նա, ով՝ տքնաջանորեն աշխատում է գարնանը, երբեք ձմռանը չի մատնվի սովի ու ցրտահարության:*

*Ապրեք, շատ շնորհակալ եմ: Աստված ձեզ էլ ավելի շնորհք տա և զորացնի—»:*

Գարեգին Ա. Վեհափառի գահակալության տարեդարձին նվիրված հանդեսն ավարտվեց «Պահպանիչ»-ով, հավարտ որի, Նորին Սրբությունը հրաժեշտ տվեց ներկաներին «Հայրապետական մաղթերգի» երգեցողության ուղեկցությամբ:

## ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

*«Տո՛ւր ինձ, Տե՛ր, ուրախությունն անանձնական»*_
Մ. ՄԵԾԱՐԵՆՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության անդրանիկ տարեդարձին էր նվիրված ապրիլի 21-ին Էջմիածնի Կոմիտասի անվան մշակույթի տանն անցկացվող հանդիսությունը, որը կազմակերպել էր քաղաքային խորհուրդը՝ քաղաքապետ տիար Երվանդ Աղվանյանի նախագահությամբ:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռիս բարձրաստիճան հոգևորականներ, մարզային, քաղաքային և շրջանային խորհուրդների, Էջմիածին քաղաքի մտավորականության ներկայացուցիչներ, Հոգևոր ճեմարանի սաներ, հյուրեր, բարձր դասարանների աշակերտներ:

Քաղաքապետի բացման խոսքից հետո, հնչեցին Հայաստանի Հանրապետության օրհներգը և «Հայրապետական մաղթերգ»-ը:

Հավարտ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի Վեհափառ Հորը բնութագրող հակիրճ խոսքի, Նորին Սրբությանը շնորհավորանքի ջերմ ու սրտառուչ խոսքեր ասացին քաղաքի ղեկավարության և մտավորականության, ինչպես նաև աշակերտության ներկայացուցիչները: Նշելով Հայոց Հայրապետի մեկ տարվա ընթացքում կատարած ազգանվեր ու ազգապահպան գործունեությունը, շատ կարճ ժամանակում վաստակած հայ ժողովրդի սերն ու հարգանքը, ելույթ ունեցողները հանձնեցին նաև փոքրիկ հուշանվերներ:

Այնուհետև գեղարվեստական ընդարձակ հայտագրով հանդես եկան Էջմիածին քաղաքի երաժշտական և պարային համույթները՝ իրենց երգ ու պարով, գեղեցիկ ասմունքով ներկաներին պարգևելով հաճելի պահեր:

Ջերմ և հուզիչ էր առաջին դասարանցիների ողջույնի խոսքը, որն Ամենայն Հայոց Հայրապետն ունկնդրեց մեծ հուզմունքով և բաշխեց նրանց իր հայրական օրհնությունը:

Գեղարվեստական հայտագրից հետո, Նորին Սրբությունը, դիմելով լեփ-լեցուն դահլիճին, նախ շնորհակալություն հայտնեց իր նկատմամբ դրսևորած հարգալից ու ջերմ վերաբերմունքի համար, ապա ի մասնավորի

ավելացրեց, որ ցանկացած մարդ ի վերուստ կարգված տնտես է, կյանքի տնտեսը և պարտավոր է այնպես արժևորել այն, որպեսզի նմանվի զուլալ և մշտաբուխ աղբյուրի, որից ջուր խմողը կհագեցնի հոգու և մտքի մշտանորոգ ծարավը: Իսկ այդպես կարող է վարվել միմիայն այն հայորդին, ով սիրում է հայրենիքը: *«Կյանքը նման է ծլարձակող հատիկի,-* շեշտեց Հայոց Հայրապետը, - *ամեն ոք պարտավոր է իր օրինակով ճիշտ ծլարձակող հատիկ լինել կյանքում, քանզի կյանքը յուրահատուկ մի շնորհ է, որ տրված է ապրողներիս: Այդ կյանքով պիտի մենք հատուցենք մեր և նահատակների պարտքը: Այսօր այս մանուկները հայոց ոսկեղենիկ լեզվով կբարբառեն, իսկ որքան մանուկներ զոհ դարձան թուրքի յաթաղանին:*

*Մենք պարտավոր ենք ճիշտ դաստիարակել մեր մանուկներին: Հովհաննես Երզնկացի Պլուզ վարդապետն ասում է, թե երեխայի հոգին կակուղ մոմի նման է: Քանի փոքր է, կարող ես թեքել, ինչպես կամենաս, բայց երբ մեծացավ, բարքերը կկարծրացնեն, այլևս անկարող կլինես ուզածդ ձևը տալ: Ուրեմն, կյանքում ամենաէականը մարդն է: Միմիայն լավ մարդը կարող է իսկական երջանկության փոխարկել մեր Տիրոջ կողմից մեզ տրված շնորհը»* :

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության առաջին տարեդարձին նվիրված գրական-գեղարվեստական հանդիսությունն ավարտվեց «Տերունական աղոթք»-ի երգեցողությամբ:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵՑ ԲԱՐԵՐԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ



Կիրակի, ապրիլ 7-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը ընդունեց «Ագրո-պլյուս» ֆիրմայի փոխնախագահ, բարերար Արթուր Մարտիրոսյանին: Վեհարանի իր աշխատասենյակում, մեծաթիվ հյուրերի ներկայությամբ, Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց պրն. Արթուր Մարտիրոսյանի մատուցած ծառայությունները հայ ժողովրդին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ միևնույն ժամանակ հայտնելով, որ բարերարի նվիրած միջոցներով նորոգվել և այժմ գործում է Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցին:

Արտակ արք. Տիգրանյանն ընթերցեց Գարերգին Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակը, որով բարերար Արթուր Մարտիրոսյանին շնորհվում է Հայ Եկեղեցու բարձրագույն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշան: Հանձնելով այդ բարձրագույն պարգևը հայ ժողովրդի ազնիվ զավակին՝ Նորին Սրբությունն ասաց. «Այս շքանշանը մեր 1700-ամյա հավատքի կնիքն է: Ինչ որ Աստված քեզի տվավ՝ դուն գիտցար անկե բաժին հանել ազգիդ»:

Վեհափառն օրհնեց Մարտիրոսյան ընտանիքի անդամներին և մաղթեց, որ պրն. Մարտիրոսյանը շարունակի իր ազգանվեր և եկեղեցաշեն գործը: Վեհափառը հայտնեց, որ պրն. Արթուր Մարտիրոսյանը իր որդիական սերը հանդեպ Մայր Աթոռն ու իր Հայրապետը արտահայտել է առանձին նվիրատվությամբ, և նրա անունը պիտի փորագրվի Վեհարանի մուտքին՝ Մայր Աթոռի բարերարների ազնիվ անունների շարքում:

Շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությունից հետո պրն. Մարտիրոսյանն ասաց, որ իր համար մեծ պատիվ է Հայոց Հայրապետի բարձրագույն գնահատանքը և ինքը կաշխատի այսուհետ ևս օգտակար լինել ու ծառայել ազգին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ընդունելությանը ներկա էին ՀՀ փոխվարչապետ-պաշտպանության նախարար Վարդան Օսկանյանը, Կրոնի գործոց պետական խորհրդի նախագահ Լազար Սուքյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Սրբազան հայրեր, Մայր Աթոռի միաբաններ և մեծաթիվ հյուրեր:

# ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԴԻՊԼՈՄ



Ապրիլի 27-ին Երևանի Պետական Համալսարանի հանդիսությունների դահլիճում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց ԵՊՀ Պատվավոր Դոկտորի դիպլոմը:

Համալսարանի Ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, ողջունելով Գարեգին Ա Կաթողիկոսին, ասաց, որ Երևանի Պետական Համալսարանի 76-ամյա տարեգրության մեջ այս օրը պիտի արձանագրվի որպես պատմական մեծ իրադարձություն, քանի որ առաջին անգամն է, որ կրթօջախ է ոտք դնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Օրը էլ ավելի է նշանավորվում նրանով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը համընկնում է Նորին Սրբությանը՝ ԵՊՀ Պատվավոր Դոկտորի դիպլոմի հանձնման հանդիսավոր արարողության հետ:

Շարունակելով իր խոսքը, Պրն. Մարտիրոսյանը նշեց, որ այս այցելությամբ սկիզբն է դրվում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և Պետական Համալսարանի սերտ համագործակցության, որի արդյունքում ծնունդ կառնեն բազմաթիվ գեղեցիկ նախաձեռնություններ ու ծրագրեր:

Ավարտելով խոսքը, Ռադիկ Մարտիրոսյանը, բուռն ծափահարությունների ուղեկցությամբ, Նորին Սրբությանը հանձնեց ԵՊՀ Պատվավոր Դոկտորի դիպլոմը:

Վեհափառ Հայրապետին ողջույնի և շնորհավորանքի ջերմ խոսքեր ուղղեցին նաև ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Շահե արքեպս. Աճեմյանը, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, ԵՊՀ Բանասիրության ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը: Ուսանողության անունից Նորին Սրբությանը ողջունեց Աստվածաբանության առաջին կուրսի ուսանող Լևոն Պետրոսյանը:

Ելույթներից հետո շնորհակալանքի իր խոսքն ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը: «Առավել քան 60 տարիների իմ կյանքում այս պահը անփոխարինելի զգացումների, հուզական ու հոգեկան ապրումների բացառիկ պահ է: Իսկապես, բարձր պատիվ եմ համարում լինել Պատվավոր Դոկտորը այնպիսի մի կրթական հաստատության, ինչպիսին Երևանի Պետական Համալսարանն է: Այս առիթով իմ խորը երախտագիտությունն եմ ուզում արտահայտել Համալսարանի Գիտական Խորհրդին՝ այս բարձր կոչումին արժանանալու և այս գեղեցիկ հանդիպումը կազմակերպելու կապակցությամբ», ասաց Նորին Սրբությունը:

Շարունակելով խոսքը, Վեհափառ Հայրապետը իր խորհրդածությունները արտահայտեց մշակույթ–կրոն հարաբերության մասին՝ ընդգծելով, որ որևէ ժողովուրդ չի կարող գոյատևել առանց հավատի և հոգևոր արժեքների, չի կարող բարգավաճել, եթե չկարողանա տարբերակել իսկական արժեքները կեղծ արժեքներից: «Ազգը չի ապրի, եթե չլինի հոգու և մարմնի ներդաշնակություն՝ մտքի ղեկավարությամբ: Եվ Համալսարանն է եղել ու կա՛ մեր ազգի իսկական արժեքները պահպանող և դրանք հաջորդ սերունդներին փոխանցող կարևորագույն դարբնոցը»: Այս հանդիպումով Մայր Աթոռի և Համալսարանի միջև մի Ոսկե կամուրջ գցվեց, իր խոսքը եզրափակելով ասաց Նորին Սրբությունը, գործուն, բանուկ, կենդանի և ստեղծարար կամուրջ՝ Համալսարանի և Գևորգյան Ճեմարանի միջև, որով սկիզբ կդրվի մի արդյունավետ գործակցության՝ վասն մեր ազգի ու պետության, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարգավաճման:

Հանդիսությունն ավարտվեց ԵՊՀ ուսանողների ջանքերով կազմակերպված համերգով:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*Սույն թվականի ապրիլի 30-ին, առավոտյան ժամը 11-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ գերաշնորհ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, Աստղիկ եպիսկոպոս Արիստակեսյանի, հոգեշնորհ Վազգեն աբեղա Միրզախանյանի, Գրիգոր աբեղա Չիֆթչյանի, Բագրատ աբեղա Գալստյանի և բարեշնորհ Մուշեղ սարկավագ Ժոռոյանի, այցելեց Ազգային գրադարան, ուր հրավիրված էր* ***«Հայրապետք հայոց»*** *խորագիրը կրող ցուցահանդեսի բացմանը:*

*Ազգային գրադարանի մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին հավուր պատշաճի դիմավորեց Ազգային գրադարանի տնօրեն տիար Գևորգ Տեր-Վարդանյանը՝ իր աշխատակիցներով հանդերձ, և առաջնորդեց կենտրոնական սրահ, ուր պետք է տեղի ունենար ցուցահանդեսի հանդիսավոր բացման արարողությունը: Բազմաթիվ այցելուների և հյուրերի ներկայությամբ, Վեհափառ Հայրապետի գալստյան ուրախալի առիթով, ողջույնի խոսք ասաց Գևորգ Տեր-Վարդանյանը, ապա խոնարհաբար խոսքը տվեց Նորին Սուրբ Օծությանը:*

*Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունեց ներկաներին, դրվատանքի և գնահատանքի խոսքեր ասաց Ազգային գրադարանի նախկին տնօրեն հանգուցյալ Ռաֆայել Իշխանյանի մասին: Այնուհետև Հայոց Հայրապետը, հույժ կարևորելով մեր օրերում այդպիսի սքանչելի միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը, մասնավորաբար ասաց.* ***«Սա ցուցադրության համար չէ, սա սնունդի համար է: Հոգևոր, իմացական, մտավորական, գիտական սնուցման աղբյուր է Ազգային գրադարանը և իբրև այդպիսին ես եկել եմ այսօր ողջունելու բոլոր այն վաստակավորներին, ովքեր այս հաստատությունը շեն են պահում, շեն այն իմաստով, որ այն դարձնում են մեր ժողովրդի համար, ընթերցող հասարակության համար մատչելի և այս պատճառով ես նրանց կոչում եմ հոգու անդաստու պաշտոնակիցներ: Մենք էլ մեր հոգևոր ծառայության ընթացքում Աստուծո խոսքը, Քրիստոսի ճշմարտությունը, մեր հայրերի ավանդությունը մատուցում ենք մեր ժողովրդին և Ազգային գրադարանը ես ըմբռնում եմ, դավանում եմ որպես լծակից, աջակից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն»:***



*Վեհափառ Հայրապետը ամփոփ կերպով անդրադարձավ մեր շնորհալի Հայրապետների գրական հարուստ ժառանգությանը և բարձր գնահատեց այդ ժառանգության դաստիարակիչ դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Իր խոսքում հատկապես շեշտեց, որ մեր Հայրապետները, հակառակ իրենց բազմազբաղ գործունեության և ստեղծված ծանր պայմանների, երբեք գրիչը վար չեն դրել: Եվ առհասարակ ապրելու, ստեղծագործելու ձգտումը համարեց մեր ազգին բնորոշ գեղեցիկ հատկություններից մեկը: Այս առիթով Նորին Սուրբ Օծությունն ասաց.* ***«Ես այս հայրապետներից հարյուր երեսունմեկերորդն եմ Ամենայն Հայոց Կաթողիկոսության գահի վրա և այնպես է պատահել, որ մինչև կաթողիկոս լինելը՝ լինի դա Մեծի Տանն Կիլիկիո գահի վրա, լինի այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոսության գահի վրա, ես երեք սրբություններ, երեք նվիրականություններ ջանացել եմ պահել, կրել իմ ձեռքում՝ խաչը, գրիչը և հայրապետական գավազանը: Խաչը և գրիչը արդեն իսկ ծանր պարտականություններ են մեկ անձի համար: Եկեղեցու հովվության, ժողովրդի քրիստոնեական դաստիարակության, եկեղեցական կյանքի կազմակերպության է կոչված հոգևորականը և երբ նույն ատեն միանգամայն նա իր գրչով է ծառայում, դա կրկնակի ծառայություն է մեր ժողովրդի համար»:*** *Վեհափառ Հայրապետը վերջում մաղթեց, որ* ***«Հայրապետք Հայոց»*** *ցուցահանդեսը դաստիարակիչ դեր ունենա*

ներկաների կյանքում, և առհասարակ Ազգային գրադարանը երբեք չդառնա լոկ գրապահոց, այլ միշտ այսպես ծառայի իր սուրբ նպատակին, այն է՝ լուսավորի հայորդյաց մտքերն ու հոգիները: Ապա Ամենայն Հայոց Հայրապետը, իբրև պատմավարժան հուշ, «Պահպանիչ» աղոթքից հետո հանդիսավորությամբ կտրելով ժապավենը, ազդարարեց. **«Աստուծոյ օրհնութեամբ բացուած կը յայտարարեմ «Հայրապետք Հայոց» ցուցահանդէսը ի վայելումն ժողովրդեանս հայոց, որ յԵրևան և ի Հայաստան»:**

Ցուցահանդեսը նվիրված էր Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելու 1700-ամյակին: Ցուցափեղկերում ներկայացված էր Հայոց Կաթողիկոսների, այդ թվում և Մեծի Տանն Կիլիկիո և Հայոց Արևելից կողմանց Կաթողիկոսությունների գրական ժառանգությունն ու նրանց վերաբերյալ գիտական հետազոտությունները:

Վեհափառ Հայրապետը մեծ հետաքրքրությամբ դիտեց ցուցադրությունները, եղավ նաև Ազգային գրադարանի ընթերցասրահում և մի քանի այլ սրահներում, զրուցեց ընթերցասրահում ներկա ուսանողների և գրադարանի աշխատակիցների հետ, տվեց իր հայրական խրատներն ու խորհուրդները:

**ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ ԺՈՌՈԹՅԱՆ**

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

Գոլիցինյան ռեժիմից և Ստոլիպինյան ռեակցիայից հետո հայ ժողովուրդը վերջապես ազատ շունչ քաշեց: Կովկասում նոր փոխարքայի՝ կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովի հայտնվելով ցարիզմի քաղաքականությունը հայ ժողովրդի հանդեպ դրական փոփոխության ենթարկվեց: Վորոնցով-Դաշկովը բավականին հայտնի դեմք էր ռուսական կայսրության պալատական շրջաններում՝ պայծառափայլ կոմս, Նորին Կայսերական Մեծության գեներալ-համհարզ, հեծելազորի գեներալ, շուրջ քսան տարի կայսերական պալատի նախարար: Ռուս-թուրքական պատերազմի (1877-78 թթ.) ժամանակ Կովկասի ապագա փոխարքան բանակի հեծելազորի հրամանատարն էր: Այնպես որ նրա կարծիքը թուրքերի մասին ձեռք էր բերվել ոչ թե լսածներով, այլ, ինչպես ասում են, սեփական սրով: Կոմսի միակ «թերությունը» գուցե այն էր, որ նա արդեն տարեց մարդ էր: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին լրացավ նրա 77 տարին: Բայց նրա միտքը պայծառ էր, և նա հիանալի էր կատարում իր պարտականությունները:

Վորոնցով-Դաշկովի քաղաքականությունը հանգում էր Թուրքիայի հետ մեկընդմիշտ հաշիվները մաքրելու գործին՝ նրան զրկելով հզորությունից, ստիպելով հրաժարվել նեղուցներից արևմուտքում և Արևմտյան Հայաստանից՝ արևելքում՝ հօգուտ Ռուսաստանի:

Հաշվի առնելով հայկական քաղաքական և հասարակական կազմակերպությունների դիմումները, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն 1912 թ. դեկտեմբերի 24-ին կոնդակով դիմեց կայսր Նիկոլայ Երկրորդին՝ նրանից խնդրելով օգնություն և միջնորդություն Հայկական հարցի լուծման խնդրում: Նա գրում էր, որ Բալկանյան պատերազմի հետևանքով հարց է բարձրացել Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող քրիստոնյա ժողովուրդների վիճակի բարելավման համար: «Եկավ պահը, երբ բոլորը սրտի թրթիռով սպասում են Ռուսաստանի պատմական մեծ առաքելության իրագործմանը՝ Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ազատագրմանը դարավոր տառապանքներից»: Ապա Կաթողիկոսը նշում էր. «Հայկական հարցը 34 տարի առաջ բարձրացվեց եվրոպական դիվանագիտության առջև, բայց մինչև օրս մնում է չլուծված: Եվ եթե հայերը այս անգամ էլ անտեսվեն, ապա դա հավասարազոր կլինի մի ամբողջ ժողովրդի դատապարտելու վերջնական ոչնչացման»: Կաթողիկոսը ցարին խնդրում էր Թուրքահայաստանում շուտափույթ բարենորոգումներ անցկացնել ռուսաց կայսեր հովանավորությամբ: Կաթողիկոսը միաժամանակ, կազմակերպելով ազգային պատվիրակություն և նախագահ նշանակելով եվրոպական շրջանակներում հայտնի հայ հասարակական գործիչ Պողոս Նուբարին, լիազորեց նրան եվրոպական պետությունների ղեկավարների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը:

1912 թ. վերջերից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական ամսագիր «Արարատում» սկսեցին տպագրվել այս նպատակին ծառայող հոդվածներ, ինչպես, օրինակ, «Արևելյան հարցի գլխավոր էտապները», «Պատերազմ Բալկաններում», «Մահմեդական լուծը և նրա թոնության ներքո ծաղկող հայ վարդապետարանները»:

1913 թ. փետրվարի 5-ին Վիրա-իմերեթյան հայոց թեմի առաջնորդ դարձավ ժամանակի նշանավոր հոգևորականներից, դիվանագետ-գիտնական Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ Մագիստրոս): Լավատեղյակ լինելով ինչպես ռուսահայության, այնպես էլ թուրքահայության ազգային-եկեղեցական գործերին, Մեսրոպ Մագիստրոսը դեռևս 1913 թ. ապրիլի 27-ին գլխավորեց մի պատվիրակություն, որին ընդունեց Կովկասի փոխարքայի զինվորական գծով օգնական գեներալ Շատիլովը: Պատվիրակության կազմում էին հայ հասարակական գործիչներ Ալ. Խատիսյանը, Ս. Հարությունյանը, Քալանթարը և Մ. Պապաջանյանը: Պատվիրակությունը փոխարքայի օգնականին խնդրեց օգնություն ցուցաբերել Արևմտյան Հայաստանին՝ թշնամաբար տրամադրված մահմեդական բնակչությունից պաշտպանվելու համար: Տեղեկանալով այդ մասին, Վորոնցով-Դաշկովը այդ նույն լուրը հասցրեց կայսերական պալատ: Մայրաքաղաքից փոխարքային հայտնեցին հայերի կողմից բարձրացված այդ հարցի վաղաժամ լինելու մասին: Եվ փոխարքան ստիպված էր գրել Կաթողիկոս Գևորգ Ե-ին, որ վերջինս իր հեղինակությամբ հանգստացներ փոքր-ինչ բորբոքված հայ ազգաբնակչության մտքերը, և մեկ անգամ ևս հաստատեց ծայրահեղ զսպվածության ու խաղաղության անհրաժեշտությունը:

Պահանջելով հայերից «զսպվածություն», ցարական կառավարությունը Բալկանյան պատերազմից անմիջապես հետո իր հայացքն ուղղեց Թուրքիային: Այսպես, ռուսական կառավարությունը 1912 թ. վերջին Պետերբուրգից Կովկաս, ապա նաև Թուրքահայաստան գործուղեց «Բիրժեվիե վեդոմոստի» թերթի աշխատակից Օլգենինին: Բացառված չէր, որ վերջինիս ուղևորությունը կրում էր հետախուզական բնույթ՝ նպատակ ունենալով հավաստիակերպ տեղեկանալ թուրքական կառավարությունը: Օլգենինը հայտնի էր որպես զինթղթակից, որը ութ ամիս գտնվել էր Բալկանյան պատերազմի թատերաբեմերում: Թիֆլիս ժամանելուն պես նա հանդիպում ունեցավ հայ մտավորականության ներկայացուցիչների հետ, ելույթներ ունեցավ հօգուտ Հայկական հարցի լուծման: 1913 թ. հունվարի 23-ին ժամանելով Էջմիածին, Օլգենինը դիվանապետ Բագրատ վարդապետ Վարդազարյանի խնդրանքով ելույթ ունեցավ ճեմարանում՝ Բալկանյան պատերազմի թեմայով: Ապա նա մեկնեց Արևմտյան Հայաստան: Իր ճանապարհորդության նպատակների մասին ռուս լրագրողը հայտնել էր, որ մտադիր է «Հայաստանի և հայերի դիրքն ու վիճակը ուսումնասիրել տեղում»:

Օլգենինը հանդիպեց նաև արևմտահայության հասարակայնության ներկայացուցիչների, իսկ Բիթլիսում տեղի հոգևոր առաջնորդը նրա պատվին ճաշկերույթ տվեց: Իր հերթին ուղարկած թղթակցության մեջ Օլգենինը գրում էր հայ ժողովրդի՝ Ռուսաստանի նկատմամբ ունեցած հույսերի մասին: Թուրքական կառավարությունը զայրացած ռուս զինվորական թղթակցի աննախադեպ հրահրիչ գործողություններից, չուրջօրյա հսկողություն էր սահմանել նրա գործունեության վրա: Իսկ շուտով Օլգենինը, մեղադրվելով

հակաթուրքական քարոզչության մեջ, հրաման ստացավ թողնել Թուրքիայի սահմանները:

1913 թ. նոյեմբերին Փարիզում տեղի էր ունենում Միջազգային վեհաժողով՝ Հայկական հարցի առթիվ, ուր ելույթ ունեցավ Պողոս Նուբար փաշան: 1914թ. հունվարի 29-ին Վեհափառ Հայրապետը հեռագրեց Փարիզ՝ Պողոս Նուբար փաշային. «Իմ շնորհակալությունս Ձերդ Վսեմափայլության, Ձեր եռանդուն գործունեության համար՝ Տաճկաստանում բարենորոգումներ մտցնելու առթիվ: Բախտավոր եմ, որ մեր եղբայրների գործը հաջողությամբ է առաջ ընթանում. հայցում եմ Աստծո Օրհնությունը Ձեր և Ձեր ընտանեաց համար»: Նույն օրը Պողոս Նուբար փաշան պատասխանեց Վեհափառին. «Բախտավոր եմ մատուցանել Ձերդ Սրբության անկեղծալիր շնորհավորություններ Հայաստանի բարենորոգության համար բարեհաջող համաձայնության գալու առթիվ՝ Նորին Վեհափառության Ռուսաց կայսեր կառավարության եռանդուն գործունեության և Ձեր իմաստուն հեռատեսության, բարձր ցուցումների շնորհիվ: Մեր ասիական Թուրքիայի եղբայրները այսուհետև հնարավորություն կունենան ապրելու արդարադատ և ապահով վարչության ներքո»: Նույն թվականի փետրվարի 20-ին Վեհափառ Հայրապետը հաստատեց Պողոս Նուբար փաշայի լիազորությունները, որպես իր ներկայացուցիչ «զնոյն ազգօգուտ և զմարդասէր գործունէութիւն շարունակել վասն կատարեալ յաջողութեան և իրագործման բարեգործութեանց հայաբնակ գաւառաց Տաճկաստանի»:

Դեռևս 1912 թ. Սանկտ-Պետերբուրգում գտնվելու ժամանակ Գևորգ Ե Կաթողիկոսը խնդրեց ցարական կառավարությանը մեղմել դատապարտված Դաշնակցություն կուսակցության այն գործիչների նկատմամբ կայացված դատավճիռ, որոնք մեղադրվում էին դաշնակցության գործով: Այն ժամանակ այդ հարցի լուծումը համարեցին անժամանակ: 1914 թ. մարտի 16-ին, զգալով պահի նպաստավորությունը, այդ նույն հարցով Կաթողիկոսին դիմեցին հայ հասարակական մի շարք գործիչներ՝ Կովկասի հայկական բարեգործական ընկերության նախագահ Ս. Հարությունյանը, Հովհաննես Թումանյանը, Թիֆլիսի քաղաքապետ Ն. Խատիսյանը և ուրիշներ, պահանջելով հիշեցնել ռուսական կառավարությանը «անմեղ դատապարտված հայերի մասին»: Նույն թվականի ապրիլի 19-ին Վեհափառ Հայրապետը կոնդակով դիմեց ռուսական կայսրության արդարադատության նախարար Ի. Շչեգլովիտովին և Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին, որում հիշեցնում էր բանտում և աքսորավայրերում տառապող հայերի մասին՝ «Դաշնակցության» գործով դատապարտվածներին, որոնք մասնակցել էին հայ-թաթարական ընդհարումներին:

Վերը հիշված ռուս լրագրող-հետախույզի օրինակով իրենց հետախուզական գործունեությունն էին ծավալում հայ քաջորդիները: Այսպես, 1914 թ. հունիսի 10-ին Մուշից Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանին հաղորդում էր վեց երիտասարդների մասին, որոնք Պոլսից և Տրապիզոնից ժամանել էին իր մոտ: Նրանցից երեքը մեկնել էին Վան, իսկ երեքը դեռևս գտնվում էին Մուշում: «Արսեն Տեր-Հովհաննիսյանը, Միքայել Տեր-Գևորգյանը և Բագրատ Ասլանյանը այստեղ են և կզբաղվեն հավաքելով վիճակագրական տեղեկություններ»: Այն մասին, թե դրանք ինչ «տեղեկություններ» են, սրբազանը գրում էր նամակի վերջում,

որ ժամանածները նպատակ ունեն «զանազան շրջաններ պտոյտներ կատարելու իրենց ցանկացած տեղեկութիւնները հավաքելու համար: Ծանրակալ ենք, որ տեղիս գործող մարմինն ալ ամեն կերպ կօգնի անոնց: Տաճիկ պաշտոնյաները, եթե անոնց կատարածի մասին տեղեկություն առնեն, անշուշտ պիտի կասկածին, և եթե ոչ հայտնի գաղտնի անվստահություն պիտի հայտնեն և կ/պիտի տեղեկագրեն Ն. Գ. նախարարին ալ, բայց... զգուշավոր ընթացք մը բռնած են և հայտնի ընել չեն տա, թե՛ նոքա ինչով կզբաղվեն, մանավանդ որ, անոնք գլխարկ են փոխած թուրքական ձեսով: Գյուղեր կգնան իբր ուսուցիչ և որ դպրոցներ քննության կզբաղվեն:

Մշո կառավարիչ Սերվեթ բեյը՝ խորամանկ մի պաշտոնյա ... հանձն առավ Արսենին և ընկերուն դեպի Սասուն ուղևորության հանձնարարական նա տալ, անշուշտ գաղտնի ալ տարբեր հրահանգներ կուտա ստորադրյալ պաշտոնյաներին հսկելու անոնց շարժումների վրա և ամեն բան տեղեկացնելու իրեն»:

Գալով Ռուսաստան, ռուսական կայսերական շրջանակներում Պողոս Նուբար փաշան գերազանց տպավորություն էր թողել: Ինչպես Գևորգ Ե Կաթողիկոսին գրում էր Մ. Պապաջանյանը՝ «Ավելի հարմար և հեղինակավոր անձ չէր կարելի ընտրել՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնելու մեր և օտար պետությունների առջև»: Վերջապես հունվարի 12-ին, Ղրիմի Լիվադիա պալատում արդարադատության նախարար Ի. Ծչեգլովիտովը Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովի ներկայությամբ Նիկոլայ Երկրորդ ցարին զեկուցեց «դատապարտվածներին և հետաքննության ենթարկվածներին՝ «Դաշնակցություն» կուսակցության մեղադրանքով, ներում շնորհել, որպես անձանց, որոնք ներգրավվել են հայ-թաթարական բախումների մեջ սոսկ ինքնապաշտպանության նպատակով»: Ռուսաց կայսեր կողմից ներում ստացան 20 դատապարտվածներ: Հունիսի 15-ին Մ. Պապաջանյանը Ղրիմից հեռագրեց Կաթողիկոսին այդ ներման վերաբերյալ: Պատասխան հեռագրում Վեհափառ Հայրապետը խնդրեց Մ. Պապաջանյանին միջնորդել կայսեր առջև՝ ներում շնորհել նաև դատից խուսափած գրող Ավետիս Ահարոնյանին, բանաստեղծ Ավետիք Իսահակյանին, ճարտարապետ Հովհաննես Քաջազնունուն, ինչպես նաև փախուստի մեջ գտնվող Սիմոն Գրուզինյանին (Վրացյան), Դրաստամատ Կանայանին, աքսորի դատապարտված Համազասպ Սրվանձտյանին, Համազասպ Օհանջանյանին և հայ հոգևորականության ներկայացուցիչներ Կորյուն վարդապետ Սահակյանին և Գրիգոր քահանա Առաքելյանին:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1914 թ. հունիսի 25-ին, տեղի ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցու բարձր ղեկավարության ժողով, որի կազմում էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանը, Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, Մատթեոս եպիսկոպոս Մաթևոսյանը և Բաբկեն վարդապետ Աղավելյանը, որոնք մասնավորապես որոշեցին. «Ընդհանուր Եվրոպական պատերազմի դեպքում անխուսափելի է երևում ռուս-տաճկական պատերազմը: ... Կովկասում բոլորիս դիրքը պարզ է՝ ամեն կերպ օժանդակել ռուսական զորքի հաղթությանը:

Սահմանագլխի (Երևանի նահանգի), գուցե և այլ մասերի, թուրքերի մեջ նկատվում է զգալի շարժում և խլրտում ընդդեմ Ռուսաստանի և մասնավորապես հայերի, որպես քրիստոնյաների: Ի նկատի առնելով, որ հայ

երիտասարդները պատերազմ են գնում ընդհանուր պետական և ազգային շահերի տեսակետից, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել զգուշությամբ զինելու հայերին, գլխավորապես Երևանի, Գանձակի և Թիֆլիսի նահանգների, որտեղ մահմեդական տարրը շատ է և ռուս-տաճկական պատերազմի դեպքում անպայման... թուրքերը կստեղծեն ներքին խռովություն և կոտորած:

Այս ամենը կատարել զգուշությամբ և առանց արտաքին ցույցերի՝ պատրաստ լինելու և գործելու մի ընդհանուր ծրագրով, հայերի ծանր և ճգնաժամային կացության մասին մանրամասնորեն զեկուցել Կովկասի փոխարքային և խորհրդակցել հայերի զգուշավոր զինման և ընդհանուր գործի կանոնավոր պաշտպանության մասին:

Ամենայն կերպով պետք է աշխատել համոզելու փոխարքային, որ այս խնդրի իրագործումն անհետաձգելի է, ի նկատի ունենալով թուրքերի բռնած դիրքը դեռևս ռուս-տաճկական պատերազմը չեղած»:

1914 թ. ապրիլի 5-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն Հայրապետական թիվ 1180 կոնդակով հայությանը կոչ էր անում համախմբվել հանուն ազգային խնդիրների իրականացմանը և աջակցությանը ռուսաց պետության:

Օգոստոսի 25-ին Կովկասի փոխարքայի քաղաքական մասի օգնական Ն. Պետերսոնը գրություն հղեց Կաթողիկոսին, որում խնդրում էր նրան կարգադրել ժողովելու ռուսահայոց բոլոր եկեղեցիներում գանձահավաքություն՝ հօգուտ վիրավոր և հիվանդ զինվորների, և գոյացած գումարը ուղարկել Կարմիր խաչի ընկերությանը: Արդեն օգոստոսի 29-ին Կաթողիկոսը հայտնեց Ն. Պետերսոնին, որ «Կոնդակով առաջարկեցի Ս. Էջմիածնի սինոդին կարգադրել առաջնորդներին, բոլոր հայոց եկեղեցիներում կամավոր հանգանակություն ժողովել վիրավոր և հիվանդ զինվորների համար»:

Պատերազմի սկզբից Ռուսաստանի բոլոր հայոց թեմերում սկսեցին բացվել առաջնորդարաններին կից հիվանդանոցներ: Օգոստոսի 31-ին նման հիվանդանոց բացվեց Նոր Նախիջևանում, իսկ շուտով նաև Աստրախանում՝ հայոց հոգևոր ճեմարանի շենքում:

Նույնիսկ պատերազմը սկսվելուց հետո էլ կապը Կոստանդնուպոլսի պատրիարքարանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ չընդհատվեց: Օգոստոսի 20-ին Կ. Պոլսո Զավեն Պատրիարքը Գևորգ Ե Կաթողիկոսին ուղարկեց գավառական երեսփոխանական ժողովների առաջարկությունները և հավանությունները եպիսկոպոսի աստիճան շնորհել հետևյալ հոգևորականներին. «Տ. Խոսրով Ծ. վարդապետ Պեհրիկյանին - առաջնորդ Կեսարիո, Տ. Վաղինակ Ծ. վարդապետ Թորիկյանին - առաջնորդ Շապին-Գարահիսարի, Տ. Սահակ Ծ. վարդապետ Օդաբաշյանին - առաջնորդ Պրուսայի, Տ. Արտավազդ Ծ. վարդապետ Գալենջերյանին - առաջնորդ Եդեսիայի, Տ. Անանիա Ծ. վարդապետ Հազարապետյանին - առաջնորդ Բաբերդի, Տ. Շավարշ Ծ. վարդապետ Սահուկյանին - առաջնորդ Եվդոկիայի, Տ. Վարդան Ծ. վարդապետ Հակոբյանին - վանահայր Մշո Ս. Կարապետ վանքի»: Ցավոք, շուտով վերոթվարկյալ հոգևորականների մեծ մասը կզոհվի՝ այդպես էլ չդառնալով եպիսկոպոս, բացառությամբ Կեսարիայի առաջնորդի: Սեպտեմբերի 28-ին նա կստանա եպիսկոպոսի աստիճան:

1914 թ. սեպտեմբերի 2-ին Գևորգ Ե Կաթողիկոսին հղած անձնական ուղերձում Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը զգուշացնում

էր, որ «ինչպես մեր, այնպես էլ արտասահմանի հայության գործողությունները ներկա ժամանակաշրջանում պետք է խստագույնս համաձայնեցված լինեն իմ ցուցումների հետ, քանի որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև գոյություն ունեցող այժմյան լարված իրավիճակը նկատի ունենալով ընդհանուր քաղաքական տեսակետից մեր կարծիքը բաժանող զինակից պետությունների կողմից չափազանց կարևոր է դիտվում, որ Թուրքիայի հետ սկսվելիք պատերազմը հրահրվի իր կողմից և ոչ թե մեր կողմից դրդված ինչ-ինչ պատճառներով: Ահա թե ինչու ծայրահեղ անցանկալի է և նույնիսկ վտանգավոր թուրքահայերի շրջանում ապստամբություն բարձրացնել:

Միաժամանակ խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Վսեմությանը, ելնելով վերոհիշյալ մտադրությունից, օգտագործել Ձերդ բարձր հեղինակությունը ներգործելու ձեր հոտի վրա այն իմաստով, որպեսզի մեր հայերը, արտասահմանի իրենց հայրենակիցների հետ մեկտեղ պատրաստ լինեն ինչպես այժմ՝ Թուրքիայի անորոշ վիճակի, այնպես էլ հետագայում՝ մեր և նրա հետ հնարավոր պատերազմի պայմաններում կատարել այն հանձնարարականները, որոնք ես կներկայացնեմ իրենց՝ իրականացնելու համար»:

Սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ Էջմիածնի դիվանական խորհրդի արտակարգ նիստ, ուր որոշվեց օգնություն ցույց տալ վիրավոր զինվորներին և նրանց ընտանիքներին, ստեղծել հայկական սանիտարական խումբ, համայնքներում բացել տեղական հիվանդանոցներ: Նկատի ունենալով ներկա պատերազմը և հայ ժողովրդի համար ստեղծված բարենպաստ պայմանները, շտապ կազմել հայերի պահանջները՝ Թուրքահայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար: Պողոս Նուբար փաշային առաջարկել բարենորոգումների խնդրով աշխատակցել Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների հետ: Եվ այս ամենի հետ մեկտեղ խորհրդակցել Ռուսաստանի կառավարության հետ՝ Թուրքիայի հետ հնարավոր պատերազմում կազմակերպել Ռուսահայոց ինքնապաշտպանության գործը՝ «ի նկատի առնելով, որ տեղական մահմեդական տարրը զենքով պատրաստված է և մեծ համակրությամբ է վերաբերվում դեպի տաճիկ կառավարությունը»:

Սեպտեմբերի 8-ին Բայազետից՝ Հայոց Բագրեվանդյաց առաջնորդ Ներսես քահանա Քաջբերունին Վեհափառ Հայրապետին գրում էր. «Ձերդ Վեհափառությունը թող իրազեկ լինի, որ Ս. Հովհաննու հռչակավոր վանքը հեծելազորաց կենտրոն դարձավ: Մեր հայրերուն սուրբ մասունքները ոտից կոխած լինելեն ի զատ այդ հսկա հոյակապ մենաստանը բոլորովին ավերման ենթարկվեցավ: Ձայներս Պոլիս՝ պատրիարքարան չհասներ, պաշարված ենք, միակ հույսն ու փրկությունը Ձերդ Վեհափառության կսպասենք»: Այդպիսով սկսվեց Թուրքիայում հայ ժողովրդի ազգային հոգևոր արժեքների ոտնահարումը, իսկ քիչ անց սկսվեց նաև ժողովրդի ոչնչացումը:

Սեպտեմբերի 12-ին, առավոտյան, Հայ Եկեղեցին կորցրեց 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի նշանավոր հոգևորականներից մեկին: Վախճանվեց Սուքիաս Պարզյանը՝ փոթորկոտ և ըմբոստ հոգու տեր, իր հայրենիքի և Եկեղեցու մեծ հայրենասերը: Ցարական կառավարությունը 1891 և 1903 թ. նրան աքսորել էր Ռուսաստանի խորքերը: Սակայն նա վերադարձավ Ս. Էջմիածին և շարունակեց պաշտպանել Հայոց Եկեղեցու շահերը:

Սեպտեմբերի 14-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Թիֆլիսում բացվեց Կովկասի հայոց բարեգործական, լուսավորչական և մշակութային

ընկերությունների համագումարը: Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Վիրահայության առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Համագումարում նախագահում էր Ռուսաստանի պետական դումայի պատգամավոր Մ. Պապաջանյանը: Համագումարը որոշեց միավորել հայ բնակչության ջանքերը՝ օգնելու վիրավոր մարտիկներին և նրանց ընտանիքներին: Համագումարն անդրադարձավ նաև այլ խնդիրների:

Ռազմական գործողությունների սկսվելուց հետո, Կարսի վիճակի փոխանորդ Երեմիա վարդապետ Ստեփանյանը Վեհափառ Հայրապետին գրում էր. «Պահանջ է զգացվում, որ հոգևորականության կողմից լինեն մեկը կամ մի երկուսը, որպեսզի գնային պատերազմի դաշտը խրախուսելու, հոգեպես մխիթարելու ռուս բանակում եղած հայ զինվորներին և կամավորներին»: Նամակի վերջում նա ընդգծում է, որ ինքն անձամբ դեմ չէ ռազմաճակատ մեկնելուն, բայց սպասում է Վեհափառի բարձր հրամանին: Ռազմական գործողությունները ոգևորել էին ուրիշ հոգևորականների ևս, որոնք նույնպես ցանկանում էին ռազմաճակատ մեկնել: Այսպես, Արիստակես վարդապետը Գևորգ Ե Կաթողիկոսին գրում էր. «Ներկա պայմաններում, երբ մեր երիտասարդներից շատերը մի կողմ թողնելով իրենց առօրյա հոգսերը, տուն և ընտանիք, կամավոր են գրվում և մտնում ռազմիկ խմբերը՝ օժանդակ լինելու և խտացնելու զորքերի շարքը՝ Հայրենիքի վերահաս վտանգին գալիք անխուսափելի պատերազմի ժամանակ, ես ևս իբրև հայ մարդ և մանավանդ Եկեղեցվո պաշտոնյա, կամենում եմ մասնակցել այդ ընդհանուր սրբազան գործին, ուղևորվելով ռազմի բանակ ի կատար ածելու իմ սրբազնագործ պաշտոնը»:

Նոյեմբերի 4-ին Կաթողիկոսը Սանկտ-Պետերբուրգ՝ Նիկոլայ Երկրորդին հեռագիր ուղարկեց. «Ս. Էջմիածնի Մայր տաճարում ամբողջ միաբանության և աղոթողների մեծ բազմության ներկայությամբ մատուցեցինք սուրբ պատարագ և կատարեցինք մաղթանք՝ խնդրելով Բարձրյալից շնորհել Նորին Կայսերական Մեծության և ամբողջ օգոստափառ ընտանիքին լիակատար առողջություն և երկար օրեր առաքել փառավոր հաղթության ռուսաց փառապանծ զորքին՝ ի փառս Մեծն Ռուսաստանի»:

Նոյեմբերի 12-ին Էջմիածնում ստացվեց Նիկոլայ Երկրորդ կայսրի հեռագրի պատճեն՝ ուղղված կոմս Ի. Վորոնցով-Դաշկովին, որում ռուսաց թագավորը գրում էր. «Հանձնարարում եմ ձեզ, կոմս, հաղորդել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, նրան հավատացող հոգևորականությանը և նրա հոտին իմ սրտագին շնորհակալությունը աղոթքների և ինձ ուղղված հավատարիմ հպատակ անձնվիրության զգացմանց համար»:

Ռուս-թուրքական պատերազմի սկսվելուց հետո Կովկասի հայերի հայրենասիրական կազմակերպությունների ճնշման ներքո Կովկասի ցարական վարչակազմը ստիպված էր հույժ գաղտնի Թիֆլիսից զենք ուղարկել՝ անհրաժեշտության դեպքում վանքի պաշտպանությունը կազմակերպելու համար: Նոյեմբերի 8-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերության նախագահ Ս. Հարությունյանը Հ. Խունունցի հետ Ս. Էջմիածնի դիվանապետ Բագրատ եպիսկոպոսին նամակ ուղարկեց, որում գրում էր. «Ստացա ձեր նամակը՝ ուղարկած հրացանների մասին, երբ դրքա ստացվեն կհեռագրեմ "получен", որով կհասկանաք՝ հրացանները»:

Նոյեմբերի 7-ին գեներալ Չերնոզուբովը կաթողիկոսին հեռագիր ուղարկեց, որում նշում էր Անդրանիկի զորախմբի խիզախությունը: Նոյեմբերի 10-ին Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց գեներալին հեռագրի համար:

1717 թվակիր կոնդակով Վեհափառ Հայրապետը Կովկասի փոխարքային գրում էր. «Որպես հայ ժողովրդի հոգևոր Պետ իմ հովվապետական պարտքն եմ համարում արձագանքել իմ սովյալ զավակների ողբին և խնդրում եմ ձերդ պայծառափայլությանը թույլատրել կամավոր նվիրատվությանց ժողովարանքը՝ հօգուտ սովյալ հայ փախստականների»: Նոյեմբերի 12-ին թույլատրվեց կատարելու հանգանակություն, որն անցկացվեց Ռուսաստանի ողջ տարածքում: Բացի այդ Վեհափառ Հայրապետը կոնդակով դիմեց Կալկաթայի, Ռանգունի և Սինգապուրի հայությանը՝ ռազմաբեմում գտնվող հայերին օգնելու համար:

1914 թ. նոյեմբերի 8-ի թիվ 1720 իր կոնդակում Կաթողիկոսը, մտահոգվելով Արևմտյան Հայաստանում բնակվող իր հոտի բախտով, գրում էր. «Տաճկական իշխանությանց առանձնապես անկանոն զորքի և մոլեռանդաց ամբոխի կողմից հայերին սպասում են ցնցումներ, որոնք հազիվ կարող է մարդկային երևակայությունը պատկերացնել: Սակայն մեծ է և աներդրելի իմ հավատը, որ այս պատերազմը վերջնականապես կվճռի արևելյան հարցը և վերջ կդնի հայերի դարավոր տառապանքներին:

Հենց նույն հավատքով ապրում է ինձ հետ ամբողջ հայ ժողովուրդը: Հայերի ոգևորությունը մեծ է և ես, որպես հոգևոր պետ հայ ժողովրդի, զգում եմ հոտին բավականությունը և երջանիկ եմ, ամեն տեղ, ուր ապրում է իմ ընդարձակ հոտը, հայերը միախորհուրդ Տաճկաստանի դրության մասին ունեցած հայացքների մեջ լարված հետևում են Ռուսաստանի եղած պատերազմական գործողությանց և ջերմ ցանկանում են հաղթություն Ռուսաց քրիստոնասեր զինվորության, որի ամեն մի հաղթություն ուրախ բաբախել է տալիս նրանց սրտերը»: Կոնդակի վերջում Կաթողիկոսը գրում էր. «Ներկա ժամանակում, երբ ամբողջ Ռուսաստանի և հաղթական ռուս զորքի հետ հայերը պետք է լարեն չափազանց մեծ ճիգեր ընդհանուր թշնամիների դեմ ունեցած կովի մեջ, ես գտնում եմ միանգամայն համապատասխան ներկա պատմական րոպեին մեր սիրեցյալ թագավոր-կայսեր անունից տաճկահայերին ուղղած կոչի հրատարակումը՝ ներշնչել հայ ժողովրդին, որ այժմ Տաճկաստանի հայերի վերջնական ու անդառնալի վճռի ժամը հասել է և որ Տաճկահայաստանի միացյալ մի օրգանական ամբողջությամբ վեց վիլայեթների (Վանի, Էրզրումի, Բաղեշի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և Խարբերդի) հայ ժողովրդին Հայաստանի անբաժան մասի՝ Կիլիկիայի հետ պիտի շնորհի մեծ Ռուսաստանը ինքնավարություն, որով կամբողջանա Տաճկաստանի լծի տակ դարերով տանջվող քրիստոնյա ազգություններին ազատելու նորա պատմական միսիան»: Սա ավելին էր, քան կարող էր առաջարկել կամ երբևէ առաջարկել էր ռուսական կառավարությունը և ինքն անձամբ՝ Նիկոլայ Երկրորդը:

Նոյեմբերի 8-ին Մուշի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությանը հաղորդեց, որ օսմանյան կառավարությունն է «ամեն կերպ անկարգություն և չարիքների աղբյուրը» և «պատրվակ կփնտրե գավառիս հայերը աղետներու ենթարկել»: Նույն օրը Երևանում, թեմական դիվանական խորհուրդը իր նիստում որոշեց՝ Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին ուղարկել

ռազմաբեմ հայ ժողովրդին հոգեպես մխիթարելու, տաճկահայերին նպաստող մասնախմբեր կազմակերպելու Իգդիրում, Կարսում և Ալեքսանդրապոլում և իր հետ տանել որոշ քանակությամբ հագուստ, կտորեղեն և դրամ, որպեսզի նա այդ ամենը բաժանի Բայազետի և Բասենի չքավոր բնտանիքներին՝ հորդորելով չհեռանալ իրենց գյուղերից: Նոյեմբերի 11-ին Կաթողիկոսը դիմեց Կովկասի փոխարքային՝ պատմական կարևոր այդ պահին Կովկասյան գործող բանակ ուղարկել թեմական առաջնորդներին՝ Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսներին՝ հայ մարտիկներին ոգեշնչելու և օրհնելու համար: Նոյեմբերի 13-ին փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Ն. Պետերսոնը տեղեկացրեց, որ եպիսկոպոսներին թույլատրվել է այցելել ռազմաճակատ: Նոյեմբերի 15-ին թիվ 1750 իր կոնդակով Կաթողիկոսը մարտադաշտ ուղարկեց Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին և Վիրահայության առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին: Նրանց հետ ռազմաճակատ մեկնեցին Հովհ. Թումանյանը, Շիրվանզադեն, Հ. Խունունցը և Ս. Խաչատրյանը: Պատվիրակությունը Ալեքսանդրապոլից պետք է մեկներ Սարիղամիշ, Կարս, Ղարաքիլիսա, Դիադին, Բայազետ և Իգդիրով վերադառնար Էջմիածին:

Հենց այդ ժամանակ Խորեն եպիսկոպոսը հեռագրեց Էջմիածին, որ վերջապես Թիֆլիսից պետական զենքի պահեստից ստացվել է «Մենլիխեր» համակարգի 120 հրացան և 30 հազար փամփուշտ, «Բերդան» համակարգի 250 հրացան և 250 հազար փամփուշտ: Ս. Էջմիածինը նույնպես նախապատրաստվեց պաշտպանության, եթե վտանգ սպառնար:

Նոյեմբերի 17-ին, Թիֆլիսից Էջմիածին ժամանեցին Մեսրոպ եպիսկոպոսը և նրան ուղեկցող անձինք: Նույն օրը Թիֆլիսի պատվիրակությունը Երևանի պատվիրակության հետ մեկնեց Իգդիր, իսկ այնտեղից պիտի ուղևորվեր Արևմտյան Հայաստան: Իգդիր ժամանելուն պես պատվիրակությունները իրազեկվեցին Նիկոլայ Երկրորդ թագավորի շուտով Կովկաս ժամանելու մասին, և Մեսրոպ եպիսկոպոսը վերադարձավ Թիֆլիս:

Կաթողիկոս Գևորգ Ե-ն Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովի կողմից հրավիրվեց Թիֆլիս՝ Ռուսիո կայսեր հետ հանդիպելու համար: Նոյեմբերի 22-ին Թիֆլիսից Վաղարշապատ ուղարկվեց հատուկ վագոն՝ Կաթողիկոսի համար: Կաթողիկոսին ուղեկցում էին Մեսրոպ և Բագրատ եպիսկոպոսները և Արիստակես վարդապետը:

Նոյեմբերի 24-ին, առավոտյան ժամը 9-ին, Կաթողիկոսը ժամանեց Թիֆլիս: Կայարանում նրան դիմավորեցին Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ գեներալ Թամամշևը, ինչպես նաև Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանը, Հայկական բարեգործական ընկերության նախագահ Ս. Հարությունյանը:

Թիֆլիսի հայ բնակչության մեծ բազմության ներկայությամբ Ս. Հարությունյանը, ողջունելով Կաթողիկոսին, մասնավորապես ասաց. «... Կովկասը և նրա բազմալեզու, բազմակրոն ազգությունները հրճվանքի մեջ էին մեր սիրելի կայսրի գալու առթիվ: Դուք կլինեք թարգման այն անկեղծ սիրո ու անձնվիրության զգացմունքների, որով տոգորված է ամբողջ հայ ազգը դեպի կայսրը և նրա հաղթական զորքը:

Լայնատարած Մեծ Ռուսաստանում, թե Ռուսաստանի սահմաններից դուրս, այս պատմական մոմենտում, դուք թարգման կլինեք և հայ ազգի իսկական իղձերի և պատմական ցավերի»:

Վեհափառ Հայրապետն այս ելույթին պատասխանեց. «Ես հույս ունեմ, որ ապագան լավ կլինի: Մեր սիրելի թագավոր-կայսեր հովանավորությունը միշտ կա հայ ազգի վրա: Ասելով թե՛ սիրտ թագավորի՝ ի ձեռս Աստծո է: Ես հույս ունեմ, որ թագավոր-կայսրի Բարձրագույն հովանավորությամբ և դաշնակիցների աջակցությամբ կիրականանան բոլորիս հույսերը և տանջադ հայ ժողովուրդը հնարավորություն կստանա ապրել ազատ պայմաններում: Թող բարեգութ Աստված հաջողությամբ պսակե մեր բոլոր ջանքերը»:

Նոյեմբերի 25-ին, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետին այցելեցին Կովկասի փոխարքայի զինվորական մասի օգնական գեներալ Ս. Միշլաևսկին և քաղաքացիական մասի օգնական Ն. Պետերսոնը: Նոյեմբերի 26-ին Կովկասը ողջունում էր իր թագավորին: 25-ամյա ընդմիջումից հետո ռուսաց ցարը վերստին ոտք դրեց կովկասյան հողին: Հայերը, առաջնորդվելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, Նիկոլայ Երկրորդին ընդունեցին Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցում: Այստեղ Վեհափառ Հայրապետը Նորին Կայսերական Մեծությանը ուղղեց հետևյալ խոսքերը. «Ձերդ Կայսերական Մեծություն, Ամենաողորմած Կայսր, անսահման բախտավոր եմ և իմ հոտը, որ այս պատմական րոպեին հնարավորություն ունենք երես առ երես տեսնելու մեր սիրեցյալ Միապետին՝ շրջապատված իր հավատարիմ ժողովրդով, որ պատրաստ է Հայրենիքի փառքի ու պատվի համար զոհել կյանքը և ամեն կարողությունը:

Հայկազյան հավատարիմ հպատակ ժողովուրդը սրբությամբ հետևելով իր նախնիների պատգամներին այժմ էլ պատրաստ է անձնազոհությամբ կատարելու իր սրբազան պարտականությունը իր ցարի և հայրենիքի առաջ:

Մեծդ Թագավոր, հայ ժողովուրդը պատկառանքով ու խորագույն գիտակցությամբ կհիշե այս նշանավոր օրը, երբ Ձերդ Կայսերական Մեծությունը բախտավորեցրեց նրան իր ամենաողորմած ուշադրությամբ և բարեհաճեց այցելել մեր Մայր եկեղեցին՝ այս տաճարը, որի կամարների ներքո հանգչում են անցյալ ռուս-թուրքական պատերազմի պանծալի հերոսները:

Փորձության այս ծանր օրերին մեծ է ու անհողդողդ մեր հավատը, թե Մեծն Ռուսաստանն իր անձնուրաց զավակների սրբազան արյունով և իր բարոյական ուժի մեծությամբ հաղթող դուրս կգա և իր ինքնակալ Պետի կամքով կհաստատե իրավունք ու արդարություն:

Ամենակարող Աստծո սուրբ սեղանի առաջ ջերմ աղոթքներ ենք վերառաքում Ամենաբարձրյալին՝ շնորհելու լիակատար հաղթություն ռուսական քրիստոնյա զորքին»:

Նոյեմբերի 29-ին, ցերեկվա ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետին ընդունեց թագավոր-կայսրը: Ընդունելության ժամանակ քննարկվող այլ հարցերի հետ Կաթողիկոսը խնդրեց թագավորին թույլ տալ, որպեսզի թուրքական բանակում ծառայած և ռուսներին գերի հանձնված հայ զինվորներն ու բժիշկները կռվեն թուրքերի դեմ: Մինչ այդ, վերոհիշյալ գերիներին աքսորում էին Սիբիր: Թագավորը խոստացավ բավարարել Կաթողիկոսի խնդրանքը, ինչպես նաև հայտարարեց, որ «հայկական հարցը կլուծվի սպասումների համաձայն»: Ինչպես գրում էր հայ մամուլը՝ «կայսեր հետ ունեցած ունկնդրությունից Վեհափառն ստացել է չափազանց նպաստավոր տպավորություն»:

Թիֆլիսից մեկնելուց առաջ Կաթողիկոս Գևորգ Ե-ն հեռագիր հղեց կայսերական գնացքի հասցեով: «Այսօր Ս. Էջմիածին մեկնելուց առաջ

հրաժեշտ տվի իմ հոտին, որի հետ ջերմեռանդ աղոթք առաքելով առ Բարձրյալն պարգևելու Ձերդ Կայսերական մեծության թանկագին առողջություն և ռուսաց Քրիստոսասեր փառապանծ զորքին հաղթություն»:

Հայ զինվորներին և նրանց ընտանիքների օգտին հանգանակությունը շարունակվում էր ողջ ռուսական կայսրությունում: Միաժամանակ Հայ Եկեղեցու հովանու ներքո շարունակվում էին բացվել հիվանդանոցներ և լազարեթներ: Ռուսաստանի մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգում միջոցների հավաքման գործը ղեկավարում էր գեներալ-լեյտենանտ Սուլթանշահը: Դեկտեմբերին Ռոստովի և Նոր Նախիջևանի համայնքի միջոցներով և վեհափառ Հայրապետի օրհնությամբ ձևավորվեց և ռազմաճակատ ուղարկվեց Մեծն իշխան Բորիս Վլադիմիրովիչի անվան ռազմա-սանիտարական մի գնացք: Քիշնևում հիմնադրվեց կամավորների և փախստականների օգնության կոմիտե: Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսի գլխավորությամբ Երևանում բացվեց զինվորական լազարեթ:

Վերջապես 1914 թ. դեկտեմբերին որոշվել էր Էջմիածնից դուրս տարվող արժեքների պահպանման վայրը՝ Մոսկվայի հայոց եկեղեցին: Դեկտեմբերի 21-ին Մայր Աթոռի դիվանը Մոսկվա՝ հայոց եկեղեցիների խորհրդի նախագահ Կուսիկյանին հեռագիր ուղարկեց եկեղեցական ունեցվածքի տեղափոխության վերաբերյալ: Նրան հանձնարարում էր ընդունել ունեցվածքը և պահել անվտանգ տեղում: Բայց այդ իրերի փոխադրումը որոշվեց կատարել 1915 թ. սկզբին:

Պատերազմն ընթանում էր Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի տարածքներում: Պատերազմի մասնակից բոլոր ժողովուրդները հուսով էին, թե կհաղթեն: Մի մասը ցանկանում էր թոթափել ստրկական լուծը, մյուսները՝ գրավել նոր հողեր, ստանալ պարտված պետությունների գաղութները կամ ունեցվածքը: Սակայն բոլոր ժողովուրդներից, որոնք ուղղակի կամ անուղղակի մասնակցություն էին ունեցել պատերազմին, ամենածանր վիճակում հայտնվեց հայ ժողովուրդը: Այդ պատերազմը նրան բերեց միայն արցունք, տառապանք և ... ուրիշ ոչինչ:

**ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ**

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1917 թ. փետրվարին ռուսական երկրորդ հեղափոխությունը տապալեց ցարիզմը, և ռուսական բազմազգ կայսրությունը անցում կատարեց դեպի հասարակության զարգացման դեմոկրատական ուղին: Ժամանակավոր կառավարության առաջին հրովարտակը 1917 թ. մարտի 4-ի «Խղճի և ազգային սահմանափակումների վերացման մասին» որոշումն էր: Այն, որպես հեղափոխության առաջին նվաճում, վավերացրեց ճնշված ազգերի ազատագրումը՝ դրանով հույս ներշնչելով Ռուսաստանի ազգային շրջաններին, որ դեմոկրատական հասարակարգը լայն հնարավորություններ կընձեռի նաև հայ ժողովրդի ազգային գոյության և զարգացման համար: Ուստի և «ատելի ցարիզմի» անկումը հայ ժողովուրդը ևս ողջունեց:

Պետականությունից զուրկ հայ հասարակության ձայնը այս վճռական պահին առաջինը համարձակորեն հնչեցրեց Հայոց Եկեղեցին: Խրիմյանական ավանդները ժառանգվել էին հայ հոգևորականության նոր սերնդի գործիչների կողմից: Փոխվում էին հայոց հոգևոր առաջնորդները, պատմական իրադրությունը, իսկ հայոց հիմնահարցը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը և արևմտահայության ճակատագիրը, դեռևս չէին վճռված: Հայ ժողովրդի պատմության այս ժամանակահատվածին ևս բնորոշ է Հայ Առաքելական Եկեղեցու միավորիչ, ազգահավաք ձայնը, սթափ գործելակերպը:

Մարտի 14-ին հայտնի դարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի ողջույնի հեռագիրը՝ ուղղված ժամանակավոր կառավարության ղեկավար գործիչներին՝ Լվովին, Ռոձյանկոյին, որտեղ ժամանակավոր կառավարությունը դիտվում էր որպես փոքրաթիվ ժողովուրդների, այդ թվում և հայերի միակ պաշտպան և պատերազմը մինչև հաղթական վախճանը իրականացնող[1]: Մարտի 9-ին ստեղծված Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեին (ՕԶԱԿՈՄ) էին ողջունում Թիֆլիսի հայոց առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը և Շամախու հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ սրբազանը: Շնորհավորանքների հետ մեկտեղ նրանք խոստանում էին «հանգստության և կարգի պահպանում»[2], մի երևույթ, ինչը բնորոշ էր կովկասյան իշխանություններին հեղափոխության սկզբնական շրջանում:

Մարտի 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոր ուղերձ հղեց կենտրոնական իշխանությանը, որտեղ արդեն պահանջներ էին դրվում: Նա գրում էր. «Այժմյան անօրինակ պատերազմի ժամանակ, որ մղվում է հանուն մանր ազգությունների արդարության սկզբունքի և որի շնորհիվ տաճկական Հայաստանում գտնված հայությունը անօրինակ զոհեր է տվել, նոցա

---

[1] Տես ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 151, թ. 4:

[2] Տես ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 151, թ. 27:

ապագայի և հայկական վիլայեթների խնդիրը պետք է վերջապես յուր արդարացի, պատմական լուծումը գտնի, տալով նոցա կատարյալ ազատագրություն և ինքնուրույնություն: Եվ մեծահույս եմ ես, որ վերանորոգված Ռուսաստանը, քաջարի դաշնակիցների համաձայնությամբ, կստեղծե նախկին տաճկական վիլայեթների վրա ազատ Հայաստան»[3]:

Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում (1917 թ. մարտ-հոկտեմբեր) ամբողջ երկրում, այդ թվում և հայ իրականության մեջ, վերելք ապրեց հասարակական-քաղաքական կյանքը: Դա ազգային-քաղաքական կյանքի աննախադեպ շքերթ էր, որն արտահայտվում էր ժողովրդական ցույցերի, հանրահավաքների, համագումարների, ժողովների բազմազանությամբ: Այս շարքում իր բացառիկությամբ մեզ հետաքրքրում է Հայ եկեղեցական համագումարը:

Հայ Եկեղեցու պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ եկեղեցական համագումարը հրավիրվում է որպես արդյունք քաղաքական արմատական տեղաշարժերի, տվյալ դեպքում՝ հեղափոխության: Ավելին, հոգևորականության այդ գագաթաժողովը իր ներքին կյանքի խնդիրներին զուգահեռ բարձրացնում էր համահայկական հույժ կարևոր հիմնահարցեր, փնտրում էր դրանց լուծման ուղիները: Ժամանակավոր կառավարության «խղճի ազատության» մասին որոշումը նկատելի աշխուժություն առաջ բերեց հայ հոգևորականության շրջանում: «Վան-Տոսպի» արտահայտությամբ «դարերից ի վեր կաշկանդված Հայ Եկեղեցին, հնարավորություն ունեցավ ամենայն ազատությամբ հրապարակ հանել իր ցավերը, ցանկությունները»[4]:

Համագումարը կայացավ Էջմիածնում, հունիսի 12-23-ը[5]:

Հայ Առաքելական Եկեղեցին ու նրա համագումարը ողջունեցին Փետրվարյան հեղափոխությունը, որպես «բարեկեցության, առաջադիմության, բոլոր ազգերի ազատ զարգացման և մասնավորապես հայ ժողովրդի ազգային շահերին նպաստող քայլ»[6]: Էջմիածնի համագումարին ներկա էին 29 կուսակրոն և 38 ամուսնացյալ հոգևորականներ՝ ընդամենը 67 հոգի: Համագումարը իր աշխատանքները վարում էր հետևյալ բաժանմունքներում. 1. Եկեղեցու և եկեղեցական բարեկեցության, 2. տնտեսական, 3. դպրոցական-կալվածական, 4. վարչական, 5. ռուսահայ եկեղեցական կյանքի այժմեական խնդիրների:

Հունիսի 12-ին լսվեց եկեղեցական համագումարին խորհրդակցական ձայն տալու վերաբերյալ որոշումը: Այդ որոշումը բացատրվում էր այն բանով, որ համագումարի պատգամավորությունը կազմված էր զուտ հոգևորական դասից: Համաժողովը դատապարտեց այս որոշումը՝ պատճառաբանելով, թե «հայ ժողովրդի պատմության ընթացքում երբեք տեղի չի ունեցել նման բախում և որ Հայաստանյայց Եկեղեցու տերն ու տնօրենը ինքը հայ ազգը,

---

3 Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ց. 20, թղթ. 239, վավերագիր 12, 1917 թ., տես նաև՝ ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 151, թ. 14:

4 «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1917, 2 հուլիսի:

5 Տես ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 482, թ. 1:

6 Տես նույն տեղում:

ամբողջ հայ ժողովրդին է»[7]: Նման որոշումը, որը ընդունվեց 22 ձայնով, խոսում է նախ և առաջ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի առաջադիմական հայացքների մասին:

Եկեղեցական համագումարը անդրադարձավ Հայոց Ազգային խորհրդաժողովի հրավիրման խնդրին, Հայկական հարցին: Առաջինին համագումարը մասամբ նվիրեց իր 10-րդ նիստը[8] և իր դժգոհությունը հայտնեց խորհրդաժողովի ընտրությունների արդյունքներից, անկազմակերպ ընթացքից: Նշվում էր, որ Հայ Եկեղեցին պետք է անպայման մասնակցի համագումարին: Համագումարի բանաձևերում զայրույթով նշվում էր. «Նկատի ունենալով, որ մինչև այսօր ազգային-քաղաքական գործերում ազգի ներկայացուցիչը և տերը համարվել է Ամենայն Հայոց կաթողիկոսը, որն և միայն իրավատեր էր ռուսահայ ազգային ժողով գումարել, գտնում ենք, որ ինքնակոչ միջկուսակցական մարմինը ուզուրպացիայի է ենթարկել Վեհափառ Կաթողիկոսի իրավունքը, որի դեմ բողոքելով առաջարկում ենք, որպեսզի Կաթողիկոսը և եկեղեցական ներկա ժողովը գումարվելիք համագումարին ունենան այնքան թվով ներկայացուցիչներ, որքան կկամենան»[9]:

Հակասությունների տեղիք էր տալիս այն կարևոր հանգամանքը, որ մեկ անգամ ևս դրսևորվում էր Հայ Եկեղեցու և ազգային կուսակցությունների կարծիքների երկփեղկումը Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցում: Գաղտնիք չէ, որ Հայ Եկեղեցին և հոգևորականության ղեկավար ներկայացուցիչներից շատերը շուրջ մեկ դար հալածվելով ցարական վարչակարգի կողմից, կուլ տալով մեծապետականության ու հակահայկականության դրսևորումները, արևմտահայության ազատագրման հարցը իրավամբ կապում էին Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի նվաճումների հետ: Հայ Եկեղեցին վարում էր իրատես, կշռադատված քաղաքականություն: Այս նույն երևույթը հայ ազգային կուսակցությունների մոտ ուներ վայրիվերումների բնույթ և հաճախ ցարիզմի հանդեպ ունեցած ատելությունը արտահայտվում էր անքող առճակատման ձևով: Կարելի է ասել, որ չնայած երկու կողմերի հակակառավարական, բայց ոչ երբեք հակառուսական պայքարին, Ռուսաստանի նկատմամբ տարվող քաղաքականությունը արտահայտվում էր տարբեր եղանակներով, ինչն էլ մեր կարծիքով խորացնում էր այս հակասությունը: Այս բախման մեջ նկատելի է նաև Անդրանիկի՝ դեպի Էջմիածինն ունեցած ջերմ վերաբերմունքը: Հանձին այդ դաշինքի, որը ձևավորվել էր Հայկական հարցի, գաղթականության պրոբլեմների և հետևողական ռուսական կողմնորոշման շուրջը, հեղափոխության ողջ ընթացքում ավելի խորացան ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՀԴ և ՀԺԿ (Հայ ժողովրդական կուսակցություն) ու Անդրանիկի և նրա հոսանքի տարաձայնությունները:

Արևելահայերի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հրավիրված Ազգային համագումարում էլ դարձյալ չկայացավ հայ քաղաքական կուսակցությունների միավորումը, որի փորձերը սկսվել էին դեռևս 1916 թվականից:

---

[7] Տես Ռուսահայ հոգևորականության համագումարի բանաձևեր, Ս. Էջմիածին, 1917, էջ 3-24:

[8] Տես նույն տեղում:

[9] Տես Ռուսահայ հոգևորականության համագումարի բանաձևեր, էջ 22:

Ազգային համախմբման նպատակներ հետապնդող այս համագումարում և առավելապես իշխում էր մենիշխանության հաստատման միտումը, և պատահական չէ, որ այստեղ ստեղծված Արևելահայ Ազգային խորհրդում Դաշնակցությունը մեծամասնություն գրավեց՝ դրանով էլ ավելի ուժեղացնելով իր ազդեցությունը հայ քաղաքական կյանքում*:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Արևելյան Հայաստանի վիճակը համարում էր համեմատաբար կայուն և ապահով, որոշ առումով նաև լուծված, ուստի և Ռուսաստանի ուշադրությունը սևեռում էր Արևմտյան Հայաստանի վրա:

Այս նպատակով հունիսի 8-ին Կաթողիկոսությունը նախաձեռնեց «Տաճկաստանի տեղահանված վայրերի Հայոց Միության» ստեղծումը: Հունիսի 16-ին հայտնի դարձավ միության կանոնադրությունը: Կանոնադրության մեջ նախ և առաջ շեշտվում էր միության ազգային բնույթը, որը չէր հարելու ոչ մի քաղաքական հոսանքի: «Հայոց Միությունը» նպատակ էր դրել. ա) վերականգնել տեղահանված վայրերի հայ փախստականներին վերապահված իրավունքները, բ) հոգ տանել նրանց տնտեսական և բարոյական կացության մասին, գ) հարգել տալ տեղահանված վայրերի հայ փախստականների հավաքական ձայնի ուժը այս կամ այն հաստատությունների առաջ, դ) միացնել զանազան քաղաքներում կազմակերպված Հայրենակցական միությունները և ստեղծել կենտրոնական մարմին, ե) օգնել Միջագետքի հայ տարագիրներին և գերության մեջ գտնվող հայերին, զ) նպաստել հայրենիքի վերաշինման գործին: Միությունը ղեկավարում էին Կ. Լուսինյանը և Ա. Սարգսյանը[10]:

Կովկասյան բանակի գեներալներից Կուլեբյակինը, որին բնորոշ էր դեմոկրատական, պրոհայկական մտածելակերպը և վարքագիծը, «Կովկասյան ճակատում հեղափոխական գաղափարների տարածման մասին» ակնարկում գրում էր. «Չնայած արևմտահայության ողբերգությանը, հեղափոխությունը հայերի մեջ կրկին արթնացրեց ռուսների և դաշնակիցների օգնությամբ հայրենիքի ազատագրման հույսեր: Զգուշությունը արտահայտվում էր նրանում, որ հայերը իրենց եռանդը ուղղեցին հանգստության պահպանմանը և միահամուռ որոշեցին մինչև Սահմանադիր ժողովը ոչ մի պահանջ չառաջադրել»[11]: Հարկ է նշել, որ դրանով հայ ազգային-դեմոկրատական ուժերը հետապնդում էին մի գլխավոր նպատակ՝ սպասել պատերազմի հաղթական ավարտին, որը և պետք է լուծեր բոլոր ազգային խնդիրները, ամենից առաջ՝ Հայկական հարցը:

Արևմտահայության իղձերը հավաքական հնչեղություն ստացան հայ ժողովրդի ազատագրական պայքարի խորհրդանիշ դարձած զորավար Անդրանիկի հայտարարության մեջ. «Մենք՝ արևմտահայերս, առանձին անհուն ուրախությունով կողջունենք Մեծ Ռուսաստանի ազատական հաղթանակը: Մենք կհավատանք, որ ազատ Ռուսաստան մը պաշտպան պիտի հան-

---

* Տես ավելի հանգամանորեն մեր հոդվածը՝ «Փետրվարյան հեղափոխությունը և Հայկական Ազգային խորհուրդների ստեղծումը (մարտ 1916 – նոյեմբեր 1917), ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, ն. 6:»

10 Տես Մատենադարան, նույն տեղում, վավերագիր ն. 20:

11 Տես ՀՀԳԿԳԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 22:

դիմանա մեր արյան և անդարմանելի կորուստներու հարկին և հատուցանել պիտի տա մեր դարավոր թշնամին՝ Օսմանյան պետության»[12]:

Փետրվարյան հեղափոխության ազատարար շունչը ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում հանդիպեց նախկին իշխանությունների, մասնավորապես Կովկասյան բանակի միապետական հրամանատարության դիմադրությանը: Մարտի 15-ին Վասպուրականի պաշտոնանկ նահանգապետ Բարկովսկին փախավ Թիֆլիս, Վանի բնակչությանը նույնիսկ չհայտնելով ցարիզմի տապալման մասին: Իսկ երբ այստեղ էլ հասան Պետրոգրադի լուրերը, այլևս հնարավոր չէր զսպել համաժողովրդական ցնծությունը, զինաթափ արվեց տեղի ոստիկանությունը: Մարտի 19-ին Վանի Խաչփողոցի շրջանում տեղի ունեցավ զինվորական միտինգ՝ բնակչության ակտիվ մասնակցությամբ: Վանի Դանիել վարդապետը Վասպուրականի ժողովրդի կողմից ողջույն հղեց Ռուսաստանի նոր կառավարությանը[13]: Հեղափոխության հաղթանակը Ալաշկերտի դաշտում էլ ոգևորություն առաջացրեց: «Ավերակներով հարուստ Ղարաքիլիսայի զարդը վերջերս կազմում են հեղափոխական կարմիր դրոշակները, – գրում էր «Հորիզոն»-ը: – Ամեն մի պաշտոնական տան, ամեն մի զորամասի, բնակարանի վրա ծածանվում են նրանք, իրենց պերճախոս լեզվով՝ «կռվով ձեռք բերենք մեր իրավունքները, պահպանենք այն»[14]: Կարսից ու Սարիղամիշից հետո ռազմաճակատի ընդարձակ տարածքում հեղափոխական շրժման նշանակալի օջախներ դարձան Էրզրումը, Խնուսը, Երզնկան, Մամախաթունը, Արդվինը, Կաղզվանը և այլ վայրեր, որտեղ կենտրոնացած էին Կովկասյան բանակի խոշոր զորամասեր: Ամենուրեք հնչում էր «կեցցե բանակը և ռուս ժողովուրդը» կոչը, որպես դեմոկրատական պետության հետագա կայունացման և պատերազմը մինչև հաղթական վախճանը հասցնելու նշանաբան: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանում և այն ներկայացնող գործիչների մոտ հեղափոխության նվաճումները ընկալվում էին ու մեկնաբանվում արևմտահայությանը բնորոշ տեսանկյունից: Վերջինս իր մեջ ներառնում էր հիմնականում բնակչության ֆիզիկական անվտանգության, կորցրած հայրենիքի վերականգնման գաղափարը, ծրագիր, որ տվյալ պատմական ժամանակահատվածում իրագործվելու էր ռուսական հաղթական բանակի կողմից՝ Արևմտյան Հայաստանի նվաճման ճանապարհով:

Հեղափոխությունից հետո, զինվորական պատգամավորական խորհուրդներին զուգահեռ, Արևմտյան Հայաստանում ձևավորվում են ժամանակավոր կառավարության քաղաքացիական իշխանության մարմիններ, որոնք իրենց մեջ ներառնում էին բազմաթիվ բարեգործական, գաղթականական կոմիտեներ, տեղական բնակչության ստվար խավեր: Դրանք ժամանակավոր կառավարության հասարակական գործադիր կոմիտեներն էին: Ստացվում էր, որ Արևմտյան Հայաստանում, ի տարբերություն Արևելյանի, Երկիշխանությունը դրսևորվեց «Եռիշխանությամբ», քանի որ զինվորական պատգամավորների խորհուրդների և հասարակական գործադիր կոմիտեների կողքին այստեղ

---

12 ՀՀԳԿԳԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 33:

13 Տես «Արև», Բաքու, 1917, 6 ապրիլի:

14 «Հորիզոն», Թիֆլիս, 1917, 13 ապրիլի:

գործում էր նաև ռազմական իշխանության մարմին՝ գեներալ-նահանգապետությունը:

Արևմտյան Հայաստանն ընդգրկեց նաև ընդհանուր բնույթ ստացած Օզակոմի «անիշխանության» քաղաքականությունը: Ի հայտ էր գալիս ցարիզմի այն հակասությունը, որ թեև Ռուսաստանը նվաճում և օբյեկտիվորեն ազատագրում էր Արևմտյան Հայաստանը, բայց դրան զուգահեռ գրաված մարզերում չէր ձևավորում քաղաքացիական իշխանություն, որը և պետք է խաղաղ ու անվտանգ կյանքի երաշխիքներ ստեղծեր: Հարկ է նշել, որ ժամանակավոր կառավարությունը չհապաղեց այս հարցում:

Առաջնահերթ խնդիրներ էին դառնում գաղթականության և Արևմտյան Հայաստանի վարչա-քաղաքացիական իշխանության ստեղծման հարցերը:

Երևանի գաղթականության ապրիլի 13-ի բողոք-խնդրագիրը՝ ուղղված Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին, լիովին արտացոլում էր բնակչության այդ խավի վիճակը: Այնտեղ ասվում էր, որ փախստականները 4 ամիս նպաստ չեն ստացել, 5 ամիս չի բաժանվել շաքար և նավթ, տաք հագուստ[15]: Ապրիլի 14-ին արդեն տեղի ունեցավ Երևանի գաղթականության ցույցը «Եղբայրական օգնության հանձնաժողովի» դեմ, և ցուցարարները, խուժելով հանձնաժողովի գրասենյակները, ներկայացրին իրենց պահանջները[16]: Հեղափոխությունից անմիջապես հետո և դեռ 1916 թվականի ընթացքում բազմիցս քննարկվել է գաղթականության օգնության վարչությունները բարեկարգելու խնդիրը[17]: Եվ միայն 1917 թ. մայիսի 28-ին Արևմտահայերի համագումարի պայմաններում վերջնականապես լուծվեց գաղթականության օգնության գլխավոր լիազոր, գեներալ-մայոր Թամամշյանի վարչության վերակազմության հարցը: Համաձայն նոր հաստատված կանոնադրության (Положение об устройстве беженцев Кавказского фронта), կազմվեց 23 հոգուց բաղկացած խորհուրդ՝ այն ազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, որոնք պետք է կազմակերպեին փախստականներին ցույց տրվող օգնության գործը[18]: Թերևս լուրջ մտահոգություն էր ներկայացնում որոշ ռուս չինովնիկների վերաբերմունքը գաղթականության հայրենիք վերադառնալու խնդրին: Այս երևույթը շարունակաբար փոխանցվել էր ցարական պաշտոնյաներից և կրում էր հայ բնակչության ճակատագրի նկատմամբ անտարբերության, անհետևողականության կնիքը: Հատկանշական է Սպերանսկու վարքագիծը: 1917 թ. մայիսին Ալաշկերտի կոմիսար Սպերանսկին հեռագրում էր Օզակոմին, թե հայ փախստականների բազմաթիվ ընտանիքներ Անդրկովկասից գալով գրավում են Ղարաքիլիսայի շրջանի բոլոր այն վայրերը, որոնք անմարդաբնակ էին: Նա պնդում էր, որ այնտեղ հրամայված է բնակեցնել Օղնուտից և Երզնկայից վտարված քրդերին ու թուրքերին: Սպերանսկին Օզակոմին «կարգադրում էր»

---

15 Տես «Մշակ», Թիֆլիս, 1917, 21 ապրիլի:

16 Տես նույն տեղում, 18 ապրիլի:

17 Տես Ш. И. Басилая, Закавказье в годы первой мировой войны, Сухуми, 1968, с. 118-131.

18 Տես «Մշակ», 1917, 30 մայիսի:

առաջարկել հայկական կազմակերպություններին, որպեսզի նրանք խափանեն հայ փախստականների ներգաղթը[19]: Հայ գաղթականը հայրենիք վերադառնալու համար նույնիսկ հարկադրված էր ներկայացնել վկայական՝ իր ընտանիքը կոտորած տեղական քրդերի ու թուրքերի կողմից: Դրանով անտեսվում էր ժամանակավոր կառավարությանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի մարտի 23-ի խնդրանքը, որով իրավունք էր տրվում Թուրքահայաստանից փախած գաղթականներին անարգել և առանց բացառության վերադառնալու նախկին վայրերը[20]: Կաթողիկոսը կառավարությանը չահագրգռելու նպատակով իր խնդրանքը արդարացիորեն հիմնավորում էր թիկունքը ապահովելու և բանակը պարենով մատակարարելու հոգսով: Այս ամենին ավելանում էին նաև սովն ու համաճարակները, քրդական ավազակային հարձակումները, որոնք կլանում էին հազարավոր անօթևան հայերի:

Նման բարդ խնդիրների լուծմամբ պետք է զբաղվեր Արևմտահայերի Առաջին համագումարը (Փախստականական, գաղթականական համագումար - Վ. Մ.): Նրա հրավիրման հարցը քննարկվում էր հասարակական-քաղաքական տարբեր շերտերում: Պետք է ասել, որ հիմնականում դրվում էր դրա վաղաժամության հարցը: Հայոց Ազգային բյուրոյի մարտի 20-ի նիստում Ալեքսանդր Խատիսյանը ավելացնում էր նաև «տաճկահայության համար որևէ կառավարական հայտարարություն անելու վաղաժամությունը»[21]: Համագումարի ոգեշնչողը Անդրանիկն էր: Այդ նպատակով նա Թիֆլիսում ապրիլ ամսին հիմնեց մի ընկերություն, որը զբաղվելու էր արևմտահայությանը հուզող հարցերով, հրատարակելու էր թերթ[22]: Դեռ մարտի 15-ին Անդրանիկը կոչ էր անում իր հայրենակիցներին հրատարակելու արևմտահայությանը նվիրված լրագիր, որը բացառապես պետք է զբաղվի «այդ կոտորված ժողովրդի կարիքներով»[23]: Ապրիլի 16-ին Թիֆլիսում լույս տեսավ «Հայաստան» թերթի առաջին համարը, որը կրում էր «Անդրանիկի Օրգան» տիտղոսագիրը[24]: «Հայաստան» թերթը անկուսակցական էր. նրա նպատակն ու խնդիրները մշակել էր Վահան Թոթովենցը: Համագումարի կողմից Արևմտահայ Ազգային խորհրդի ստեղծումից հետո, թերթը դարձավ վերջինիս օրգանը: Անդրանիկի, Վ. Թոթովենցի, Խ. Բոնապարտյանի, Հ. Տեր-Հարությունյանի և այլոց շուրջն էլ ձևավորվեց նոր ու ինքնատիպ քաղաքական հոսանքը[25]:

Մայիսի 2-ին Երևանում բացվեց Արևմտահայերի առաջին համագումարը: Ներկա էին 59 պատգամավորներ, 400 հյուրեր, այդ թվում հոգևորականության ներկայացուցիչներ, գաղթականությանը օգնող ռուսական,

---

19 Տես նույն տեղում, 20 մայիսի:

20 Տես Մատենադարան, նույն տեղում, վավերագիր ն. 12:

21 Տես ՀՀԳԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 105:

22 Տես ՀՀԳԿՊԱ, ֆ. 370, ց. 3, գ. 60, թ. 1:

23 Տես Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Ջոպանյանի ֆոնդ, թղթապանակ ն. 2411, թ. 1:

24 Տես «Հայաստան», Թիֆլիս, 1917, 16 ապրիլի:

25 Տես Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, նույն տեղում:

անգլիական, ամերիկյան հայանպաստ մարմինների գործիչները, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում Դաշնակցությունից[26]: Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը, նախագահության կազմում էին Լևոն Ծանթը, Վահան Փափազյանը (Կոմս), Արտակ Դարբինյանը[27]:Համագումարի առաջին գործը եղավ ժամանակավոր կառավարությանը ողջույնի հեռագիր հղելը, որի տակ ստորագրել էին Անդրանիկը և Լևոն Ծանթը[28]:

Երբ «Մշակի» խմբագիր, ՀԺԿ հիմնադիր Համբարձում Առաքելյանը գրեց, թե «մենք՝ ռուսահայերս Ռուսահայաստանի սահմանները կպաշտպանենք, իսկ թրքահայերը թող Թրքահայաստանի սահմանները պաշտպանեն»[29], Անդրանիկը պատասխանեց. «Պահենք, միասին պահենք Թուրքահայաստանի սահմանները, որով պահած կըլլանք Ռուսահայաստանի սահմանները: Պետք է վերացվի ռուսահայ և թուրքահայ հարցը, պետք է փլվին այդ խրամատները»[30]:

Այստեղ հարկ ենք համարում բերել նաև Լեոյի գնահատականը արևմտահայերի և արևելահայերի հետփետրվարյան հարաբերությունների վերաբերյալ: «Արևմտահայ մտավորականությունը, - գրում էր Լեոն, - վերագնահատման է ենթարկում ռուսահայ մտավորականության վերաբերմունքը դեպի թրքահայ ժողովուրդը, այսինքն՝ ինչ տասնյակ տարիների ընթացքում ներկայացրել էր թուրքահայ հեղափոխությունը: Նոր էին հասկացվում սխալները, մոլորությունները, միակողմանի գործողությունների վնասը»[31]: Փոխըմբռնման բացակայությունը դժբախտաբար իշխեց համագումարի ողջ ընթացքում:

Համագումարի նվաճումն էր արևմտահայ Ազգային խորհրդի ստեղծումը: Այն կազմված էր 15 անդամներից, որից 8-ը դաշնակցական էին, իսկ 7-ը՝ երեք քաղաքական կուսակցությունների՝ Սահմանադիր-ռամկավար, Հնչակյան, Ս. - Դ. (բոլշևիկյան) ներկայացուցիչներ:

Մայիսի 11-ին, ավարտելով իր աշխատանքները, Արևմտահայերի համագումարը առաջադրեց իր նպատակները և Ծանթի խմբագրությամբ ընդունեց մի շարք որոշումներ: Նպատակներն էին. 1. արևմտահայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանումը և քայքայված տնտեսության վերականգնումը, 2. Հայրենիքի վերաշինությունը, 3. նոր սերնդի կրթական, ֆիզիկական և քաղաքական դաստիարակությունը[32]:

---

26 Տես «Հայաստան», 1917, 7 մայիսի:

27 Տես «Մշակ», 1917, 6 մայիսի:

28 Տես Центральный Государственный Исторический архив Петербурга, ф. 1278, оп. 5, д. 1303, л. 26.

29 Տես Գ. Աճեմեան, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-18), Վենետիկ, 1928, էջ 56:

30 Տես նոյն տեղում:

31 Տես Լեօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Փարիզ, 1935, էջ 195:

32 ՀԳԿԳԱ, ֆ. 32, ց. 1, գ. 12, թթ. 151-152, 158-160:

Արևմտահայության առջև ծառացած մյուս կենսական հարցը՝ նրա ֆիզիկական գոյությունը պահպանելուն անմիջականորեն ուղղված Արևմտյան Հայաստանի վարչական մարմինների ստեղծումն էր, Հեղինակավոր և կայուն քաղաքացիական իշխանության հիմնումը**:

1917 թ. ապրիլի 25-ին Ժամանակավոր կառավարությունը հրապարակեց որոշում Թուրքահայաստանի կառավարման մասին: Այն ստորագրել էին մինիստր-նախագահ Լվովը, արտաքին գործերի մինիստր Միլյուկովը և գործերի կառավարիչ Նաբոկովը[33]: Թուրքահայաստանի և պատերազմի իրավունքով գրավված այլ մարզերի տարածքների քաղաքացիական կառավարումը վերցվում էր կովկասյան իշխանություններից, այդ թվում նաև կովկասյան բանակի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն դրվում ժամանակավոր կառավարության տնօրինության տակ: Երկրամասի քաղաքացիական կառավարումը հանձնվում էր գեներալ-կոմիսարին և նրան ենթակա վարչական մարմիններին[34]:

Հունիսին հաստատվեց Ռուսաստանի պետական սահմանը Արևմտյան Հայաստանում, որն անցնում էր Սյուրմենե, Բայբուրդ, Դերջան, Մամախաթուն, Վերին Արաքս, Խնուս, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի, Սարամ քաղաքներով[35]: Մայիսի 15-ին Արևմտյան Հայաստանի Գեներալ-կոմիսար նշանակվեց Պյոտր Ավերյանովը[36], իսկ օգոստոսի 6-ին՝ քաղաքացիական գծով տեղակալ՝ Հակոբ Զավրիյանը[37]:

Հանձին Արևմտյան Հայաստանի Գեներալ-կոմիսարության, Հայաստանի անկախության կորստից հետո առաջին անգամ ճանաչվեց Հայաստանի՝ նախ գոյությունը, ապա և ինքնավարությունը: Դրանով նաև Ռուսաստանը ի վերջո լուծեց իր աշխարհաքաղաքական գլխավոր ծրագրերից մեկը: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանը ուղղակիորեն իրեն ենթարկելուն, ապա դա մեր կարծիքով բացատրվում է երեք էական պատճառներով.

ա) Նախ և առաջ դրսևորվում էր կովկասյան իշխանությունների անկարողությունը և անհետևողականությունը Արևմտյան Հայաստանի իշխանության կազմակերպման հարցում: Դա լրացվում էր վրացական-ադրբեջանական ձևավորվող դաշինքով, որը չէր թաքցնում իր հակահայկական տրամադրությունները և նույնիսկ թշնամական վերաբերմունքը հնարավոր «Ազատ Հայաստանի» և Հայկական հարցի լուծման նկատմամբ:

բ) Փետրվարյան հեղափոխությամբ ծնված ազգային ինքնագիտակցության վերելքը, Կովկասում ազգային պետությունների մեջ ամփոփվելու անզսպելի խորացող միտումներն էին: Ինչքան էլ դրանք հեղափո-

---

** Այս մասին տես մեր հոդվածը՝ «Ռուսաստանի Ժամանակավոր Կառավարությունը և Հայկական հարցը 1917 թ.», «Պատմա-բանասիրական հանդես», հ. 1-2, 1994:

33 Տես ՀԳԿՊԱ, ֆ. 374, ց. 1, գ. 1, թթ. 3-7, 19-20:

34 Տես նույն տեղում:

35 Տես Центральный Гос. Военно- исторический архив РФ, ф. 2100, оп. 1, д. 675, л. 45.

36 Տես նույն տեղում, ф. 13249 оп. 4, д. 2, л. 1.

37 Տես նույն տեղում, ф. 13224, оп. 2, д. 2, л. 1.

խության սկզբում զսպվեին ազգային կուսակցությունների, գործիչների կողմից, մինույն է, անհանգստացնում էին Ռուսաստանին այն իմաստով, որ կհանգեցնեին ի վերջո իր իսկ կողմից գրաված տարածքների կորստին:

գ) Այստեղից էլ բխում է երրորդ պատճառը, որը կարելի է տեսնել Կովկասյան բանակի հեղափոխականացման, իսկ 1917 թ. հուլիսյան դեպքերից հետո արդեն՝ բոլշևիկացող զորամասերի պարտվողական տրամադրությունների պարագայում:

Ուստի և Արևմտյան Հայաստանում կանգնած բանակը իրեն ենթարկելու և պատերազմը հաղթական ավարտին հասցնելու նպատակով նաև գրավված մարզերը ուղղակիորեն ենթարկվեցին Ժամանակավոր կառավարությանը: Վերջինս առանց հապաղելու, արդեն ապրիլ ամսից սկսեց ազգային զորամասերի ստեղծումը***:

Արևմտյան Հայաստանի գրավումը և վարչական քաղաքացիական իշխանության կազմակերպումը որքան էլ որ բխում էին ռուսական պետության շահերից, հասկանալի է, որ այդ ամենը լիովին համընկնում էր հայ ժողովրդի երկար սպասված իղձերին, փաստորեն նպաստելով Հայկական հարցի լուծմանը:

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

*** Այս մասին տես մեր հոդվածը՝ «Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917 թ.», ՊԲՀ, նույն տեղում:

# ԱՆԳԼԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

*1915 թ. աշնանը, երբ պարզորոշ դարձան ռուսական բանակի հաջողությունները Կովկասյան ռազմաճակատում և դրա հետ զուգընթաց իրական հեռանկարներ բացվեցին Արևմտյան Հայաստանի ռուսական նվաճման համար, անգլիական գործակալները, որոնք պատերազմի սկզբին դադարեցրել էին իրենց գործունեությունն Արևմտյան Հայաստանում, նորից վերսկսեցին այն: Վերականգնելու համար Արևմտյան Հայաստանում իրենց ընդհատված հեղինակությունը, Լորդերի պալատը 1915 թ. սեպտեմբերի 23-ին (հոկտեմբերի 7-ին) հիշատակեց Թուրքիայում հայերի զանգվածային ջարդերի և հայ գաղթականության ծանր վիճակի մասին: Իսկ լորդ Կրոմերը դիմեց կառավարությանը՝ հաստատելու համար հայերի կոտորածների մասին հաղորդումների ճշտությունը[1]:*

*Արևմտյան Հայաստանում իրենց տնտեսական և քաղաքական գործելակերպը վերականգնելու համար, անգլիական կառավարությունը որոշեց օգտագործել հայ գաղթականության ծանր վիճակը: 1916 թ. ապրիլի 2-ին հանդես գալով Պետրոգրադում, Հերալդ Բեկստոնը նշում էր, որ անգլիական կառավարության պարտքն է՝ փողով և մարդկանցով օգնության հասնել Ռուսաստանի տարածքում ապաստանած հայ գաղթականներին[2]:*

*Արևմտյան Հայաստանի ռուսական գրավման պայմաններում անգլիական կառավարությունը զրկվում էր հին միջոցներով, այն է՝ դիվանագիտական հիմնարկների և միսիոներական կազմակերպությունների օգնությամբ գործելու հնարավորություններից: Այդ նպատակով անգլիական կառավարությունը որոշեց փոխել իր գործունեության ձևերն ու մեթոդները: Պատերազմի տարիներին գոյություն ունեցող «Բրիտանա-հայկական կոմիտեի» և «Հայկական համայնքի ընկերության» հետ միասին հիմնվեցին նոր կազմակերպություններ, որոնք նույնպես պետք է զբաղվեին Արևմտյան Հայաստանի գործերով: Այդպիսի կազմակերպություններից էին՝ «Լոնդոնի լորդ-քաղաքագլխի հայ գաղթականների հիմնադրամը»* (Armenian Refugees /Lord Mayors/ Fund. President The Lord Mayors of London), *«Հայկական Կարմիր խաչի և գաղթականների հիմնադրամը»* (Armenian Red Cross and Refugee Fund) *և «Մանչեստրի հայ որբերի հիմնադրամը»* (Armenian Orphons Fund):

*Այդ կազմակերպություններից գլխավորը՝ Լոնդոնի լորդ քաղաքագլխի կոմիտեն էր, որը հիմնվել էր 1915 թ. հոկտեմբերի 6-ին՝ Լորդերի պալատի*

---

1 "Кавказское слово", 16 октября 1915 г., № 228.

2 "Армянский вестник", 24 апреля 1916 г., № 12-13.

*համապատասխան որոշման հիման վրա: Կոմիտեի ստեղծման գործում մեծ դեր էին խաղացել Լոնդոնի նախկին քաղաքագլուխ Կարլ Ուեքֆիլդը, պառլամենտի անդամներ Ա. Ռոնտրին, Ի. Ռեդմենդսը, Ն. Բեկստոնը, Ա. Վիլյամսը և ուրիշներ*[3]*:*

*Կոմիտեի մշտական պրեզիդենտը Լոնդոնի քաղքագլուխն էր, փոխ-պրեզիդենտը՝ Քենթրբերիի և Յորքի արքեպիսկոպոսը, անդամները՝ լորդեր Բրայսը, Կրոմերը, Քերզոնը, Անգլիայի նշանավոր պետական և քաղաքական գործիչներ Ռեսելը, Էդվինը, Բիրսը, Կոմպտեն, Ռեկետը, արևելագետ Վիլյամս Ռամզեյը և ուրիշներ, ինչպես նաև կարդինալ Բուրնը (անգլիական կաթոլիկների ղեկավարը) և Անգլիայում Ռուսաստանի դեսպան կոմս Բենկենդորֆը: Գործադիր կոմիտեի անդամներ դարձան Էմ. Ռոբինզոնը, Մադլեն Գոլը, գնդապետ Մարգաբ Կրեկրին, Ավիտամ Հակոբյանը, Բեկստոն եղբայրները և պառլամենտի դեպուտատ Օ. Կոննորը*[4]*:*

*Կոմիտեն իր մասնաճյուղերն ուներ Մեծ Բրիտանիայի զանազան քաղաքներում:*

*1915 թ. հոկտեմբերի 15-ին Լոնդոնում կազմակերպվեց մեծ ցույց, որը նախագահում էր լորդ-քաղաքագլուխ Չարլզ Ջանստոնը: Ցույցի կազմակերպումը նպատակ էր հետապնդում՝ նախ և առաջ բողոքարկել թուրքական գազանությունների դեմ, և երկրորդ՝ հաստատել «հիմնադրամ»՝ հօգուտ հայ գաղթականների (*Armenian Refugees /Lord Mayors/ Fund*):*

*Ցույցի ժամանակ իրենց ելույթներով հանդես եկան լորդ Բրայսը, կարդինալ Բուրնը, Օքսֆորդի եպիսկոպոսը և ուրիշներ: Միաժամանակ կարդացվեցին վարչապետ Աքսվիթից, ծովային նախարար Բալֆուրից, Քենթրբերիի արքեպիսկոպոսից ստացված նամակները*[5]*:*

*Կոմիտեի դրամական միջոցները սկզբնական շրջանում հասնում էին 750000 ռ. (24000 ֆ. ստերլինգի)*[6]*, որոնք հավաքվել էին հիմնականում մասնավոր նվիրատվություններից: Ֆոնդին աջակցում էին նաև Մանչեստրի հայ վաճառականները և հնդկահայերը (հնդկահայ ֆոնդի նախագահն էր հնդկահայ Գ. Մ. Գրեգորին): Հետագայում դրամական միջոցները հասան 78000 ֆունտ ստերլինգի*[7]*, որի մեծ մասն ուղարկվեց Թավրիզ, իսկ փոքր մասը՝ Թիֆլիս*[8]*:*

*Այս ընկերության կողմից Հարոլդ Բեկստոնը անգլիացի բժիշկների և գթության քույրերի հետ միասին գործուղվեց Թիֆլիս, եղավ Երևանում, Էջմիածնում, Վանում, Կարինում, ծանոթանալով գաղթականության վիճակին և 3 ամսից հետո,*

---

3 ՀՀ ՊՊԿԱ, ց. 1, գ. 545, թ. 16 (անգլերեն լեզվով):

4 Նույն տեղում, նաև՝ "Армянский вестник", 1916, թիվ 1, նաև՝ «Հորիզոն», 1915 թ. դեկտեմբերի 11, թիվ 278, նաև՝ «Վան-Տոսպ», 1915 թ. դեկտեմբերի 20, թիվ 4, նաև՝ «Համբավաբեր», 1917 թ. հունվարի 15, թիվ 2:

5 "Армянский вестник", 1916, թիվ 1, նաև՝ «Համբավաբեր», 1916 թ. ապրիլի 24, թիվ 17:

6 Public Record Office of England, FO 371 /2768/10710/. File 1455.

7 "Молот". 1917 г., 30 сентября, №3.

8 «Մշակ», 1916 թ. ապրիլի 16, թիվ 8, նաև՝ մայիսի 10, թիվ 101:

*վերադառնալով Լոնդոն, "Daily Chronicle" թերթում ներկայացրելով հայ գաղթականության թշվառությունները, կոչ արեց անգլիացիներին օգնել հայերին:*

*Իր աջակցությամբ երկրորդ բարեգործական կազմակերպությունը Էմիլյա Ռոբինզոնի «Հայկական Կարմիր խաչի և գաղթականների հիմնադրամ» կոմիտեն էր: Էմ. Ռոբինզոնը անգլիացի աչքառու հրապարակախոս Ջոն Ռոբինզոնի միակ դուստրն էր, որը 25 տարի Լոնդոնի «Daily News» օրաթերթի խմբագիրն էր: Դեռևս 1894–96 թթ. Ջոն Ռոբինզոնը հանդես էր եկել համիդյան եղեռնագործությունների դեմ և անգլիական կառավարությունից պահանջել, որպեսզի դադարեցվեն Թուրքիայի կողմից գործադրվող ջարդերը և իրականացվեն հայկական նահանգների բարենորոգումները:*

*Ունենալով հրապարակախոսական բնածին ձիրք, Էմ. Ռոբինզոնը մասնակցում է տարբեր թերթերի, ամսագրերի աշխատանքներին: Լինելով Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Շվեդիայում և այլ վայրերում, նա ուսումնասիրում է եվրոպական լեզուները և կատարում թարգմանություններ: Ծանոթանալով Լոնդոնի հայ ազգային տարբեր խավերի ներկայացուցիչների հետ, Էմ. Ռոբինզոնը հոժարակամ ուսումնասիրում է հայ ժողովրդի անցյալը, նրա պատմությունը, միաժամանակ մասնագիտանում հայ գրական և գեղարվեստական գրականության մեջ և վճռում՝ «Ծառայել հայերին՝ ծառայած լինելու համար քաղաքակրթությանը»[9]:*

*1913 թ. Էմ. Ռոբինզոնը նոր եռանդով հանդես եկավ հայ դատի պաշտպանությամբ: Նա անգլիական «Spectator», «Khoki», աչքառու պարբերականների էջերում լույս ընծայեց հայերի մասին բազմաթիվ հոդվածներ: 1914 թ. լույս տեսած նրա «The Truth about Armenia» (Ճշմարտությունը Հայաստանի մասին) գրքույկը՝ նվիրված թուրքերի կողմից հայերի բնաջնջմանը:*

*Բալկանյան պատերազմից հետո, զգալով Թուրքիայի հոգևարքը, Էմ. Ռոբինզոնը 1914 թ. հիմնեց «The Armenian Society» (Հայկական ընկերություն) կոմիտեն, որը բաղկացած էր համակիր անգլիացիներից և ամերիկացիներից: Կոմիտեի նպատակն էր՝ անգլո-սաքսոնական հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդի դարավոր պատմությանը և մշակույթին[10]:*

*Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Էմ. Ռոբինզոնի աջակցությամբ հիմնվեց «Հայկական Կարմիր խաչի և գաղթականների հիմնադրամ» ընկերությունը (Armenian Red Cross and Refugee Fund), որին անդամակցում էին անգլիական հասարակության բարձրաստիճան խավի ներկայացուցիչները, այդ թվում՝ ծովակալ լորդ Վայդերը, դերկոմս Բրայսը և իր կինը, Ուեյտոն եպիսկոպոսը, տիկ. Թոմսոնը, Թ. Պարլովը, պրոֆ. Ռենդոլ Հարրիսը, Ալ. Գլադստոնը և ուրիշ՝ 40-ից ավելի անգլիացիներ և լոնդոնաբնակ հայեր: Ընկերության նախագահությունը*

---

[9] «Բազմավեպ», 1917 թ. դեկտեմբեր, թիվ 12, էջ 498:

[10] «Արձագանք Փարիզի», 1919 թ. օգոստոսի 25 – սեպտեմբերի 10, թիվ 10-11, նաև «Հորիզոն», 1915 թ. հունվարի 17, թիվ 12, նաև՝ «Համբավաբեր», 1917 թ. հունիսի 15, թիվ 2:

ստանձնում է դերկոմս Բրայսը, իսկ քարտուղարի պաշտոնը՝ Էմ. Ռոբինզոնը[11]:

Սույն կոմիտեն պատերազմի տարիներին Անգլիայում ստեղծված առաջին կազմակերպությունն էր, որն անմիջականորեն զբաղվում էր արևմտահայության գործերով: Թղթակցության մեջ մտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հայկական նպաստամատույց մարմինների հետ, կոմիտեն օգնություն էր կազմակերպում հայ աղետյալների համար՝ հանգանակելով դրամ, դեղորայք և այլ միջոցներ: Մինչև 1917 թ. դեկտեմբերը Էմ. Ռոբինզոնի կոմիտեն հայ գաղթականների համար հանգանակեց և Կովկաս ուղարկեց շուրջ 120000 անգլիական ոսկի[12]:

1915 թ. «Down in the Near East» խորագրի տակ «Khaki» տարածված ամսաթերթի էջերում Էմ. Ռոբինզոնը հրապարակում է 16 էջից բաղկացած պատկերազարդ մի հոդված, որի մեջ ներկայացնում է Հայաստանի տարագրությունը, հայության հանդեպ Անգլիայի ստանձնած պարտականությունները, հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերը, հայ կամավորների և զորավար Անդրանիկի սխրագործությունները, հայերի եղեռնական ջարդերը և դաշնակից պետություններից պահանջում, որ պատերազմի հաղթանակից հետո Հայաստանին տրվի ինքնավարություն:

1916 թ. «Khaki» ամսաթերթի փետրվարի համարում «Ճշմարտություն Հայաստանի շուրջը» վերնագրով Էմ. Ռոբինզոնը մեկ ուրիշ ընդարձակ հոդված է հրապարակում՝ 10 գողտրիկ պատկերներով: Այն մի կոտ և ամբողջական նկարագրություն է հայ ժողովրդի ողբերգության, հերոսական մարտերի և դյուցազնական դրվագների[13]:

Մեծ էր Էմ. Ռոբինզոնի դերը «Հայկական Կարմիր խաչի և գաղթականների հիմնադրամի» կողմից տեղեկագրեր և շրջաբերականներ հրապարակելու գործում, որով նա անգլիացիներին կոչ էր անում՝ մեծագումար նպաստներով օգնության հասնել գաղթական հայերին: Նկարագրելով Էմ. Ռոբինզոնի այս հոգածությունը, Արշ. Սաֆրաստյանը գրում է. «Ես ականատես եղած եմ զանազան առիթներով սրտագրավ միջադեպի, երբ այս ազնիվ անգլուհին, ուրիշ անգլիացիների՝ հայ որբերի դրությունը նկարագրած պահին, արտասվել է առատորեն, մինչդեռ լինելով անձնապես հարուստ, նա կարող էր միլիոնավորների պես մտածել միմիայն իր գրպանի մասին»[14]:

Հայ գաղթականությանն օժանդակող երրորդ կազմակերպությունը 1917 թ. մարտի 11 (24)-ին Մանչեստրում հիմնված «Հայ որբերի հիմնադրամն» էր, որի ստեղծմանը մեծապես նպաստեց «Մանչեստր Գարդիան» թերթը: Կոմիտեի նախագահը Մանչեստրի քաղաքագլուխ Ջոն Մուզլն էր, իսկ անդամները՝ Անգլիայի առևտրա-արդյունաբերական շրջանների նշանավոր ներկայացուցիչներ Մենկեյվը,

---

[11] «Բազմավէպ», 1917 թ. դեկտեմբեր, թիվ 12, էջ 438:

[12] Նույն տեղում, էջ 439:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, էջ 441:

*Վիկոնդ Բրայսը, Սալֆորդի քաղաքագլուխը, Ջ. Արմսթրոնգը, Մանաշյանը և ուրիշներ[15]:*

*Կազմակերպությունն իր հրապարակած կոչերից մեկում նշում էր, որ «... մոտ 300000 հայ փախստականներ ապաստանել են Կովկաս և գտնվում են նյութական ծանր կացության մեջ, նրանց անհրաժեշտ է նյութական օգնություն հասցնել ամեն կերպ»[16]:*

*Չնայած գոյություն ունեցող այդպիսի հեղինակավոր կոմիտեների առկայությանը, հիշյալ կազմակերպությունների դրամական հասույթները կուտակվում էին հասարակ անգլիացիների հանգանակությունների միջոցով[17]:*

*Վերոհիշյալ կազմակերպություններն անգլիացիներից նվիրատվություններ էին հավաքում զանազան ձևերով: Նվիրատվությունների հավաքման ձևերից մեկը «Հայկական դրոշակի օրերն» էին (*Armenian Flag days*), որոնք կազմակերպվում են Մեծ Բրիտանիայի խոշոր քաղաքներում՝ Լոնդոնում, Մանչեստրում, Լիվերպուլում, Սոլֆորդում, Լիդսում, Ուիտբիում, ընդհանուր առմամբ 20 քաղաքներում[18]: Նշանավոր էր հատկապես 1916 թ. հոկտեմբերի 13-ին և 14-ին Մանչեստրում կազմակերպված «Հայկական դրոշակի օրը», որի ժամանակ հանգանակվեց մինչև 1000 ֆունտ ստերլինգ գումար[19]: Այդ գործի մեծագույն կազմակերպիչը Էմ. Ռոբինզոնն էր, որին հաջողվել էր դրամ հավաքելու գործին մասնակից դարձնել ոչ միայն հասարակ անգլիացիներին, այլև Անգլիայի նշանավոր պետական և քաղաքական գործիչների կանանց: Հայ գաղթականության օգտին կազմակերպված նմանատիպ հանգանակությունների ժամանակ ջերմ և անկեղծ վերաբերմունք էին ցուցաբերում հատկապես շարքային անգլիացիները: Անգլիացի մի ուսուցիչ գրում էր, որ «Ես չեմ կարող չօգնել՝ գիտակցելով, որ թեև Բելգիան և Սերբիան կարոտ են մեր համակրությանը և օգնությանը, սակայն մեր հոգատարության մեջ առաջին տեղը պիտի գրավի Հայաստանը, որի ժողովուրդը տանջվում է ոչ միայն իր իրավունքների համար՝ իբրև ազգ, այլև իր հավատքի համար»[20]:*

*Քիչ չէին դեպքերը, երբ երկրի տարբեր վայրերից, այդ թվում նաև գործող բանակից, դրամ էր ուղարկվում հայ գաղթականության օգտին: Պատերազմի դաշտից անգլիացի մի սպա ուղարկել էր 1 անգլիական ոսկի՝ օգնելու համար Հայկական Կարմիր Խաչի հիմնադրամին: Մի անգլուհի գրում էր. «Մի քիչ փող գտա մորս գրպանում, երբ նա մեռավ 9 տարի առաջ, մի քիչ էլ գտա հորս քսակում,*

---

15 «Համբավաբեր», 1917 թ. հունիսի 11, թիվ 22:

16 Նույն տեղում, 1917 թ. հուլիսի 30, թիվ 29:

17 «Արարատ», 1916, մայիս-հունիս, էջ 339:

18 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 2, գ. 193, թ. 31, գ. 194, թ. 4-5, նաև՝ "Армянский вестник", 1916, թիվ 40, էջ 16, 1917, թիվ 1, էջ 18-19, թիվ 41-42, էջ 19, նաև՝ «Համբավաբեր», 1915 թ., թիվ 51, գ. 1622, նաև՝ Վան-Տոսպ, 1916 թ., թիվ 49, 25:

19 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 2, գ. 193, թ. 31, գ. 194, թ. 4-5, նաև՝ «Համբավաբեր», 1916 թ. հոկտ. 30, թիվ 44, նաև՝ «Պահակ», 1917 թ. հուլիսի 3, թիվ 49:

20 «Հորիզոն», 1915 թ. հուլիսի 14, թիվ 131:

երբ նա վախճանվեց 5 տարի առաջ: Ես չծախսեցի այդ դրամները՝ իբրև նվիրական հիշատակ իմ ծնողների: Բայց զգում եմ, որ և նրանք կուզեին, որ այդ գումարը տամ հայ ազգին...»[21]:

Նույն օրը անգլիական մամուլը լայնորեն քննարկեց հանգանակության արդյունքները:

Բարեգործական կազմակերպություններին դրամական միջոցներ հատկացնում էին նաև հասարակական կազմակերպությունները: Այսպես, Ուիլդսեն քաղաքի քաղաքագլուխը Էմ. Ռոբինզոնի կոմիտեին էր հատկացրել 125 ֆունտ ստեռլինգ[22]:

Ի հակակշիռ հասարակ անգլիացիների, անգլիական կառավարությունը այդ կազմակերպություններին իր միջոցներից բաց չէր թողնում և ոչ մի փարտինգ: Ունենալով հեռու գնացող շահադիտական նպատակներ, կառավարությունը էապես շահագրգռված չէր հայ գաղթականությանն օգնելու հարցում: Նա տարբեր պատճառաբանություններով հրաժարվում էր դրամական օգնություն հատկացնելուց: Այդ մասին Անգլիայում Ռուսաստանի դեսպան Բենկենդորֆը 1916 թ. փետրվարի 22-ի հեռագրում նշում էր, որ «Անգլիական կառավարությունը ցավում է, որ, նկատի ունենալով անգլիական գանձարանին հղված բազմաթիվ հրատապ դիմումները՝ Անգլիայի և դաշնակից պետությունների նպատակներին օգնելու համար, զրկված է այդ օգնությունը նաև թուրքահայերի վրա տարածելու հնարավորությունից: Կառավարությունն առավել նպատակահարմար է գտնում հայ գաղթականության օգնության համար դիմել մասնավոր նվիրատվություններին՝ այդ նպատակով գործող բարեգործական հիմնադրամների միջոցով»[23]:

Սակայն դրա փոխարեն կառավարությունն ամբողջությամբ իր վրա էր վերցրել այդ կազմակերպությունների դրամական միջոցների վերահսկողությունը: Նա նույնիսկ օրենք հրապարակեց, որի համաձայն բարեգործական կազմակերպությունների վրա պարտականություն էր դրվում՝ հաշվետու լինել կառավարության առջև: Եթե կազմակերպությունների ներկայացրած հաշվետվությունները չէին բավարարում կառավարությանը, ապա վերջինս կարող էր հիշյալ օրենքի հիման վրա արգելել նրանց գործունեությունը[24]: Իսկ որպեսզի անախորժություններ չլինեին, բարեգործական կազմակերպությունները պարտավոր էին գաղթականների վրա անտեղի փող չծախսել, այլ իրենց դրամական ավանդները կուտակել զանազան, այդ թվում՝ փոքր, բայց հեռանկարային ձեռնարկությունների հիմքում, որոնք հետագայում կտային համապատասխան եկամուտներ: Ավելի ուշ, երբ կդրվեին նման հիմնարկությունների գործունեության հիմքերը, նախատեսվում էր այդ գործին մասնակից դարձնել անգլիական սինդիկատներին: Բացի դրանից, իրենց

---

21 Նույն տեղում:

22 "Армянский вестник", 1917 г., № 11.

23 АВПРИ, Ф. Политархив, 1915-16 гг., оп. 482, д. 3492. л. 28.

24 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 2, գ. 193, թ. 30:

*ազդեցությունը տեղում տարածելու համար նախատեսվում էր նաև այդ հիմնարկությունների գործունեությանը մասնակից դարձնել նաև Կովկասի հայ բանկիրներին և խոշոր արդյունաբերողներին: Որպես սինդիկատների բանվորներ և ծառայողներ, նպատակահարմար էր գտնվում ապագայում կառուցվելիք արհեստանոց-ձեռնարկություններում օգտագործել հայ գաղթականների և որբերի աշխատանքը[25]: Պատերազմի տարիներին այսպիսի արհեստանոց-ձեռնարկություններ հիմնվեցին Թիֆլիսում, Երևանում, Իգդիրում, Նոր Բայազետում, Դիլիջանում և այլ վայրերում: Անգլիական ֆոնդը ներդրվեց Թիֆլիսի «Վանի ոսկերիչների միության» և «Վանի կանանց միության», Երևանի «Վասպուրականի հյուսնների միության» գործի մեջ[26]: «Վանի հյուսնների ընկերության» արհեստանոցի կապիտալի 60 տոկոսը պատկանում էր Էմ. Ռոբինզոնի կոմիտեին[27]:*

*Անգլիական կազմակերպությունները չէին թաքցնում այն նպատակները, հանուն որոնց անգլիական դրամները հոսում էին դեպի Կովկաս և Արևմտյան Հայաստան: Լորդ քաղաքագլխի կոմիտեն 1915 թ. դեկտեմբերին հրապարակած իր կոչում նշում էր, որ կոմիտեի փողերը ծառայում էին Թիֆլիսի և Երևանի արհեստանոցների պահպանման համար, իսկ հետագայում պիտի ծառայեն Դիլիջանում հիմնվելիք գաղթականական ագարակների համար[28]:*

*Եվ իրոք, այդպիսի ագարակներ հիմնվեցին: 1917 թ. հունվարին Թիֆլիսից Լոնդոն՝ Էմ. Ռոբինզոնի կոմիտեին հաղորդվում էր, որ Դիլիջանի ագարակներում կամ արհեստանոցներում աշխատում էին շուրջ 50 գաղթականներ[29]: Անգլիական դրամներն ուղարկվում էին կա՛մ նվիրատվությունների ձևով, կա՛մ ծառայում որբանոցների կառուցման և Հայաստանի վերաշինության գործին և կա՛մ էլ ներդրվում բժշկական գործի կազմակերպման ուղղությամբ: Այսպես, 1915 թ. օգոստոսին Լոնդոնի անգլո-հայկական կոմիտեն, Մոսկվայի անգլիական հյուպատոսի միջոցով, արևմտահայ գաղթականների համար Թիֆլիսի քաղաքագլխի անունով ուղարկել էր 5678 ռ. 50 կ. դրամ, որը հանձնվել էր Վանի նահանգապետ Արամին[30]: Անգլիական պառլամենտի անդամ Վիլյամսը 1915 թ. աշնանը հեռագրով Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսյանին էր ուղարկել 72000 ռ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնելու համար: Նա խոստանում էր գաղթականների համար ուղարկել ևս 45000 ռ.[31]:*

*Հօգուտ հայ փախստականների, Լոնդոնից Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեով ուղարկվել էր 160000 ռ.[32]:*

*1916 թ. մարտին Լոնդոնի քաղաքագլխի հայանպաստ կոմիտեն Հայկական*

---

25 Նույն տեղում, գ. 194, թ. 4–11:
26 ЦГИА РГр., Ф. 520, оп. 1, д. 208, л. 93.
27 "Армянский вестник", 1917, թիվ 41-42, նաև՝ «Վան-Տոսպ», 1917 թ., թիվ 36:
28 ЦГИА РГр., Ф. 520, оп. 1, д. 208, л.147.
29 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 2, գ. 330, թ. 23:
30 «Հորիզոն», 1915 թ. օգոստոսի 13, թիվ 181, նաև՝ սեպտեմբերի 29, թիվ 219:
31 Նույն տեղում, 1915 թ. նոյեմբերի 26, թիվ 266, նաև՝ դեկտեմբերի 11, թիվ 278:
32 «Վան-Տոսպ», 1915 թ. դեկտեմբերի 13, թիվ 3:

*կենտրոնական կոմիտեին ուղարկել էր 74750 ռ.՝ հայ փախստականների կարիքները բավարարելու համար*[33]*:*

*Համաձայն Լոնդոնի «Ararat» ամսագրի հաղորդած տեղեկությունների, իր գործունեության սկզբից մինչև 1916 թ. սեպտեմբերը Լոնդոնի լորդ-քաղաքագլխի կոմիտեն գաղթականների համար հավաքել և Կովկաս էր ուղարկել 57000, Հայ գաղթականների կոմիտեն՝ 18600, և Հայկական Կարմիր խաչի կոմիտեն՝ 7100 անգլիական ոսկի*[34]*: 1917 թ. մայիսին հայ փախստականների օգտին կատարված հանգանակության գումարը կազմում էր 101000 անգլիական ոսկի (1.400000 ռ.)*[35]*:*

*Միայն Հայկական կենտրոնական կոմիտեն անգլիական կոմիտեից 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. ապրիլի 1-ը ստացել էր 25200 ռ. դրամ*[36]*:*

*Սկզբնական շրջանում անգլիական բարեգործական կոմիտեները բավականաչափ դրամ էին տրամադրում որբանոցներ բացելու ուղղությամբ: Այսպես, Լոնդոնի անգլո-հայկական կոմիտեի նախագահ Վիլյամսից 1915 թ. դեկտեմբերին ստացվել էր 37312 ռ.՝ որբանոցների բացման և պահպանման համար*[37]*: Բեկստոնի կոմիտեն 1916 թ. մայիսին 15000 ռ. էր նվիրել Թիֆլիսի, Վանի և Մուշի որբերի պահպանման համար*[38]*: Էմ. Ռոբինզոնը Թիֆլիսի քաղաքագլխի անունով 2900 ռ. էր ուղարկել Վանի Կանանց և Թիֆլիսի Օրիորդաց կոմիտեներին՝ մանկական ապաստարանները պահպանելու համար*[39]*: Եվ այսպես մի շարք օրինակներ:*

*Սակայն հետագայում, հատկապես գաղթականական որբանոցների համար, դրամ էր բաց թողնվում այն ժամանակ, երբ հավանական էր համարվում այդ որբանոցներին կից արհեստանոցներ բացելը: Այնտեղ, ուր այդպիսի հնարավորներ չկային, փակվում էին նույնիսկ պատահականորեն բացված որբանոցները: Դա վկայում էր այն մասին, որ անգլիական կազմակերպությունների դրամները ծախսվում էին հիմնականում տնտեսական բնույթի ձեռնարկությունների հիմնադրման վրա, որոնք հետագայում կարող էին տալ որոշակի եկամուտներ: Հակառակ դեպքում այդ կազմակերպությունները չէին կարող գործել, քանի որ անգլիական կառավարությունը նրանց նկատմամբ կկիրառեր վերահսկողության մասին օրենքը և կարգելեր նրանց գործունեությունը: Այդ պատճառով վերոհիշյալ կազմակերպությունների ղեկավարները աշխատում էին ոչ միայն եռանդուն գործել, այլև տեղական աշխատակիցներից պահանջում էին պարբերական հաշվետվություններ՝ անգլիական փողերի ծախսման մասին:*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ**

---

33 Նույն տեղում, 1916 թ. մարտի 13, թիվ 16, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. մարտի 30, թիվ 71:

34 Նույն տեղում, 1916 թ. սեպտեմբերի 25, թիվ 44, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. նոյեմբերի 20, թիվ 261:

35 «Աշխատանք», 1917 թ. հունիսի 3, թիվ 10:

36 «Համբավաբեր», 1916 թ. ապրիլի 24, թիվ 17:

37 Նույն տեղում, 1915 թ. դեկտեմբերի 20, թիվ 1:

38 «Վան-Տոսպ», 1916 թ. մայիսի 15, թիվ 25:

39 Նույն տեղում, 1916 թ. սեպտ. 25, թիվ 44, նաև՝ «Հորիզոն», 1916 թ. սեպտ. 22, թ. 24:



# ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՓ*

*«Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս.*
*զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ.*
*զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան յորժամ*
*հաւատացաքն. գիշերն մերձեցաւ, եւ տիւն*
*մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետեւ*
*զգործսն խաւարի, եւ զգեցցուք զզէնն լուսոյ»:*

Գաղթական վանեցիների վերագտած և վերախմբված փոքրիկ գերդաստանը, Մարկոս աղայի առաջնորդությամբ, վերադարձավ Ս. Սարգիս եկեղեցուց: Նրանք ներկա էին եղել սուրբ պատարագի հոգեպարար ողջ արարողությանը և այնուհետև ստացել Սուրբ Հաղորդություն՝ դրանով իսկ հաղորդակից լինելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի ամենազոր ու սրբազնասուրբ մարմնի և արյան անմահ խորհրդին: Նրանք սուրբ պատարագի ողջ ընթացքում, լուռ կամ շշուկով, հայցել էին Երկնավոր Տիրոջ անսահման, անեզրական և բոլորաշնորհ գթասրտությունը՝ խաղաղություն շնորհելու իրենց մահկանացու խռովյալ հոգիներին և հավիտենական հանգստություն՝ արհավիրքի ճանապարհին զոհ գնացած անմեղ նահատակների թաղյալ և անթաղ աճյուններին:

Երբ նրանք մտան Ջառաբի-Խան, իրենց հանդիպող բոլոր ծանոթ-անծանոթ ջառաբիխանցիներին ողջունում էին՝

– Ողորմի՛ Աստված:

– Ողորմի՛ անցավորաց, – լինում էր պատասխանը:

Այսպիսի ողջունակերպը խորհրդանշում էր պարզ քրիստոնեական մի վարվելակերպի, ըստ որի՝ ողջույն տվողը վերադառնում է եկեղեցուց՝ մաքրագործված և սրբագործված Սուրբ Հոգու զորությամբ: Այդ իսկ պատճառով էլ Մարկոս աղայի գլխավորած հավատացյալների խումբը ներքին գոհունակությամբ ու բարեհամբույր կերպով էր ողջունում իրեն հանդիպողին:

Համարյա հասնելով Ջառաբի-Խանի բակի կենտրոնական մաս, հանկարծ Մարկոս աղան, շրջվելով դեպի իր ուղեկիցները, բարձրաձայն ասաց.

---

* Երրորդ մասը տես 1995 թ. №№ Ժ-ԺԱ-ԺԲ, էջ 154:

– Փոլորիդ կհրավիրեմ մեր տուն, հրամեցե՛ք, – մատնացույց անելով Ջառաքի-Խանի իր տունը:

– Վեր մեր աչքին, վեր մեր կլլխուն, – ամուսնու միտքը լրացրեց Ջարուհի-Ջարուխը, – փոլորդ մեր թանկագին հյուրն եք:

– Կխասկնա՞ս, ինչ ի կասես, ախչի՛, – հանդիմանական տոնով կնոջը դիմեց Մարկոս աղան, – իտոնք հյուր չե՛ն, իտոնք և մենք մե՛կ ընտանիք ենք, մե՛կ քերթաստան:

Այս խոսքից հետո բոլորը, սիրով ընդունելով Մարկոս աղայի հրավերը, իրենց քայլերն ուղղեցին դեպի նրանց տուն:

Այն բնակարանը, որտեղ իրենց բնակության վերջին օրերն էին ապրում Մարկոս աղան և իր կինը, բաղկացած էր երկու մասից. շուրջ 6 քմ մակերեսով նախասրահ, որտեղ տեղադրված էին՝ հանդերձակախիչ, ոտնամանների փոքրիկ պահարան, աջ պատի ծխնելուզավոր խոռոչի մեջ՝ մեկ նավթավառ: Նախասրահում կային նաև մեկ լվացարան, որին կից կախված էին երկու երեսսրբիչներ, և ջրով լիքը մեկ դույլ՝ դրված աթոռի վրա: Նախասրահին հաջորդում էր մի մեծ սենյակ՝ շուրջ 25 քմ մակերեսով, որը դրսից պատուհան չուներ և լուսավորությունն ստանում էր նախասրահից ներս թափանցող լույսից: Մեծ սենյակում տեղադրված էին մեկ հանդերձապահարան, մեկ ծավալուն փայտյա մահճակալ՝ իր բեհեզյա նուրբ և ճաշակավոր ասեղնագործված զարդանախշավոր ծածկոցով, որից անմիջապես կկռահեիր, որ նրա տակ ամփոփված է նույնքան չքնաղ և ընտիր անկողին: Սենյակում կային նաև հարուստ փորագրություններով փայտյա մի թախտ, որի վրա գցված էր ընտիր գորգ: Թախտի եզրերին դրված էին երկու հենակ-բարձեր՝ գույնզգույն թելերից ճաշակավոր գործվածքով պատված: Կային նաև մեկ մեծ սեղան՝ նույնպես հարուստ փորագրություններով, վրան գցված ճոխ սփռոց, վեց աթոռներ և մեկ մթերապահարան: Սենյակն աչքի էր ընկնում իր ճաշակավոր դասավորվածությամբ:

Երբ բոլորը ներս մտան, Մարկոս աղան դիմեց կնոջը.

– Ախչի Ջարուխ, քեզ տիսնամ, տե՛ս, ինչ ի կանես:

Բոլորը հասկացան, որ Մարկոս աղան ճաշի կարգադրություն արեց: Կրկին կանայք վեր կացան, և սկսվեց ճաշի պատրաստությունները, ճաշ, որը նույնիսկ այդ ծանր օրերին մեծ դժվարություն չէր ներկայացնում Մարկոս աղայի նման մարդու համար:

Ս. Սարգիս եկեղեցի գնալիս և վերադառնալիս Մարկոս աղան և իր կինն արդեն հասցրել էին որոշ տեղեկություններ ստանալ վերջին երկու ամիսների ընթացքում նորեկների գլխին եկած դառնաղետ դեպքերի և նրանց ներկա վիճակի մասին: Բայց նրանք շատ լավ հասկանում էին նաև, որ այսպիսի ահավոր և ողբալի վիճակի մեջ են գտնվում ոչ միայն սրանք, իրենց ազգակից այս նորեկները, այլև համարյա ողջ հայ ժողովուրդը:

Տեղավորվելուց հետո, մի քանի րոպե քար լռություն տիրեց: Այնուհետև լռությունը խզեց Մարկոս աղան.

– Մի՞թե հայ ժողովուրդ խոր էր արժանի: Գթա՛ մեզ, Տեր, Երկնավոր Արարիչ, – ասաց նա:

– Աստուծո կամք անքննելի ի, Աստված անսխալական ի, Էնի կիտի Ուր անելիք, – նախասրահից ամուսնու խոսքի վրա եկավ Զարուհի-Զարուխը:

Քիչ հետո ներկաների առջև բացվեց մի՝ համեմատաբար նոխ սեղան: Սեղանին դրված էին հավի միս, ձուկ, կարմիր լոբի, պանիր, Վանա ժաժիկ, լավաշ հաց, տարբեր կանաչեղեն, երկու սափոր գինի և ջրամանով օշարակ ու այլ ուտեստեղեն:

Երբ կանայք ճաշի պատրաստությունն արդեն տեսել-վերջացրել էին, բոլորը՝ տղամարդ, կին, երեխա, սեղան նստեցին: Այնուհետև Մարկոս աղան ոտքի կանգնեց, որին հետևեցին բոլորն անխտիր: Երբ բոլորն արդեն ոտքի էին, համատեղ արտասանեցին «Հայր մեր»-ը, որից հետո, օգտվելով իր ավագությունից և տանտիրոջ իրավունքից, սեղանն օրհնեց Մարկոս աղան.

– «Օրհնեա՛լ ես, Տէր Աստուած մեր, որ կերակրես զմեզ ի մանկութենէ. եւ տաս կերակուր ամենայն մսեղեաց. լցո ուրախութեամբ եւ բերկրութեամբ զսիրտս մեր. որպէս զի զամենայն բաւականութիւն ունիցիմք առաւելեալք ի գործս բարութեան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որում վայել է փա՛ռք. իշխանութի՛ւն եւ պատի՛ւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Սեղանն օրհնելուց հետո, բոլորը նստեցին՝ բացի Մարկոս աղայից: Վերջինս, վերցնելով գինով լիքը բաժակը, սկսեց խոսել.

– Արտասանեցինք «Հայր մեր», օրհնեցինք սեղան: Փոլոր էս արարողություն պատշաճ էր և տեղին: Մկա մենք իրավունք ունենք ճաշակվելու: Համաձայն եմ խետ ձե: Փայց ես մեջ պան պակաս կհամարեմ և ոչ պատշաճ: Ես կուզեմ, փացառության կարքով, փաժակ փարցրացնել և հայցել էն հանգուցյալներու թողտվություն, որոնք ընկան քախթի ճամխին: Կուզեմ խնդրել նաև մեր հանգուցյալ մեծերու թողտվություն, որոնց ես կհամարեմ ներկա մեր էս համեստ սեղանին, որոնք իրենց ողջ կյանք նվիրաբերել են՝ ի բարօրություն, ի բարքավաճում և ի ծաղկում իրենց թողած օջախներու, որոնց հետնորդներն ենք մենք, և որդիաբար ու խոնարհաբար պիտի հիշենք ինոնց: Աստվածաստեղծ մարդ-էակ փախկացած ի էրկու կործոնից՝ մարմին և խոկի: Մարմին մարդկային ի, հետևափար՝ մահկանացու, իսկ խոկին աստվածային ի, անմահ: Ինոնց մարմիններ կնքիր են ուրանց մահկանացուն, իսկ խոկին քյանի որ անմահ ի, ես համոզված եմ, որ ինոնք մկա կշրջեն էս սենյակի մեջ, մեր էս սեղանի շուրջ: Ինկեք փոլորս միասին խնդրենք ինոնց թողտվություն՝ սկսելու մեր էս համեստ ճաշակման արարողություն:

Բոլորը ոտքի կանգնեցին ու, ի հավանություն և ի համաձայնություն նրա առաջարկի, «Կեցցես, Մարկոս աղա» ասելով, խմեցին առաջարկված այս սուրբ կենացը: Փոքրերն, իհարկե, օգտվեցին օշարակից:

Սեղանակից ներկաներից բոլորն էլ համարյա բարձր տրամադրության մեջ էին, որովհետև նրանք կարծես աստիճանաբար վերագտնում էին

իրենց թվացյալ կորցրած վաղեմի կյանքը: Երեխաների մասին խոսելն ավելորդ է, քանի որ նրանք բարձր տրամադրության մեջ էին. անընդհատ ասում էին, խոսում, ծիծաղում:

Փոքրիկ Վազգենի մոտ հիվանդության նշույլ անգամ չէր նկատվում:

Ճաշի ընթացքում բոլորը տաք-տաք զրուցում էին, խոսում իրենց ցավերի, հոգսերի և հետագա ծրագրերի մասին, եթե, իհարկե, այդ բոլորը հնարավոր լինեին իրականացնել, որովհետև այդ բոլորը միայն կիրականանար խաղաղ օրերին, իսկ Երկիրն այժմ խառնակ վիճակում էր:

Մինչև երկրորդ բաժակի բարձրացնելը բավականին ժամանակ էր անցել: Թվում էր, թե բոլորն արդեն համարյա հագեցրել են իրենց քաղցը: Սեղանի արարողության լռությունն ու ընդմիջումը կրկին խզեց Մարկոս աղան: Նա վեր կացավ տեղից, վերցրեց գինով լիքը բաժակը և ասաց.

– Ես կենացներ չեմ առաջարկե: Ինձի կթվա, որ մենք մկա մեկ ընտանիք ենք: Պատշաճ արարողություն թողնենք մեկ ուրիշ անգամ, ուրիշ՝ ուրախության սեղանի շուրջ: Փայց ես մեկ կենաց չխմել չեմ կարող: Իկեք փոլորս միասին խմենք մեր ժողովրդի, մեր բազմատառապյալ հայ ժողովրդի կենաց: Կմաղթեմ, որ Ամենակարող Աստուծո օգնականությամբ էնի շատ շուտով ծունկի եկած տեղեն ոտի կայնի և շարունակի իր արժանավայել քայլք աշխարքի մեկել ժողովուրդներուն համընթ[illegible]: Էս փաժակով կմաղթեմ նաև, որ էնի շատ կարճ ժամանակընթացքին փարատի իր մոլորյալ մտքեր, ամոքի և բուժի իր ցավեր և հոգսեր:

Բոլորը կրկին ոտքի կանգնեցին և հավանության արտահայտություններով խմեցին Մարկոս աղայի առաջարկած կենացը:

Երեխաներն արդեն կերել-վերջացրել էին, և Նանիկը նրանց առաջարկեց դուրս գնալ խաղալու:

Քանի որ ճաշի սեղանի շուրջ նստածներն արդեն մի քանի բաժակ ոգելից ըմպելիք էին խմել, քիչ թե շատ գինովցել, ապա նրանց զրույցն աստիճանաբար սկսեց կրել ավելի ջերմ և սրտամոտ բնույթ: Նրանց գլխուղեղի արգելակման կենտրոնն աստիճանաբար տեղի էր տալիս հախուռն զգացմունքների պոռթկմանը: Կանայք թեև քիչ էին խմել, բայց նրանց մոտ առավել էր զգացվում ոգելից խմիչքի ազդեցությունը, քանի որ նրանց կանացիական քնքշությունը և ամիսների ընթացքում կրած տառապանքն ու սովը իրեն զգացնել էր տալիս: Նրանց զրույցն ավելի հուզախառն էր և արտասվախառն: Հատկապես իրեն չէր կարողանում հավասարակշիռ պահել Զարուհի-Զարոն, քանի որ միշտ հիշատակում էր կորցրած իր երկու զավակներին: Իսկ Զարուհի-Զարուփը կարծես դարձել էր մի ամոքիչ բալասան բոլոր կանանց համար, որովհետև նա նախ բոլորից ավագն էր և չափազանց հավասարակշիռը կանանց միջև տվյալ հոգեխռով պահին, և երկրորդ, որ նա տանտիրուհին էր և պարտավորված էր հոգ տանել բոլորի նկատմամբ:

Ճաշի սեղանի շուրջ հավաքվածների միջև զրույցն ավելի բորբոքվեց այն պահին, երբ նրանց զրույցն աստիճանաբար մոտեցավ իրենց հուզող ամենանուրբ ու ամենախոցելի կետին... Երկիր, Վան, իրենց օջախները, իրենց

պրած երանելի տարիները: Կրկին գաղթի ճանապարհից սրտակեղեք դեպքեր պատմեցին, ա՜խ ու վա՜խ արեցին...

Այս աղեխարշ մթնոլորտին վերջակետ դնելու համար Մարկոս աղան միտումնավոր կերպով շեղեց զրույցի բնույթը և դիմեց Զադոյին.

- Տղա Զադո, տու կիշերներ համարյա տուն չես մնա, մութ-լուսու սելով ո՞ւր ի կերթաս:

-Կիշերներ սելով վաճառականներու ապրանքներ կտեղափոխեմ շուկա՝ Մարանդիզի Ավետիսի խետ: Չէ՞ որ էնի փայտոն ունի: Էնի վաճառականներուն կտեղափոխի, իսկ ես՝ շուկայի ապրանքներ, մթերք:

- Իսկ որտեղի՞ց ի, որ կտեղափոխեք, - հարցը շարունակեց Մարկոս աղան:

- Մոտիկ գյուղերեն, - պատասխանեց Զադոն:

Մարանդիզի Ավետիսի ընտանիքը Մարկոս աղայենց տանը կից էր բնակվում, Ջառաբի-Խանի հյուսիս-արևմտյան մասի վերջին բնակարանում: Նրանք նույնպես վերջերս էին գաղթել Վանից: Նրա ընտանիքը բաղկացած էր չորս շնչից. ինքը և իր երեք մանկահասակ աղջիկները՝ 7 տարեկան Արուսյակը, 5 տարեկան Եղյաքսյան և 3 տարին դեռևս չբոլորած Աղավնին: Մարանդիզի Ավետիսը նույնպես ճարպիկ մարդ էր, գործունյա, համարձակ և չափազանց խելացի ու խորամանկ: Կինը գաղթի ճանապարհին համաճարակի զոհ էր դարձել: Երեք մանկահասակ աղջիկների խնամքը մնացել էր հոր վրա: Բայց հարևան ընտանիքները անսահման հոգատար վերաբերմունք էին ցուցաբերում նրա երեխաների նկատմամբ, ամեն կերպ ձգտում սատար կանգնել նրանց:

Մարանդիզի Ավետիսի բնակարանը ավելի հարմարավետ էր. ուներ շուրջ 30 քմ նախասրահ, որը ծառայում էր որպես մթերանոց և ձիերի համար՝ ախոռ: Այդ սրահին կից, աջ կողմում, գտնվում էր երկրորդ սենյակը, համարյա նույնքան ծավալով, բայց միայն մի տարբերությամբ, որ երկրորդ սենյակի հատակը շուրջ կես մետր բարձր էր առաջին սրահից: Այստեղ էլ հենց բնակվում էին նրանք: Առաջին սրահն ուներ մի մեծ փայտյա դարպաս, իսկ երկրորդ սենյակը՝ մի մեծ և լուսավոր պատուհան:

- Ուրեմն կասես՝ մոտիկ գյուղերե՞ն, - ինքնաբերաբար, կարծես միայն ասելու համար արտաբերեց Մարկոս աղան՝ դրանով իսկ ներքին կասկածանքն արտահայտելով Զադոյի պատասխանի համոզչությանը:

Մի քանի անգամ գինով սափորները թարմացվեցին: Սեղանի շուրջ նստողներն արդեն գինովցել էին: Կանայք, ինչպես ուրախ կամ տխուր առիթներով, կամաց-կամաց քաշվեցին սենյակի մի անկյուն և սկսեցին ցածրաձայն զրուցել, իսկ տղամարդիկ մնացին իրենց տեղերում: Գրիգորն ու Վարդանը, մարմնապես խիստ թուլացած լինելով շուրջ երկու ամիս տևած գաղթի ճանապարհին կրած իրենց զրկանքներից և չարաչար տանջանքներից, չդիմացան գինու ազդեցությանը: Ընդարմացած ու միաժամանակ նաև խորասուզված իրենց մտատանջող հուշերում, նրանք համարյա չէին խոսում: Իսկ կանանց զրույցն արդեն լիարժեք կերպով մտել էր հունի մեջ:

– Զարուխ, իմ մեծ քույր, ճիշտ ի, Աստված գրկիր ի ձե կյանքի մեյ մե՛ծ երջանկութենե, և ցավով կհամարձակվեմ ասել էտ մասին, որ դուք էրեխա չունեք: Փայց դուք ինչի՞ մինչև մկա էրեխա չեք վերցնե, չէ՞ որ ձեր օջախ...

– Սաթեն, իմ քույր, – նրա խոսքը կտրեց Զարուհի-Զարուխը, – շատեր անտեր էրեխա են պիրե, շախե, պախե, մեծացրե, փայց ի՞նչի են խասե... Արթյու՛նք... Չափահաս տառնալուց հետո թողիր են ու հեռացե՛ մոռանալով էն ամագ, որ վեր ինոնց թափիր են էտ «խորթ» ծնողներ: Մենք Մարկոսի խետ շա՛տ ենք խոսե էտ մասին: Անցավ կյլոխներս չտնենք ավելորդ ցավու տակ:

– Մի՛ մոռնա, որ հարազատներու մեջ էլ էտ տեսակ թեփքեր շա՛տ ու շատ կան, – իր խոսքը պնդեց Սաթենիկը:

– Ես էլ Սաթենի կարծիքին եմ, Զարուխ, – ասաց Նանիկը, – ծերանա՛լ կա, մեռնե՛լ կա, ապա մեկ չէլնի՞, որ օր ծերության քյոմակ կայնի ձե:

– Աստված մեծ ի, մեյ տուռ կպանա, – կարծես արդարանալու և իրեն հանգստացնելու ու վերջ դնելու համար այս բնույթի զրույցին ասաց Զարուհի-Զարուխը:

Տղամարդկանց խոսակցությունը գնում էր արդեն հիմնականում իրենց հետագա ծրագրերի և անելիքների մասին: Տարասեռ խմբերի ջերմ ու սրտամոտ զրույցն անընդհատ կշարունակվեր, եթե կրկին Մարկոս աղան չմիջամտեր.

– Իմ հարազատներ, իմ քույրեր, իմ ախպերներ, ամեն անգամ կասեմ կենացներ չեմ խմե, փայց հետո սխալ տուս կուկյամ: Փոլորտ մոտեցեք սեղանին, – առաջարկությունն ուղղված էր կանանց, որովհետև տղամարդիկ չէին հեռացել սեղանից: – Ես կառաջարկեմ խմել Քիրիքյորի և Վարդանի, ինոնց ընտանիքներու կենաց: Քիրիքյոր, Վարդան, Սաթեն, Զարեր, կխմեմ ձեր կենաց: Ավելի քյան մեյ տարի ի, ինչ մենք՝ ես և Զարուխ, հեռացիր ենք Վանեն: Նույնքյան ժամանակ ի, ինչ մենք չենք տեսնվե ձեզ խետ: Անսահման ուրախ եմ կրկին հանդիպելու համար: Սակայն ի խորոց սրտի կցավեմ, որ ձեզ էս վիճակին կտիսնամ: Ես ամենաանկեղծ սրտով ձեզ կհամարեմ իմ հարազատներ, իմ էրեխեք, իմ փոքր քույր ու ախպեր: Էս վերջին էրկու ամիս տուք շա՛տ եք տառապե, ականատես եք էլե շա՛տ ու շատ զարհուրելի տեսարաններու... կոտորա՛ծ, մա՛հ... Ամենակարող Աստուծո զորությամբ կարողացիր եք մի կերպ մազապուրծ փրկվել, փայց ցավալի ի, որ... մեծագույն և թանկագին կորուստներով: Թող խաղաղություն էլնի ինոնց անմեղ խոկիներուն: Շատեր կասեն՝ «Ինոնք կնացին հախ, մենք մնացինք նհախ»: Ճիշտ չի՛, շատ սխա՛լ ի, էտ խոսք անկարող մարդու սրտի սփոփանք ի: Տուք փոլորդ երիտասարդ եք: Հայ ժողովուրդ շա՛տ կարիք ունի ձե: Տուք պիտի «աճեք և փազմանաք», ինչպես Ադամին և Եվային ասաց Աստված: Տուք մկա նո՛ր ծնվիր եք, ձեր կյանք ապագան ի: Մի՛ հուսահատվեք և մի՛ ընկեք հոռետեսության կիրկ: Ներկա էս խառնակ իրավիճակեն մի՛ պայմանավորեք ձեր կյանք: Ճրաղացի քար միշտ կպտտվի: Փայց կպատահի, որ կխափանվի

ինոր աշխատանք. ճուր կկտրվի, քար կմտնի ինոր արանք... Սակայն խոնք փոքր ժամանակավոր խափանումներ են, արգելքներ: Կանցնեն էտ փոքր արգելքներ, և էնի կշարունակի նորից պտտվել, կպտտվի և հավերժական կյանք կուտա մեզ: Ի՞նչ ի կառաջարկեմ: Կառաջարկեմ, որ տուք էլ ձեր պտուղներ տաք, որպեսզի մեր ժողովուրդ քոյատնի հավերժ: Որպես ձեր մեծ, որպես ձեր ախպեր թախանձագին կխնդրեմ՝ փարատեք ձեր փոքր մոլորյալ մտքեր և լիիրավ կերպով մտեք կյանքի հուն: Ես իմ հույս չեմ կտրե, մենք պիտի նորեն էթանք մեր Երկիր, մեր Վան... Ձեր կենաց, իմ թանկաքիններ:

Այնուհետև Մարկոս աղան տեղից դուրս եկավ՝ առանց բաժակը պարպելու, մոտեցավ և մեկ առ մեկ համբուրեց կենացատերերին, նորից գնաց իր տեղը, հուզումնախառն ըմպեց բաժակի պարունակությունը և նստեց:

Մի քանի սրտալի խոսքեր ասելով, այդ օրինակին հետևեցին Ջադոն, Մնացականը, Զարոխը և Նանիկը:

Երկար ժամանակ էր, ինչ հարազատների այս փոքրիկ գերդաստանն այսպես չէր հավաքվել միատեղ: Տղամարդիկ կատարյալ գինովցել էին: Բոլորից լուրջը Մարկոս աղան էր: Եվ ընդհանրապես նա իր ողջ կյանքում էր այդպիսին եղել:

Կերուխումի այդ թունդ պահին ներս վազեցին երեխաները: Նրանք բոլորը քրտնամխած էին: Վազգենն ուղղակի մոտեցավ և փաթաթվեց մորը:

- Մարե, խաց կուզեմ, - կամացուկ ասաց նա:

Այդպես արտահայտվեցին նաև մյուս երեխաները:

Սաթենիկը հուզմունքից և հատկապես ուրախությունից արտասվեց: Վերջապես Վազգենն ապաքինվել էր: Հուզմունքի պահ ապրեցին բոլորը, առավել ևս՝ Զարուհի-Զարեը և Մնացականը: Առաջինն սկսեց հեկեկալ, իսկ երկրորդի աչքերին նշմարելի էր արցունքի կաթիլները:

- Լաճերուն կերակրեք, - ասաց Մարկոս աղան, - նրանք մկա քաղցած են:

Դրանով Մարկոս աղան ցանկացավ ցրել ծնողների մտասևեռուն հուզմունքը:

Երեխաները կրկին ճաշի նստեցին, իսկ Նանիկը, նկատելով ամուսնու հոգնած ու անքուն տեսքը, դիմեց նրան.

- Ջադո, էլի էթանք տուն, մի քիչ հանգստացի, էս կիշեր տու համարյա չես քնե:

- Մենք միասին իկիր ենք, միասին էլ կեթանք, - կարճ և կտրուկ եղավ Ջադոյի պատասխանը:

Քանի որ օրն աշուն էր, կամաց-կամաց սկսեց մթնել:

Մարկոս աղան նորից վեր կացավ տեղից, վերցրեց գինով լիքը բաժակը և ասաց.

- Իմ հարազատներ, կուզեմ մեյ պան էլ ասեմ: Կենաց չեմ առաջարկե: Քավ լիցի: Կուզեմ խոսք ասեմ՝ ուղղված մեր նորեկներուն: Իմ ախպերներ՝ Քիրիքյոր, Վարդան, իմ քյուրեր՝ Սաթեն, Զարեր, մենք՝ ես և Զարուխ, էսօր ձեր հյուրն ենք...

– Ի՞նչ ի կասես, Մարկոս աղա, էտա մենք ենք ձեր հյուր, – Մարկոս աղայի խոսքը կտրելով, վրա բերեց Գրիգորը:

– Խոսքս մի՛ կտրե, Գիրիգյոր, իմ ախպեր: Կասեմ և չեմ սխալվի: Էսօր մենք ձեր հյուրն ենք: Վաղ մենք կերթանք մեր նոր տուն: Տուք էսօրվանե էս տան տերն եք: Ինչ կա՛-չկա փոլոր կթողնենք ձե: Մենք կառնենք մենակ մեր խալավներ:

Այս անսպասելի առաջարկից Գրիգորն ու Վարդանը, անակնկալի եկած, վեր կացան տեղներից, մոտեցան Մարկոս աղային և ցանկացան խոնարհվել ու համբուրել նրա ձեռքը: Վերջինս քրիստոնեական վայելչությամբ կանխեց նրանց այդ անսպասելի երախտագիտական վարմունքը: Ճիշտ է, Մարկոս աղան առավոտյան, նախքան Սուրբ Սարգիս եկեղեցի գնալը, արդեն այդ մասին ակնարկել էր, բայց այդպիսի անսպասելի, քրիստոսապատգամ առաջարկից՝ իրենց թողնել տունն իր ողջ կահավորանքով, անակնկալի եկան, համրացան, ոչինչ չկարողացան ասել:

– Գյանի որ տուք շատվոր եք, ձեզ անհրաժեշտ ի մի անկյուն: Էս պահեն էս տուն ուր ամեն ինչով համարեք ձեր սեփական, – իր միտքը վերջացրեց Մարկոս աղան:

– Փառ՛վո, Մարկոս աղա, – իր ներքին գնծությունն արտահայտեց Մարկոս աղայի կինը՝ Զարուհի-Զարուխը:

Տղամարդկանց շրջանում ամենասթափը և ամենահավասարակշիռն այս պահին Զադոն էր: Նա վեր կացավ տեղից և գոհունակությամբ ասաց.

– Մարկոս աղա, տու երկնքեն ես իջե, տու մեր աստվածն ես:

Անտեղի չէր Զադոյի այս փառաբանական խոսքը, որովհետև Զառաբի-Խանի նրանց տունը նույնպես Մարկոս աղան էր գնել և նվիրել նրանց: Զադոն այս կերպ արտահայտում էր նաև իր շնորհակալությունը: Կանայք փաթաթվեցին միմյանց, կրկին հուզվեցին, բայց այս անգամ արդեն՝ ուրախությունից:

– Ես էսօր աշխրքի ամենաերջանիկ մարդն եմ, որ ձեզ ողջ և առողջ կտիսնամ, միասին՝ փրկված արհավիրքեն:

Մարկոս աղայի կինը, չկարողանալով զսպել իրեն, մոտեցավ և համբուրեց ամուսնուն՝ ի նշան նրա չափազանց մարդասիրական վերաբերմունքի: Թեև Մարկոս աղայի մոտ առերես չէին նկատվում հոգու խռովք կամ հուզմունք, բայց նրա ձեռքի գինով լիքը բաժակի ցնցումները հաստատումն էր հակառակի:

Երբ այս պահն անցավ, և բոլորը խաղաղվեցին, Մարկոս աղան ուղղակի դիմեց Գրիգորին և Վարդանին.

– Շատ հետաքրքիր ի, իսկ ապրուստի միջոց ունե՞ք:

Գրիգորն անմիջապես ցույց տվեց իր մեջքի գոտին, որի մեջ պահված էին իր խնայած ոսկիները՝ նեղ օրվա համար: Նույն կերպ վարվեց նաև Վարդանը, որը նույնպես իր խնայած ոսկիները պահել էր իր գոտկատեղին:

- Չեմ կիտի, ի՞նչպես մեր շնորհակալություն հայտնեմ, - գլուխը խոնարհելով դեպի Մարկոս աղան, ասաց Գրիգորը: - Ճիշտ ասաց Ջադոն, տու իսկապես մեր աստվածն ես:

Կրկին տարօրինակ ձևով այս բոլոր ընթացքում Մնացականը համարյա լուռ էր: Հավանաբար նա չէր կարողանում փարատել իրեն մտատանջող հուշերը:

- Տղա Մնո, տու նորից կշարունակես լուռ մնալ, չես խոսի, արդեն կպարկացնես մեզ, - փաղաքշական տոնով ասաց Ջադոն:

- Խա, ճիշտ ի կասի Ջադոն, տու չես նմանվի մեր Սաֆոյի Մնոյին, որ ժամանակին կխոսեր, կերքեր, - ի հաստատումն Ջադոյի խոսքի, ասաց Մարկոս աղան: - Էսօրվանե մենք մեր անցյալ համարենք անցած-կնացած, մոռանանք հուշեր՝ տառը կամ քաղցր: Մկա մենք մենակ պիտի մտածենք մեր առօրյայի և ապաքայի մասին:

Վանեցիների այս փոքրիկ գերդաստանը երկար արթուն մնաց, մինչև ուշ գիշեր: Չէ՞ որ նրանց զրույցի թեման անսպառ էր: Երեխաներին վաղուց արդեն Նանիկը տարել էր տուն և քնացրել՝ բացի Վազգենից: Վերջինս քնել էր Մարկոս աղայենց տանը:

Մթնոլորտից զգացվում էր, որ մեծերը դեռևս քնելու միտք չունեն: Նրանք դեռևս երկար ժամեր կանցկացնեն սեղանի շուրջ:

Երբ լույսը բացվեց, վաղ առավոտից սկսած նորեկ գաղթականներին տեսակցության եկան Ջառաքի-Խանի նրանց ծանոթ և անծանոթ հարևանները:

**ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԱԼԻՇԱՆԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՐՆԵՐՈՒՄ

Դանիել Վարուժանը, բնորոշելով Ալիշանին, գրում էր, թե «Ան բանաստեղծ էր, որ գիտություն կըներ»: Այսինքն գիտությանն իսկ նա նայում էր բանաստեղծի հայացքով, հայոց պատմության և մատենագրության խնդիրները գիտական քննության նյութ դարձնելուց բացի՝ ենթարկելով նաև հոգևոր վերիմաստավորման: Ալիշանը սակայն ոչ միայն գիտությանն էր բանաստեղծի հայացքով նայում, այլև իր գիտական աշխատանքներով արձագանքում էր անցյալ դարի 70–80-ական թթ. հայ գրականության առաջադրած խնդիրներին, որն առավել նկատելի է հատկապես տեղագրական հատորներում, մինչ որոնց անցնելը դեռևս 1853 թ. «Քաղաքական աշխարհագրությանը» կից նախ հրատարակում է «Տեղագիր Հայոց Մեծացը»:

Գրքի համար բնաբան են ընտրված Սամվել Սկևռացու հետևյալ տողերը. «Հայրենի և պարծելի բնիկ հայկազանց աշխարհն, տունն Արևելից, որ առաջին է մասն և գլուխ օրինակ իմն բոլոր աշխարհի... յորում դադարեալ տապանն Նոյի և բացեալ՝ անտի դարձեալ սերեցաւ մարդկային զարմ»: Ալիշանը միայն որպես Հայաստանը պանծացնող մի վկայություն չի ընտրել այս հատվածը, այլ այն նրա գիտական մեթոդաբանությունը և պատմահայեցողությունը պայմանավորող աշխարհայացքն էր՝ ձևավորված մխիթարյան միջավայրում, ուր որոշակի համակարգման ենթարկվեց դարերի ընթացքում հայ պատմագրության կողմից նվիրագործված և սրբագործված այն ըմբռնումը, թե դրախտը Հայաստանում է գտնվել և այնտեղից է կյանքը սկզբնավորվել ու երկրորդ անգամ նորից նորոգվել ջրհեղեղից հետո: Մխիթար աբբահոր մասնակցությամբ կազմված «Բառգիրք Հայկազեան լեզուի» 2-րդ հատորում դրախտի մասին ասվում է. «Եդեմն ասի այն գաւառն հայոց, որ այժմ Կորդուաց աշխարհ կոչի»: Այս միտքը գրքից գիրք էր փոխանցվում մխիթարյան աշխարհագրություններում և պատմություններում՝ հայ ժողովրդի պատմության սկիզբը նույնացնելով մարդու ստեղծմամբ սկզբնավորված համաշխարհային պատմության հետ: Ինչպես Ղուկաս Ինճիճյանն էր գրում «Պատմութիւն առաջին բնակութեան Հայաստանեայց սկսանի յառաջին բնակութենէ համօրէն մարդկային ազգի»[1]:

Միջնադարյան մատենագրական վկայությունների վրա խարսխված այս տեսությունը համապատասխան թվային հաշվարկներով որոշակի տարածաժամանակագրական համակարգի մեջ դրեց Միքայել Չամչյանը՝ առաջնորդվելով «Ծննդոց Գրքի» և ազգային մատենագրության տվյալների

---

[1] Ղուկաս Ինճիճյան, Հնախօսութիւն, աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. Ա, Վենետիկ, 1835, էջ 244:

համադրմամբ: «Դրախտ Հայաստանի» անվանված և ազգային յուրօրինակ գաղափարաբանության վերածված հիշյալ ըմբռնումը աշխարհասփյուռ հայության մի քանի սերունդների ներարկեց այն գաղափարը, որ հայ ժողովուրդը մի առաքելություն ունի՝ վերաշինելու, վերատիրելու իր հայրենիքին՝ նորոգյալ աստվածատունկ դրախտին:

Այս տեսությունը թե՛ որպես գիտական համակարգ և թե՛ որպես ազգային գաղափարաբանություն ավարտուն մի ամբողջության հասցրեց Ղևոնդ Ալիշանը: Հակոբ Օշականի բնորոշմամբ՝ «Մխիթարյան մտայնությունը ոչ ոքի մոտ այդքան պայծառ է մարմնացած, որքան ճիղճ մարմնով, բայց շքեղ հոգիով այն աբբային վրա, որուն անունն է Ալիշան»[2]: Միաժամանակ, ի տարբերություն իր նախորդների, որպես հավաստումն դրախտի Հայաստանում գտնվելուն, նա չբավականացավ միայն Աստվածաշնչի և ընդհանրական եկեղեցու հայրերի խոսքերի վկայակոչմամբ, այլև դիմեց ժամանակի բնագիտության՝ երկրաբանության, բուսաբանության, հնէաբանության և մյուս գիտակարգերի ընձեռած տվյալներին:

Համանման փորձեր ձեռնարկել էին նաև մխիթարյանները՝ Մխիթար Սեբաստացուց մինչև Ղուկաս Ինճիճյան, սակայն այն հանգում էր մատենագրական տարբեր աղբյուրների վկայակոչմամբ դրախտի հետ կապվածությունը Հայաստանի բնական գեղեցկությամբ և հարստությամբ հավաստելուն: Այսպես, Մխիթար Սեբաստացին գրում է, թե դրախտը Կորդվաց աշխարհում է գտնվել, որովհետև այնտեղից են բխում դրախտի չորս գետերը և այնտեղ է հավաքվում գազպեն, ինչպես նաև «վասն ազնուութեան և պտղաբերութեան գաւառիս այսորիկ և վասն բարեխառնութեան օդոյն և բարեյարմարութեան դրից տեղւոյն և գուարճութեան ասեն բազում բանս գովեստից»: Նույն կերպ Ղ. Ինճիճյանը «Յարմարութիւն դրից Հայաստան աշխարհիս» գլխում այդ հարմարությունը հանգեցնում է այն մտքին, որ Հայաստանում պետք է «տեսանել նշանս յարմարս իբր յաւերակաց անդի դրախտի մնացեալս»[3]:

Ալիշանը, սակայն, ինչպես ասացինք, իր տեսությունը խարսխում է նաև ժամանակի գիտության տվյալների վրա և հատկապես երկրաբանության, ջրհեղեղի Հայաստանում եղած լինելու առավել ցայտուն փաստեր վկայակոչելով երկրակազմական շերտերի հայաստանյան հատվածում: Ինչպես «Տեղագիր Հայոց Մեծացում» է գրում, «Տիեզերահռչակեալն ջրհեղեղն, անժխտական վկայութեամբ Գրոց Սրբոց ոչ ուրեք այնպէս քաջիկ հաստատի ողողեալ զերկիր, որպէս զՀայս»[4]: «Հուշիկների» առաջին հատորի «Բնախօսութիւն Հայաստանի» դրվագում էլ բաժին առ բաժին ներկայացնելով Հայաստանի բնագրությունը՝ միշտ էլ այս տեսությունը հաստատող մեկ ապացույց գտնում է և վերջում իբրև ընդհանրացում ասում «եղեմա հետքը գտնելու ապահովագույն ճամփան է Հայաստան»[5]:

---

2 Հակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հտ 2-րդ, Երուսաղեմ, 1853, էջ 174:

3 Ղուկաս Ինճիճյան, Հնախօսութիւն, էջ 269:

4 Ղևոնդ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 12:

5 Ղևոնդ Ալիշան, Հուշիկք հայրենյաց հայոց, հտ. Ա, Վենետիկ, 1869, էջ 70:

Աշխարհագրական գիտությունը հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերին ծառայեցնելու բնորոշ օրինակներից է 1881 թ. Վենետիկի աշխարհագրական երրորդ համաժողովը, որի մանրամասն նկարագրությունը գտնում ենք նույն թվականի «Բազմավեպի» էջերում: Հպարտությամբ նշելով, որ իրենք ևս գիտական ծանրակշիռ վաստակով են ներկայացել այս գիտաժողովին, հոդվածագիրը միաժամանակ ցավով գրում է, թե մյուս ժողովուրդների շարքում իրենց «... ուրիշ բան չէր պակսեր, բայց եթե դրոշ մը միայն»[6]: Հայոց պետականության վերականգնումը իրենց գիտաստեղծագործական նվիրումի անկյունաքարը դարձրած մխիթարյանները իրենց հատկացված սրահի ճակատին բարձրացրել էին «ի պատկերի մեղամաղձիկ ավերակ մը, վասն զի ստուգիվ այս է մեր Հայրենյաց և հիմակվան ներկայացուցիչ նշանն, վրան եվրոպական գիրով Հայաստան և Մխիթարյանք գրած»[7]: Այս նույն ժողովում հայկական աշխարհագրագիտության պատմությունը հանգամանալից կերպով եվրոպական գիտնականներին ներկայացնող Ալիշանն իր խոսքը վերջացնում է այն նախազգուշացմամբ, որ եթե Հայաստանի ներկա կացությունը չփոխվի, «շատ չերթար որ փոխանակ հայկական աշխարհագրության Ավերագրության մը պետք ըլլա»: Նման ավերագրության արդեն առկա մարմնացումը և տխուր օրինակը Ալիշանի համար Անին էր:

Նրա տեղագրական շարքը սկսվեց այս նույն թվականին հրատարակված «Շիրակով», որին նախապատվությունը տալը Հայաստանի մյուս նահանգների և գավառների շարքում դարձյալ պայմանավորված էր պատմական և գրական ավանդույթով: Ինչպես ինքն էր գրում առաջաբանում, առաջինը ընտրում է «Շիրակ գաւառ Այրարատայ վասն բազմակերպ նոր և հին յիշատակաց իւրոց»[8]:

Այս աշխատանքում հայ միջնադարյան մատենագրությունը նրա համար ոչ միայն գեղարվեստական զուգահեռների ու համեմատությունների և խոսքը առավել պատկերավոր դարձնելու միջոց է, այլև տեղագրական բնագիտական սկզբնաղբյուր: Գրքի սկզբում Ախուրյանի մասին գրում է, թե «ջուրքն բարեհամք են և ձկնաշատ, զոր ծանուցանեն և Շիրակացւոյն Անանիայ թուաբանական հանելուկքն ինչ» (Շիր. 2): Յուրաքանչյուր վայրի պատմությունը սկսելով նրա մասին հայտնի ամենահին հիշատակությամբ, այն վկայակոչելիս էլ Ալիշանն աշխատում է ներկայացնել համապատասխան գեղարվեստական շարադրանքով: «Շիրակում» էլ առաջաբանից հետո բուն գավառին անցումը սկսում է հետևյալ տողերով. «Քաջայարմար առասպել Ծարայի առաջնորդէ մեզ ի պատմական ծանօթութիւն գաւառիս» (Շիր 2): Շիրակը տեղագրելիս առաջնորդվում է գավառի պատմական բաժանմամբ և բնական դիրքով ու ոչ թե ռուս-թուրքական պատերազմով առաջացած նրա մասնատվածությամբ: Քաղաքական վայրիվերումների և հայրենիքի ան-

---

[6] «Բազմավեպ», Վենետիկ, 1881, էջ 318:

[7] Նույն տեղում, էջ 319:

[8] Ղևոնդ Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ Ա (Այսուհետև տողատակը ծանոթաբեռնելու համար միևնույն հրատարակությունից իրար հաջորդող մեջբերումների տեղը կնշենք բերվող հատվածի վերջում՝ հրատարակության համառոտ անվանումը և էջը):

խախտ հավերժության պատկերն է նա ստեղծում հետևյալ այլաբանությամբ. «Կամայական սահմանք փոփոխեցան և փոփոխին, այլ յարափոփոխն ի բնէ ալեօք Ախուրեան՝ անփոփոխ անջրպետ կայ աստանօր անդնդախոր և անվկանդ յատակաւն, հանգոյն յուսոյ հայրենեաց ի խորութեան սրտի, զորոյ զվերին երեսս ծփեցուցանեն բաղդք բռնաբարողք» (Շիր. 6):

Այս տողերով մեր գրականության մեջ առաջիններից մեկը Ալիշանն է դիմում գետի՝ որպես հայրենիքի մշտատևության պատկերին, նրա բնական հատկանիշներում իսկ հոգևոր ինչ-ինչ ներքին խորհուրդներ գտնելով: Ըստ «Հայկազեան բառարանի» անվկանդ նշանակում է անխորտակելի, անընկճելի և անվանելի: Բերված տողերում այս բառերով Ալիշանը ցանկանում է ասել, թե բռնավոր բախտը միայն Ախուրյանի վերին երեսն է ալեկոծում, իսկ խորքում նա անայլայլ է և «անվկանդ» պահում է հայրենիքի հույսը:

«Շիրակի» մեծ մասը նվիրված է Անիին: Ավերակված քաղաքը ճնշող տպավորություն է թողել նաև եվրոպացի ուղեգրողների, ճանապարհորդների վրա: Ի տարբերություն, սակայն, հայ հեղինակների, որոնք քաղաքի ավերակների մեջ տեսել են երբեմնի անցյալ փառքը, օտարները, այդ փառքին նայելով ընդհանուր փիլիսոփայական տեսանկյունից, խորհել են մարդկային կյանքի և վայելչության ունայնության մասին: Ալիշանը բազմիցս վկայակոչում է նրանց խոսքերը որպես կենդանի նկարագրություններ քաղաքի նոր ժամանակի իրական վիճակի, համամարդկային շեշտ հաղորդելով անիական վշտին ու արժանահավատություն՝ իր խոսքին: Նաև օտարները նույն փիլիսոփայական, համամարդկային տեսանկյունից էին նայում քաղաքի հնարավոր վերականգնմանը, այն դիտելով որպես կյանքի նորոգության և հարության խորհրդանիշ: Անիի վերհառնումը, սակայն, Ալիշանի համար այլ խորհուրդ ուներ և այդ խորհուրդը գալիս էր դարերի խորքից:

Անին հայոց պետականության խորհրդանիշն են համարել և նրա կորուստը սգացել մեր մատենագիրները՝ Լաստիվերտցուց մինչև Շնորհալի և մինչ նոր շրջանի հեղինակները՝ Աբովյանից Վարուժան: Անիի անկումը չի դիտվել որպես անկումը մի քաղաքի, անգամ մայրաքաղաքի, այլ վերջը Բագրատունյաց փառքի: Ինչպես Մատթեոս Ուռհայեցին էր գրում. «Քաղաքի ամբողջ բնակչությունը հավաքվեց հայոց առաջին թագավորների գերեզմանոցում և այնտեղ ողբաց հայ ժողովրդի անտերունչ դառնալը... խարխլվեց ու փուլ եկավ Բագրատունյաց տոհմի տերությունը»[9]:

Անիի մասին Ալիշանը գրել է նաև «Շիրակին» նախորդող բազմավեպյան մի շարք հոդվածներում և առանձին մի քանի փոքրիկ դրվագներ հատկացրել «Նշմարք հայկականքում», որը Ալիշանի գեղարվեստական այլաբանության բարձրակետերից է: Քաղաքի մասին ասում է, թե այն հեռվից երևում է որպես «դաշտագետնի մը մեջ բարձրացած և խռնած կուտակություն մը պարսպաց և աշտարակաց, իբրև նորաձև և այլանդակ կարավան մը, անապատի մեջ կանգ առած, դադրած և ... իսպառ դադրած: Կարծես որ անոր վրայեն ալ անցած ըլլա անդադարագնաց տոչորիչ, խամրիչ, մեռուցիչ

[9] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991, էջ 107:

խորշակն և այն ընդարձակ շարժմանց և կենդանության կենտրոնը մահացուցած, արձանացուցած, լռած, լքած»[10]:

Ալիշանը առաջիններից մեկն է մեր նոր գրականության մեջ օգտագործում ավերակների, որպես քարացած ոգիների քարավանի մասին արևելյան ավանդազրույցը: Ինչպես հայրենի բնության կենդանությունը խորհրդանշում է հայրենի ժողովրդի մշտատևությունը, այնպես էլ բնության չար տարերքը, խորշակը՝ այդ ժողովրդին օտարի հասցրած ավերները: Խորշակի այս պատկերով Ալիշանը միանգամից լուծում է երկու հարց. նախ՝ գեղարվեստական պատկերավորմամբ արտահայտում է այն միտքը, թե սելջուկները ավերեցին ժամանկի մեծ խաչմերուկ Անին և ապա՝ նման այլաբանությամբ խուսափում է օսմանյան գրաքննության հետ կապված հնարավոր քարդություններից:

Գրական ոճավորման մի գեղեցիկ օրինակ է նաև Մայր Տաճարին նվիրված հատվածը: Քանի որ քրիստոնեական խորհրդաբանությամբ եկեղեցին Քրիստոսի հարսն էր, հոգևոր իր վայելչությունից ամայացած տաճարը Ալիշանը այրիի հետ է համեմատում և Ծնորհալու ողբի՝ Եդեսիային և Անիին նվիրված նշանավոր տողերի հետևողությամբ գրում. է. «Սակայն թեև այրի և ավեր, դեռ իբրև լանջաքերձ մեծոգի տիկինն մը, տաճարն այն իր անտխեղծ կուրծքը արևելս պարզած կարծես կը կանչե, թե ես անմահության համար կանգնած եմ, և հիմունքս անխախտ պիտի մնան, մինչև որ մնա երկիր և քանի որ հայ մը գտվի, իմ մեկ հետքս ալ պիտի գտվի» (Նշ. 46): Ի տարբերություն Ծնորհալու «Ողբի», Ալիշանի այս մռայլ նկարագրությունում իսկ և հետագա շարադրանքում շարունակ գերիշխում է հարության հույսը, հույսի համաքրիստոնեական գաղափարը ենթարկելով նաև ազգային վերիմաստավորման: Ալիշանը հավատացած է, որ «հայ մը պետք չէ բոլորովին անհույս մտնե և ելնե Անի» (Նշ. 37):

Ընդհանուր վերացական այս հույսը մի նոր իմաստ և խորհուրդ է ստանում «Շիրակում», որը հրատարակվել է ռուսների համար հաղթական ելք ունեցած 1878-80 թթ. պատերազմից հետո, երբ նոր հույսերով էր լցվել հայությունը: Այս պատճառով էլ եթե «Նշմարքում» Ալիշանը այրված սրտով գրում է ավերակների մասին և քաղաքի վերականգնման հույսն իսկ խարսխված է միջնադարից եկող միստիկ հավատի վրա, ապա «Շիրակում» ավերակների համար կսկծացող Ալիշանը արդեն մտածում է դրանց նորոգության մասին: Գրական առումով էլ հատկանշական է հետևյալ հանգամանքը. եթե «Նշմարքում» Ալիշանը հետևում էր Լաստիվերտցու և Ծնորհալու ոճին և գծագրում քաղաքի կործանման մասին ժողովրդական ավանդություններին համահունչ պատկերներ, ապա «Շիրակում» գերիշխում է գլխավորապես Աբովյանի շունչն ու ոգին: «Վերք Հայաստանին», որն անվանում է «իբրև հուսկ հայրենական յիշատակ Անւոյ», քաղաքական ծրագիր է նաև Ալիշանի համար[11]:

Հայրենի երկրի այս հատվածի բարգավաճմամբ այնքան խանդավառ Ալիշանը, եթե «Շիրակում» Անիի ավերակների նորոգության երազն էր

---

10 Ղևոնդ Ալիշան. Նշմարք հայկականք, էջ 28:

11 Ղևոնդ Ալիշան. Շիրակ, էջ 104:

փայփայում և շարադրում իր ծրագիրը, ապա «Այրարատում» նշում է կատարված աշխատանքը, թե ինչպես են արդեն «զկարելին կարկատել զննացեալ տաճարս և մեծ դարատր յուութեանց և ամայութեանց՝ զարթուցանել ի նոսին զաստուածային օրհներգութիւնս և զպաշտօնն նուիրական»[12]:

Ալիշանի տպագրական չորս հատորներից առավել պատմականն ու գեղարվեստականը «Սիսուանն» է: Երկրի տեղագրությունը այստեղ այն հարթությունն է, որի վրա բարձրանում են կիլիկյան բերդերն ու ամրոցները: «Սիսուան. համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ» երկար վերնագրում իսկ ներկայացված են գիրքը կերպավորող երեք շերտերը՝ մատենագրություն, տեղագրություն և պատմագրություն: Բացատրելով, թե հատորն ինչու է «Սիսուան» անվանել, վկայակոչում է Գրիգոր Տղայի հետևյալ տողերը.

Ապա ընդ լեառըն Տաւրոսին՝
Մըտին յաշխարհըն Սիսուանին[13]:

Այսինքն վերնագիրն իսկ պայմանավորված է գրական ավանդույթով, քանի որ վերցված է միջնադարյան հեղինակից, հոգևոր խորհուրդ է կրում՝ գրված լինելով հայոց կաթողիկոսի ձեռքով, և պատմական առումով էլ նվիրական է, կապվելով Սսի՝ ժամանակի հայոց կաթողիկոսանիստ կենտրոնի հետ:

«Սիսուանը» Կիլիկիայի բերդերի ու վանքերի պատմությանն ու տեղագրությանը նվիրված մի յուրօրինակ տեղագրական ժամանակագրություն է, ընդ որում ոչ թե Հայկական Կիլիկիայի, այլ Կիլիկիայի հայկական պետության, որն առավել է պատմականացնում այս աշխատանքը: Ալիշանը հոգու և մարմնի փոխհարաբերության միջնադարյան պատկերով է ներկայացնում անգամ վանքերն ու բերդերը, որոնցից «զբերդորէիցն», որպես «զմարմին պետութեան Սիսուանայ», և «զվանորէիցն», որոնք «անշիջատուր վառարան եղեն աղօթանուէր հոգւոց» (Սիսվ. ԺԳ):

Ալիշանը նա զգալով գեղարվեստական շնչով պատված պատմականի այս գերակայությունը, գրում է «տեղագրութեան Կիլիկիոյ էր աստանօր մեզ նպատակ և ոչ պատմութեան», սակայն ինքը չի կարողանում զատել «զպատմութիւն յաշխարհագրութենէ» ոչ միայն գիտական նկատառումներով, այլև ազգային ճակատագրով բացատրելով, քանի որ ամայացող երկրում ազգային պատմությունը անտեսել, կնշանակեր «զլերանց լոկ և զծայրից ճառս ճառել» (Սիսվ. Ժ):

Ձևայած Հայկական Կիլիկիայի պատմությունը Ալիշանը ներկայացնում է հայկական և օտար աղբյուրների քննական համադրմամբ, սակայն նրա շարադրանքի ոճը վերստին պայմանավորված է մեր դասական մատենագրությամբ: Գրքի հենց սկզբում Կիլիկիայում հայկական թագավորության հաստատումը նա համեմատում է հայկական լեռնաշխարհում

[12] Ղևոնդ Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 11:

[13] Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ, Վենետիկ 1885, էջ 59:

Հայկի հաջորդների տարածվելու հետ և «վիպասանից գրուցած ոճով» ասում է, թե նրանք երկիրը սկսեցին իրենց ենթարկել՝ «պարզելով զհայրենատուր լայնալիճսն աննահանջ գնացիւք»:

Ավերակների վերածված վանքերի և եկեղեցիների նկարագրությունում գերիշխող մռայլ շեշտը և օսմանյան խստացող գրաքննությամբ պայմանավորված զգուշավորությունը լիովին ցրվում են, երբ հեղինակը հասնում է Զեյթունին, որի տեղագրական նկարագրությունն իսկ պատշաճում է հայոց արծվաբույնի բնակիչների ազատաբաղձությանը. «Այս երկիր լեռնավայր է բազմակոհակ, անձուկ և դժուարակոխ ձորակօք»: Երկրի բնական դիրքի և հարստության ու մասնավորապես երկաթահանքերի մասին խոսելիս էլ զեյթունցիների զինվածությունն է ակնարկում գրելով. «Այս մետաղ ի վաղուց հետէ առիթ է վաստակոյ, պարենի ժրութեան և չափաւոր ազատութեան բնակչաց երկրին», ընթերցողին ակնարկելով, թե այս պատճառով է, որ ընդհանուր ավերների և այլայլումների մեջ Զեյթունը շարունակեց ապրել «Հայրենական օրինօք ներքին վարչութեան» (Սիսվ. 183):

Եթե հաշվի առնենք, որ «Սիսուանը» ամբողջացել է 1860-80-ական թթ., ապա Զեյթունին նվիրված բաժինը կարելի է անվանել մի յուրատեսակ տեղագրական-գեղարվեստական արձագանք 1861 թ. Զեյթունի ապստամբության և նրան նվիրված գործերի: Ազգային այն հույսերն ու ակնկալիքները, որոնք նախորդ գործերում կապվում էին Անիին, «Սիսուանում» էլ որպես գեղարվեստական պատկերներ վերաբերում են Զեյթունին: Ահա այս պատճառով էլ զարգացնելով նշմարքից եկող պատկերը՝ սելջուկ թուրքերին ներկայացնել ավերակների վրա սողացող մողեսների տեսքով, գրում է. «Ի դերբուկս աւերակացն գեռան մեծամեծ մողիզիք, գարշատեսիլ այտուցս ի վերա կռանցն ունելով. Այլ դժպհի քան զսոսա են գողաբարոյ քուրդք և թուրքմանք»: Ողջ հատորում ուղղակի կամ անուղղակի ձևով նկատելի է այս վերաբերմունքը: Տեղագրական առումով չնայած ափսոսում է, որ չի կարողանում որոշել Դրազարկի դիրքը, որը Կիլիկիայում «գերազանցեալ զամենայն վանորէիւք», միաժամանակ նրա լեռներում կորած լինելը բարեբախտություն է համարում, ասելով՝ թող այնտեղ գտնվող շիրիմները թաքնված մնան «ի պղծագործ մամլուք մատանց» (Սիսվ. 232):

Նաև միջնադարյան բարոյական չափանիշներով և հերոսականության ըմբռնումով է ներկայացնում կիլիկյան ազգային ու հոգևոր գործիչներին, որոնք ասես մեր մեկնիչների հիշատակած «հագներգութեան» հերոսներից լինեն: Պատմական նշանավոր անձնավորություններից կազմված գեղարվեստական այս պատկերաշարում հոգևորականներից առանձնացնում է Ներսես Լամբրոնացուն, իսկ աշխարհիկներից՝ Լևոն Մեծագործին: «Սիսուանում», Հակոբ Օշականի բնորոշմամբ, «դյուցազներգության մը կը մոտենա Լևոն Մեծագործը, ինչպես գրական շքեղ կենդանագիր մըն է Լամբրոնացին, որուն գործը վերլուծված է զգաստ պատկառանքով, բայց որուն կյանքը վիպասանի մը գրիչովն է կենդանանկարված»[14]:

---

14 Հակոբ Օշական. Համապատկեր արևմտահայ գրականության. հտ. 2-րդ. Երուսաղեմ, 1953, էջ 145:

«Սիսուանի» տիտղոսաթերթին նախորդող էջի վրա գրված է. «Սիսուան. Լևոն Մեծագործ»՝ վկայելով, որ գիրքը կազմված է երկու մասից. առաջինը «Համագրութիւն հայկական Կիլիկիոյ» և մյուս մասը նվիրված է Լևոն Մեծագործին ու Ներսես Լամբրոնացուն: Ալիշանի սկզբնական մտահղացմամբ «Շնորհալի և պարագա յուր»-ին պետք է հաջորդեր Ներսես Լամբրոնացուն նվիրված գործը: 1883 թ. եղբորը ուղղված նամակում գրում է. «Սիրելւոյն Ներսիսի Լամբրոնացւոյ պարագա մի ալ գրելու միտք ունեի, երկու մեծ անձինք ներկայացնելով ի մի պատկերի, զինքն՝ զՆերսէս և զԼևոն թագաւոր Ա»[15]: Ձեռնարկելով, սակայն, Կիլիկիային նվիրված հատորի գրությունը՝ նա պատշաճ տեղ է տալիս հիշյալ երկու գործիչներին: Լամբրոնացու փոխարեն Լևոն Մեծագործի գրքի կենտրոնական դեմք դառնալն էլ բացատրվում է երկու հանգամանքով. նախ որ հանձինս Շնորհալու, Ալիշանը արդեն գրել էր եկեղեցու մասին, ինչպես նաև կիլիկյան պետությունը ներկայացնող գործում առավել ճիշտ էր կենտրոնական դեմք դարձնել հայոց արքային՝ 1800-ական թթ. ազգային վերելքի և վայրէջքի տարիներին ընթերցողի սիրտը և միտքը մեկ անգամ ևս վառելով հայոց թագավորության գաղափարով:

«Սիսուանը» իր հղացմամբ, անցյալին դիմելու ոճով և նպատակներով կապվում է նույն ժամանակաշրջանի գրական ընթացքի հետ: Ինչպես արևելահայ ու արևմտահայ գրողներն էին իրենց ասելիքը սքողում պատմական շղարշով, պատմական հերոսների շուրթերով արտահայտելով իրենց խոսքը, նույնը կատարում է և Ալիշանը Կիլիկիայի հայկական թագավորության միջոցով հայոց պետականության գաղափարի վերարծարծումը պատելով տեղագրական շղարշով: Գրելով «թէպէտ մարթ էր կոչել պատշաճապէս և Կիլիկիա Հայք կամ **Հայկիլիկիա**, որպէս և գտանի իսկ կոչեցեալ ի հնուց ժամանակին՝ **Արմենոցիլիցիա**» և ընդգծված բառերը ներկայացնելով այլ շարվածքով, ընթերցողին հիշեցնում է, թե այն տարածքը, որը այժմ օսմանյան մի քանի կուսակալությունների միջև է բաժանված և դարձել է կիսակործան, ժամանակին հայկական է եղել և այդպիսին է ճանաչվել աշխարհի կողմից (Սիսվ. 59):

Պատմական և տեղագրական այս շղարշն էլ, սակայն, չէր ծածկելու Ալիշանի բուն ասելիքը թուրքական իշխանությունների աչքից: Մխիթարյան հայրերից Սահակ Ճեմճեմյանի բնորոշմամբ «Օսմանյան կառավարությունը արթուն պահակի մը նման պիտի հսկեր, որ վերականգնված Սիսվանը չմերձենա կիսակործան և ամայացած Սիսվանին»[16]: Հնարավոր արգելքի մտավախությունը Ալիշանն ուներ մինչև գրքի տպագրությունը: Դեռևս 1883 թ. Պոլսում գտնվող Ալիշանի եղբայրը իր ուրախությունը և աջակցելու պատրաստակամությունը հայտնելով «Սիսուանի» գրության համար, միաժամանակ մտավախությունն է արտահայտում, թե «քաղաքականորեն հարմար չէ այսպիսի հրատարակությունք այս ժամանակներուս, որ մեր օսմանյան կառավարությունը շատ կասկածոտ և նախանձախնդիր աչք ձգած է հայոց

[15] «Բազմավէպ», 1970, էջ 333:

[16] «Բազմավէպ», 1970, էջ 334:

վրա»[17]: Վենետիկում ինքը ևս զգալով այս իրողությունը՝ արևելահայ մտավորական Կարապետ Եզյանին նույն թվականին գրում է. «Կորացեալ են ճանապարհք արևելից (իմա՝ տաճկաց պետութեան) ուր արդ գիտեմք քանի խստութեամբ քննին և արգելուն զգիր, ուր հայոց անուն և պատմութիւն իցէ»[18]: Մեկ տարի անց էլ դարձյալ «Սիսուանի» կապակցությամբ Մկրտիչ Էմինին է բողոքում, թե օսմանյան կայսրությունը «ամենայն խստութեամբ դատէ և մերժէ զազգային հայկական գրուածս» (Նմկ. 91):

Սակայն հայկական Կիլիկիան վերակենդանացնելու ճանապարհին Ալիշանը այնուամենայնիվ չի երկնչում նման արգելքներից, որը վկայում են ոչ միայն գրքի ընդհանուր ոգին և շունչը, այլև անգամ ձևավորումը: «Սիսուանը» սկսվում է Լևոն Մեծագործի կողմից Կիլիկիայի նվաճումը խորհրդանշող պատկերով և ավարտվում հայկական Կիլիկիայի հարատևությունը խորհրդանշող «Հաղթանակ» հարթաքանդակով:

«Այրարատի» գրությունը ևս Ալիշանին ստեղծագործական տքնանքից բացի նաև խորին մտահոգություն էր պատճառում, քանի որ մինչ այդ արգելվել էր «Սիսուանի» մուտքը Օսմանյան կայսրություն: 1886 թ. ռուս նշանավոր արվեստաբան Ստասովին ուղղված նամակում նա գրում է, թե այն «հենց նոր արգելքի տակ է դրել թուրքական կառավարությունը: Ինչպիսի տարբերություն դրանց և Ձեր կայսրի ցուցաբերած խրախուսանքի միջև» (Նմկ. 257): Այնուամենայնիվ, նա այն մտավախությունն ուներ, որ «Այրարատը» ևս կարգելվի ոչ միայն թուրքական, այլև ռուսական իշխանությունների կողմից: Այս նույն մտավախությունն ունեին և ժամանակի հայ մտավորականները: Այսպես, Կարապետ Կոստանյանին ուղղված նամակում, առեն ցանկանալով փարատել այս մտահոգությունները, նա գրում է. «Կը վախնցնեք զիս «Այրարատա» մտից համար ի Ռուսաստան. ես կը հուսամ, որ ինչպես «Սիսուան» մտավ՝ աս ալ մտնե: Իրավ, «Սիսուան» Ռուս հողի վրա չէր խոսեր, ինչպես «Այրարատն», սակայն աս ալ կարծեմ թե տերության հակառակ բան չէ խոսած»:

Ահա այս պատճառով էլ «Այրարատի» առաջաբանում հայրենասիրական բռնկումները որդիական սիրո դրսևորումներ են ներկայացվում, որը ոմանք սխալ են հասկանում՝ նկատի ունենալով թուրքական իշխանություններին: Այնուհետև զգուշավոր այս ոճին հաջորդող պոռթկմամբ Կայսրինը՝ կայսեր, և Աստծունը՝ Աստծուն նշանավոր խոսքի հետևողությամբ ասում է. «Ընդաբոյս ազդումն ողջախոհակ թելադրիցէ հատուցանել զՀայրենեացն՝ Հայրենեաց»[19]: Ըստ «Հայկազեան բառարանի» «ընդաբոյս» նշանակում է բնածին: Նա, այսպիսով, հայրենասիրությունը համարում է բնածին մի զգացմունք, որը չի կարող խեղդել որևէ բռնություն, և այն պարտադրում է հատուցել նաև «զՀայրենեացն Հայրենեաց»:

«Այրարատը» Ալիշանը նվիրել է գրքի տպագրությանը համընկած և 1888 թվականով սկզբնավորված Հայկա չորրորդ շրջանին: Այս ձոնումը միայն ժամանակային պարզ համընկնումով չէր պայմանավորված, այլև ուներ

17 Տես «Բազմավեպ», 1970, էջ 333:

18 Ղևոնդ Ալիշան, Նամակներ, էջ 76:

19 Ղևոնդ Ալիշան, Այրարատ, էջ Է:

ազգային խորին ենթատեքստ՝ այս հատորը կապելով «Հուշիկներին», ուր առանձին դրված է նվիրված Հայկա շրջանին: Այս հնությունից բացի այն Ալիշանի համար ունի նաև երկու նվիրական խորհուրդ: Առաջինը, որ կապվելով Բելի դեմ Հայկի ըմբոստացմանը՝ խորհրդանշում է նաև հայ ժողովրդի ազատատենչությունը, և երկրորդ, որ սկսվող, նորոգվող չորրորդ շրջանի հետ է կապում նորոգությունը ազգային իղձերի ու հայկյան ըմբոստացումի[20]:

1880-ական թթ., երբ այնքան մեծ էր հայկական հարցի լուծման ակնկալությունը, Ալիշանը գիրքը նվիրում է սկսվող չորրորդ շրջանին: «Այրարատում» գերիշխում են նրա ըմբռնմամբ հայկյան տոհմային բնորոշ հետևյալ երեք հատկանիշները. խորին հնություն, այդ հնությամբ և արժանահիշատակ գործերով հպարտություն անցյալի հանդեպ և հույս ապագա նորոգության: Հնության այս գաղափարի ընդգծմամբ է սկսվում գրքի առաջին իսկ էջի առաջին իսկ նախադասությունը. «Այրարատ անդրանիկ է աշխարհագրական անուանց երկրի վերծանելոյ մահաւոր և կենսաւոր մկրտութեամբ ջրհեղեղին»[21]:

Պատմական ողջ Այրարատում Ալիշանը առանձնացնում և անհուն ոգևորությամբ ու երկյուղածությամբ է գրում հայ ժողովրդի համար նվիրականագույն երկու տեղավայրերի՝ Էջմիածնի ու Այրարատի մասին: Մինչ «Այրարատը» էլ թե՛ մխիթարյանները և թե՛ Ալիշանը բազմիցս գրել են Էջմիածնի մասին, սակայն արտաքին ճնշումների և հասունկյանական մատնությունների պատճառով զսպել են իրենց զգացմունքները: Նրանք հայ գրքի ձևավորված ավանդույթով մինչև տասնութերորդ դարի վերջի հրատարակությունների տիտղոսաթերթերի վրա նշում էին նաև «Ի հայրապետութեանն» և քերում ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը: 1880-ական թթ., երբ մեծապես արդեն անցյալ էր դարձել նախորդ տասնամյակների կրոնական պայքարը, Ալիշանը հնարավորություն է ստանում ջերմ մի պոռթկումով արտահայտելու իր զգացումները: Ծարունակ շեշտելով, որ Էջմիածինն է բոլոր հայերի հոգևոր կենտրոնը, այնուհետև այս գաղափարը գեղարվեստական պատկերի է վերածում, երբ ցանկանում է ասել, որ Մայր տաճարը շրջապատված է չորս եկեղեցիներով. «Ծուրջ զԷջմիածնիւ՝ իբրև արքաներակք մեծի լուսաւորի աստեղ կան չորք եկեղեցիք» (Այր. 234): Պատմական ակնարկում էլ դեպքերի մանրակրկիտ թվարկմամբ քաղաքի և վանքի պատմությունը ներկայացնող հանդարտ ոճը գեղարվեստական մի թռիչքի է վերածվում՝ հիշեցնելով «Արշալույս քրիստոնեության հայոցի» վառվռուն էջերը, երբ հասնում է Հռիփսիմյանց նահատակությանը: Որպես սկզբնաղբյուր ունենալով Ագաթանգեղոսին և շարունակելով մեր շարականագիրների ավանդները, Հռիփսիմեին նվիրված հատվածը նա գրաբարի հրեղեն մի ընթացքի է վերածվում: Իբրև բնորոշ օրինակ բերենք հետևյալ տողերը. «Որպես անգեղք գիշատիչք ի վերայ հասանէին դաճճապետն և դահիճք իւր դառնացեալք, ջահիւք լուցելովք, և նախ զաղօթաւոր զհեզաբան զքաղցրախօսիկ լիուսակոչ լեզուն հատանէին» (Այր. 236):

---

[20] Տե՛ս Ղևոնդ Ալիշան, Հուշիկք, հտ. Ա, էջ 97:

[21] Ղևոնդ Ալիշան, Այրարատ, էջ 1:

Այրարատին նվիրված հատվածում Ղ. Ալիշանը իմաստավորում է անգամ այն իրողությունը, որ որդան կարմիրը հանդիպում է միայն Արարատի փեշերին. «Ընդ երկնամերձ մեծին Մասեաց՝ փառաքի Որդն Կարմրոյ» (Այր. 482), ստեղծելով հսկայական լեռան և փոքրիկ որդի գեղեցիկ պատկերը: «Աստվածաշնչի» Առակաց գրքի և միջնադարյան «Բարոյախօս» ու համանման գրքերի հետևողությամբ գրված այս փոքրիկ գեղարվեստական դրվագում նրա միայն Արարատի փեշերին հանդիպելը բացատրում է տապանից վայր ընկնելու և այնտեղ մնալու հետ: Աստվածային արարչագործությամբ փոքրերի մեջ Ղ. մեծություն գտնելու միջնադարյան ըմբռնմամբ աշխարհի ունայնությունը շեշտելու համար այս որդի հետ է համեմատում համաշխարհային պատմությամբ և Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները, թե որքան թագավորություններ եկան ու անցան, իսկ նա այսպես մնում է Արարատի փեշին: Նկատի ունենալով նաև հնից եկող մշտատև ձգտումը Արարատը ելնելու, ասում է, թե շատ-շատերը չկարողացան հասնել այնտեղ, ուր մնում է «ոլոռնաչափ ճճին»:

«Առակաց գրքի» «Երթ առ մրջիւնն... և լեր իմաստնագոյն քան զնա» (Զ 6), «Կամ երթ առ մեղուն և ուսիր զիարդ գործօն է, և գործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի» (Զ 8) տողերի և դրանց մեկնությունների հետևողությամբ ինքն Ղ. գրում է, թե Աստված «Ետ Սարդի և Ծերամոյ՝ զհանճար նախօրինակ հիւսածոյ և Մեղուի՝ զգործ գերագոյն քաղցրութեան, որպէս և սմա՝ զհիւթ գերագոյն գունոյ կարմրերփնի» (Այր. 483): Նման համեմատությունից հետո դիմառնական եղանակով դիմում է որդին, որպես ականատեսի Մասից վար տարածվող երկրի քաղաքական ու բնական հեղաբեկումների՝ ասես նրանից ակնկալելով կյանքի անիմանալի շատ խորհուրդների պատասխանները:

Ի տարբերություն նախորդ երեք հատորների, վերջինը՝ «Սիսականը», ունի առավելապես տեղագրական բնույթ, որն Ալիշանի իսկ խոստովանությամբ բացատրվում է երկու հանգամանքով: Տեսնելով, որ գնալով մեծանում են հարուցվող արգելքները թուրքական իշխանությունների կողմից և վախենալով, որ իր հատորներով կվտանգի արևմտահայությանը, համիդյան ջարդերի նախօրեին Ալիշանը հարկադրված աշխատում է զսպել իր զգացմունքները ու հայրենասիրական պոռթկումները: Ինչպես առաջաբանում է գրում «զի հարկ ժամանակիս զգուշութիւն պահանջէ և լռութիւն»[22]: Կյանքի մայրամուտին մոտեցող Ալիշանը նաև կանխազգալով, որ իր ազգային երազանքները դժվար թե ի կատար ածվեն, առավել է տրվում հոգևոր-կրոնական մտածումներին և ամփոփվում իր մեջ: Նշված երկու պատճառները զգալապես ազդել են «Սիսականի» ընդհանուր ուղղվածության վրա: Եթե նախորդ հատորները նա առաջին հերթին ուղղում էր ազգակիցներին՝ նրանց հոգում բորբոքելու սերը հայրենի երկրի և նրա հիշատակների հանդեպ, ապա այստեղ հատուկ շեշտում է, որ այս գործը «ընծայեմ ոչ սոսկ հայրենասիրաց՝ այլ մանավանդ ի բանասիրաց» (Սիսկ. Է):

22 Ղևոնդ Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ Ե:

Ազգային հոգեբանությունը, արվեստը և բնակիչների վարքը միջավայրով պայմանավորող կուլտուր-պատմական դպրոցի ազդեցությունը «Հուշիկներից» հետո բոլորից ցայտուն դրսևորվել է «Սիսականում»: Գրքի առաջին իսկ էջում Ալիշանը շեշտում է. «Սեփական տիպք հայկականք ոչ ուրեք՝ բայց Այրարատեան բնաշխարհէն՝ այնպէս ճշգրիտ երկին յերկրի հայոց, որպէս յաշխարհս Սիսական» (Սիսկ. 1): Սյունեցիների օրինակով Ալիշանը մի վերջին անգամ ընդգծում է տարբեր առիթներով հայտնած այն միտքը, թե ազատությունն է անխաթար պահում մարդկային հոգին, որի կորուստը աղճատում է նաև հոգեբանությունը:

«Սիսականում» էլ գեղարվեստական իր հուզականությամբ առանձնանում է Ջուղային նվիրված հատվածը: Եթե Անիի ավերակները նկարագրելիս Ալիշանը գրում էր Ծնորհալու և Լաստիվերտցու հետևողությամբ՝ խոսքին համապատասխան ռճավորում հաղորդելով, ապա Ջուղայի դեպքում հետևում է Դավրիժեցուն: Թումանյանի նման Ալիշանի վրա ևս ցնցող տպավորություն է թողել Ջուղայեցիների գաղթի նկարագրությունը: Մինչ «Թագավորն ու չարչին» բալլադի գրությունը նույնպես անդրադառնում է այս թեմային և Դավրիժեցու պարզ գրաբար տողերը վերաշարադրում ողբախառն մի վսեմությամբ: Կարծում ենք, հետաքրքրությունից զուրկ չէ գիտաստեղծագործական բոլորովին այլ նպատակներ հետապնդող այս հատվածի համեմատությունը Թումանյանի նշանավոր տողերի հետ: Մեծ բանաստեղծը եթե գաղթական կնոջ՝ այսինքն պարզ խոսքի միջոցով է ներկայացնում ծննդավայրից կտրված մարդու ողբերգությունը, ապա Ալիշանը գրաբարյան շարունակական բարդացումներով քաղաքի ողբերգությունը դիտարկում է ազգային և համամարդկային տեսանկյունից՝ գրելով, որ Երասխը «երբեմն դայեակ հարստութեան սոցին, արդ կամ գերեզման կամ սահման անդարձութեան ճակատագրի. կլանելով անփոխարէն զերկնաբացիկ բանալիս խնկանուէր եկեղեցեաց Տիրամօրն, և ծնեղական կայանիցն, զոր այնքան վսեմական, սրտակոտոր և անգերազանցելի զգացմամբ և բանիւք բոնածիգ արկին ի խորս ալեաց նորին» (Սիսկ. 418):

Եթե 1860-ական թթ. Ալիշանը տեղագրական հատորներում բողոքում էր աղբյուրների սակավությունից, ապա 1880-ական թթ. ասում է, որ նոր հրատարակությունները ժամանակ չունի համադրելու իր գրվածքների հետ, իսկ առանց նման աշխատանքի տպագրելն էլ հնացած և անարժեք գործ է համարում: Սակայն եթե պատճառը միայն նման գիտական-հետազոտական բնույթի դժվարությունները լինեին, ապա Ալիշանը իր առասպելական աշխատասիրությամբ և համառ ունակությամբ կամրողջացներ ևս մի քանի նահանգներ: «Սիսականին» նոր հատորների չհաջորդելը ավելի խոր ազգային-հասարակական և գրական ընթացքով պայմանավորված պատճառներ ուներ: Գլխավորը թուրքական իշխանությունների այն մեղադրանքներն էին, թե Ալիշանի հատորները անհնազանդության են մղում արևմտահայությանը: Թուրքական-իշխանությունները դրանք անգամ պատճառներից մեկը համարեցին 1890-ական թթ. հայկական ջարդերի, որը խոր վիշտ պատճառեց ծերունազարդ գիտնականին: Ժամանակակիցների վկայությամբ նա, ցնցված նման մեղադրանքից, շարունակ առանձնացած լալիս էր:

Տեղագրական նոր հատորներ չհրատարակելը հիշյալ ազգային-քաղաքական և գիտական հետազոտական պատճառներից բացի բացատրվում է նաև տասնիններորդ դարի վերջի հայ գրականության հետագա ընթացքով: Եթե 1890-ական թթ. հայկական հարցի արծարծումը գրական ոգևորության մի ալիք առաջ բերեց, որը անցյալին դիմելով գրականության շրջանակներում էր փորձում հավաստել հայ ժողովրդի պատմական իրավունքները իր հայրենիքում անկախ պետականություն ունենալու, ապա 1890-ական թթ. հուսախաբությամբ իջավ նաև պատմավեպերի և պատմականության ալիքը: Միաժամանակ 1890-ական թթ. վերջնականորեն արմատավորվեց ռեալիստական ուղղությունը, և 19-րդ դարի երկրորդ կեսի ռոմանտիկական գրականության շրջանակներում իմաստավորվող տեղագրական այս չորս հատորներին այլևս չհաջորդեցին նորերը:

Այսպիսով հեռավոր Ս. Ղազարի իր խցում հայության սրտերը Նահապետի երգերով վառած, Հուշիկներով պատանի Հայկակների մի քանի սերունդներին դիմած Ալիշանը նաև տեղագրական հատորներով էր արձագանքելու հայությանը հուզող հարցերին և անցյալ դարի 70-80-ական թթ. գրականության առաջադրած խնդիրներին: Ավետիք Իսահակյանի բնորոշմամբ «Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական»[23]:

**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ**

---

[23] Ալիշանը ժամանակակիցների հուշերում. Երևան. 1974. էջ 220:

# «ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ»

*Նորայր Բյուզանդացին կենդանության օրոք չհասցրեց հրատարակել իր բոլոր աշխատանքները: Նրա անձնական գրադարանը և անտիպ ձեռագրերը պահվում են Ստոկհոլմի գրադարանում, այդ թվում և «Հայկազյան բառարանի» մի քանի տասնամյակների ընթացքում կատարած լրացումները, որոնք հավելվել են բուն բառարանին: Հինգ հատորներով կազմված այս աշխատանքը ևս պահվում է Ստոկհոլմի գրադարանում, որը վերջինիս տնօրինության բարի կամեցողությամբ և իր ազնաջան աշխատանքով, լուսավոր նմանահանությամբ իրականացրել է Ժնևաբնակ Մարտիրոս Մինասյանը[1]:*

*Մինչ «Հայկազեան բառարանի» հավելման աշխատանքներին նվիրվելը Բյուզանդացին կազմել է ֆրանսերեն-հայերեն բառարանը, որում տեղ են գտել միջին հայերենի բազմաթիվ բառեր: Բյուզանդացուց հետո ֆրանսերենի նոր բառարաններ կազմողները միշտ հաշվի են առնում նրա բառացանկը, որովհետև իր ժամանակին համանման բառարանների մեջ այն ամենահարուստն է եղել: Բառարանի երկրորդ կարևոր արժանիքը հայերեն հարյուրավոր մոռացված բառերի վերագտնումը և վերիմաստավորումն է: Այն լույս է տեսել 1884 թվին «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն հետեւողութեամբ բառարանաց Էմիլ Լիթրէի և գաղիական ակադեմիայի»: Ն. Բյուզանդացին հրատարակել է բազմաթիվ հոդվածներ ու գրքեր, որոնցից հիշատակության արժանի է հատկապես «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» ուսումնասիրությունը: Այն լույս է տեսել 1900 թ. Թիֆլիսում: Հրատարակել է նաև «Հայկական բառաքննութիւնք» և «Քննասէր» երկերը: Նրա աշխատանքների մեծ մասը ցրված են պարբերական մամուլում: Համաձայն ժամանակակիցների Բյուզանդացին քննության է ենթարկել նաև Արսեն Այտնյանի նշանավոր «Քննական քերականություն»: Եթե այս ձեռագիրը պահպանվել է, ապա այն անգնահատելի նշանակություն ունի հայագիտության համար:*

*Համեմատելով Հայկազյան բառարանի վրա կատարված աշխատանքի հետ, մտովի կարող ենք պատկերացնել, թե ինչ է արել Նրա նաև քերականության համար: Արդեն այս բառարանի մեջ իսկ շատ դիտողություններ կան, որոնք առնչվում են քերթականությանը:*

*Սակայն ինչպես է Նորայր Բյուզանդացին կատարել իր հավելումները: Նա վերցրել է «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» մեկ օրինակ, այն կազմահան է արել և ամեն թերթից հետո փակցրել մի սպիտակ թուղթ, ապա ամբողջը հինգ հատորով նորից կազմել է և բառարանի լրացումները կատարել այդ սպիտակ էջերի, նաև բառարանի կողպուսանցքների, վերնա ու ներքնալուսանցքների վրա: Աշխա-*

[1] Տես Նոր բառգիրք հայկազեան լեզուի սրբագրուած և ճոխացուած Նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով, հտ. Ա-Ծ, Ժնև, 1990:

սանքը ամբողջության մեջ կոչել է «Իմ յարգարեալ Հայկազնեանս»:

Շնորհիվ Մարտիրոս Մինասյանի հրատարակվել է այս կարևոր աշխատանքը: Առաջաբանում նա գրում է. «Նորայրը բառարանի վրա բազմարնույթ աշխատանք է կատարել: Տպագիր էջերի ներսում կամ լուսանցքներում մատիտով, իսկ մեջընդմեջ ավելացրած թերթերի վրա թանաքով մանրատառ ուղղել է ամեն կարգի վրիպակներ ու սխալներ, գծերով ջնջել կեղծ բառեր, դասականների համար բերել մատենագրական, դասական վկայություններ, ձեռագրերում ու տպագրերում իր հայտնաբերած նոր բառերի համար մշակել է վկայված նոր բառահոդվածներ»:

Նորայր Բյուզանդացու այս մանրակրկիտ աշխատանքը զուր կանցնի, եթե այն չհամադրվի բառարանի հետ: Հրատարակիչ Մարտիրոս Մինասյանը հաղորդում է, թե այս գործը լույս է տեսել մի քանի տասնյակ օրինակով, այսինքն մատչելի է սահմանափակ թվով հետազոտողների: Անհրաժեշտ է այդ հեղինակավոր հավելումները տեղադրել, համաձուլել բառարանի մեջ և կունենանք նոր բառարան Նորայր Բյուզանդացու հավելումներով ու խմբագրությամբ: Մինասյանը արել է առաջին մեծ և շնորհակալ քայլը, մնում է երկրորդ մեծ քայլը՝ բառարանը լրացնել Բյուզանդացու և մեր քարտարանից կատարված լրացումներով: Այդ ժամանակ կունենանք «Նորագույն բառգիրք Հայկազեան լեզուի»:

«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում Ն. Բյուզանդացին ավելացրել է ավելի քան յոթից ութ հազար բառ, որոնց մի մասը կա նաև «Հայկազեանին» հաջորդած «Առձեռնում», սակայն Բյուզանդացին այդ բառերը ոչ թե թվարկում է սոսկ, այլ բերում է բնագրական վկայված օրինակներով, առանց որոնց գիտական բառարանը ոչ մի արժեք չունի, իսկ ինչ Հին լեզուների բառարաններին է վերաբերում, ապա առանց հաստատող փաստերի բառարանը համր է:

Բյուզանդացին ոչ միայն բառեր է ավելացրել, այլև շատ այնպիսի բառերի համար, որոնց օրինակները բերված են ուշ դարերից, կամ անորոշ են, նոր օրինակներ է տալիս դասական երկերից, որոշակի է դարձնում, և եթե Հայկազյանը տեղը չի նշում կամ նշածը սխալ է, ինքը նոր օրինակ է տալիս, եղած օրինակը ճշտում և տեղն ու հեղինակը մատնանշում բոլոր պարագաներում: Օրինակ՝ բառարանը ունի Եփր. Գ4. Արեկ. ուղղված է. «Մարութայի է գործդ եւ ոչ Եփրեմի»: Գրված է. Զքր. կթ. լրացված է «Զագայ ի գեղջէ գաւառին Կոտայից»: Նա մեծ ուշադրություն է դարձնում հատկապես բառերի քերականական նշանակությունների վրա՝ ածականաբար, գոյականաբար, մակբայաբար և այլն. օրինակ՝ բառարանը Ակումբ բառի համար միայն գոյականի օրինակ է բերում, իսկ Բյուզանդացին տալիս է Ակումբի նաև ածականաբար գործածության օրինակ. «Մատուցին, ընծայեցին շաւրջ գնովաւ զակումբ զբուրումն խնկոց»: Աղախին բառը բառարանում ունի միայն գոյականաբար գործածության օրինակներ, Բյուզանդացին ավելացրել է նաև ածականաբար. «Այլ յաղախին մօրէ էր նա»: Ծառայ բառը իբրև գոյական է նշված բառարանում: Բյուզանդացին բերում է նաև ածականի օրինակ: Այսպիսի լրացումները հարյուրների են հասնում:

Բառարանից Բյուզանդացին ջնջել է հարյուրավոր բառեր, որոնք նրա կարծիքով կեղծ կամ սխալ կերպով են արձանագրված բառարանում: Այստեղ անհրաժեշտ ենք գտնում ասել, որ բազմաթիվ բառերի ջնջման համար բացատրություններ չկան, երբ բառարանը տալիս է բառի

հաստատման համար մի շարք օրինակներ: Այսպես՝ Ահոկեմ բայի համար կա «գիտենաս, որ բաղանիսն ահոկեաց և գիւր ահոկն ցուցանէ առ հիւանդն», «Լոյսն լուսնկային ահոկէ կորած փայտին: Ծառոց չահոկէ գետափն, այլ օգուտ է»: Բոլոր օրինակները հաստատված են հեղինակային նշումներով: Կամ՝ Ժամատեղ, ժամատեղի բառերը ջնջված են, երբ ունեն բազմաթիվ օրինակներ: Մնում են անհասկանալի այդ ջնջումներից շատ-շատերը: Դրանց մեծ մասը պետք է վերականգնել:

Որոշ ջնջումների համար կան բացատրություններ և օրինակներ, որոնք արդարացնում են այդ ջնջումները: Թագագործ բառը ջնջված է: Այս բառի նկատմամբ բառարանն էլ կասկած ունի «Գուցէ և ի հյ. այլազգ գրելի էր»: Բյուզանդացին ուղղել է թաւագործ, բայց ցավոք թաւագործը չի տեղադրել: Ակունդ բառը ջնջել է առանց որևէ մեկնաբանության: Բառը գործածված է ակն ակունդ կապակցությամբ: Պետք է ենթադրել, որ այն եղել է ակնակունդ, որ ակն է նշանակում: Օրինակն էլ այդ է ասում. «Լինի ակն ակունդ սպիտակ, լինի կապոյտ, լինի դեղին, լինի կարմիր» (Ոսկեփորիկ): Աբոն բառը ջնջված է, Բյուզանդացին գրում է՝ ուղիղն արբոն: Ջնջել է հրամանատէր, պիտի լինի հրամանատար: Ալնոյթ բառը ջնջել է, որ պետք է լինէր ալնորոյթ, այսպես է նաև ամպուռջ, պիտի լինի ամպուռոյցջ: Բայց շատ ու շատ բառերի ջնջումը չենք արդարացնում, մանավանդ որ կան բառեր, որոնք հաստատուն կերպով մուտք են գործել մեր գրական լեզուն և արդեն ժողովրդականացել են. օրինակ՝ Ակութ բառը, որ հաստատուն տեղ է գրավել օջախ բառի փոխարեն: Այս բառը Բյուզանդացին մերժում է իմաստային առումով՝ ասելով, որ ակութ ոչ թէ օջախ է նշանակում, այլ կասկարա, իսկ բառարանի բերած օրինակներում ակութ թոնիր, օջախ է նշանակում: Բյուզանդացին բառարանից ջնջում է այն բառերը, որոնք հին դարերին են վերաբերում կամ բերված են Մարթին, Ոսկեփորիկ, Գիրքը վաստակոց ոչ-դասական երկերից, բայց այդ բառերը շատ վաղուց ժողովրդական լեզվում լայնորեն կիրառվել են. օրինակ՝ թնթոց, ագեստակ, հողվարք, գոգ, դաւի, ախցիփէխց, ականչացաւ, ագատ, ախոռ, ածէլել, աճպարար, ամաչկոտ, եկնածախ, թղթաւոր, և այլն: Սրանց թիվը ամբողջ բառարանում մեծ քանակ է կազմում, բայց գրեթե բոլոր բառերն էլ իրենց հիմնավորումն ունեն հայ ժողովրդի խոսվածքներում, իսկ գրաբարը այդ խոսվածքներից երբեք պատնեշավորված չի եղել: Էրունք բառը ջնջված է իբրև վերջին դարերի վկայություն, մինչդեռ սա մի հազվագյուտ բառ է, համանորեն կապ ունի էրէ բառի հետ: Այդ բառը մեր խոսվածքում մնացել է միայն էրուն-թռչուն կապակցությամբ և այդտեղ էրունը մեզ համար անհասկանալի բառ է. մինչդեռ նշանակում է վայրի անասուն: Ուրեմն էրէ նշանակում է վայրի կենդանի (ընդհանուր անուն է): Գոլ բառը ժողովրդական բառ է. դրանից ունենք գոլել, գոլոտ, գոլահոտ: Դաւի բառը (մեր խոսվածքում դախ) նույնպես ժողովրդական բառ է ու ջնջված է: Մինչդեռ բառարանը միանգամայն ստույգ բացատրություն է տալիս երևույթին: Թնթոց բառը, որ մի շարք բառարաններում նշանակում է կրակխառնիչ, հարիսա խառնիչ, մեր խոսվածքում մնացել է իբրև ուխտատեղիի անուն՝ Թնթոցներ:

Նույնիսկ այնպիսի բառեր, որոնք սխալմամբ են տեղ գտել ձեռագրերում, գրքերում և հետագայում բնագրերի հիման վրա, կամ գիտականորեն ուղղվել ու

փոխարինվել են, դարձյալ պետք է մնան բառարաններում հատուկ բացատրությամբ: «Վեցօրեայքի» տպագրությունը մի խիստ աղավաղված տպագրություն է. օրինակ՝ այնտեղ կա երկնահայեաց. այս բառը Բյուզանդացին ջնջել է, որովհետև դրա փոխարեն պետք է լիներ երկայնահայեաց, բայց վերջիվերջո բառը կազմված է հայ մարդու կողմից և արձանագրված է դարեր առաջ, այսինքն հաստատագրվել է: Այդ բառը պետք է մտնի բառարան, սակայն ինչ-որ վերապահումով, բացատրությամբ, թե ինչպես է ստեղծվել. օրինակ՝ Ագաթանգեղոսի Պատմությունում եղել է ախտանկեալ բառը և այդպես էլ մտել է բառարան: Բյուզանդացին բառը ջնջել է, որովհետև նախադասությունը եղել է ոչ թե «ծագեաց զիւր ճառագայթսն ամենայն հիւանդացելոցն եւ ախտանկելոցն», այլ ախտացելոցն: Երկար դարեր այս բառը շրջանառության մեջ է եղել, պատմականորեն հաստատագրվել է իբրև Ագաթանգեղոսի բառ, այդ ևս պետք է արձանագրվի բառարանում որոշակի բացատրությամբ: Ոսկեբերանը գործածել է երեկութիւն. Բյուզանդացին գրել է որ բառը ոչ թե երեկութիւն է, այլ ցերեկութիւն: Ինչ զանազանություն բառակազմության տեսակետից. գուցե հունարենին համապատասխան ցերեկության փոխարեն թարգմանիչը երեկություն է թարգմանել:

Հայկազյան բառարանի թերություններից մեկը դարձվածային միավորների պակասն է, որ հաճախ գրաբարի ընթերցողին անել կացության մեջ է դնում: Հին մտածողությամբ կազմված դարձվածները հաճախ տրամագծորեն հակադիր են նորին. օրինակ՝ մենք ասում ենք ծեծ ուտել, գրաբարում ասվում է գան ըմպել, ուստի եթե դարձվածները չեն բացատրվում բառարաններում, մնում են անհասկանալի: Նորայր Բյուզանդացին ջանացել է Հայկազյան բառարանի այդ թերին նույնպես լրացնել. օրինակ՝ անցուցանել բառահոդվածի համար բառարանը բերել է ընդամենը մի դարձված. անցուցանել ընդ հուր: Գրաբարագետի համար սա պիտի նշանակեր կրակի միջով անցկացնել, բայց նշանակում է կրակի վրա խորովել: Ուրեմն գրաբարի բառարանի խնդիրը պետք է լինի այդ բոլոր դարձվածները հավաքել և բացատրել: Նորայր Բյուզանդացին աշխատել է լրացնել Հայկազյանի այդ պակասությունը. օրինակ՝ Անցուցանել բայի մոտ բերել է անցուցանել զմեհեանս, անցուցանել զբագինս, անցուցանել զկուռս, որ նշանակում է ջնջել, վերացնել մեհյանները, բագինները, կուռքերը: Անցուցանել զքաղցն. ի բաց անցուցանել (մերժել). անցուցանել զոք ընդ ահ. ընդ երկիւղ ի մէջ անցուցանել, անցուցանել զչարիս:

Բան բառը բառարանում ոչ մի դարձվածքային միավոր չունի. Նորայր Բյուզանդացին բերել է մի շարք դարձվածքներ, որոնք լրացնում են այդ բազմիմաստ բառը ըստ ամենայնի: Բանից նշան, նիշ. գլուխ ի բան դարձուցանել. բանք ամբոխի (խռովություն) առաջել զոք ի բան. բանիւք անկանել. բանից կարգ է առել. ի բանս գալ յումեք. բան արկանել ի ներքոյ. ի բանի իւրում առնել. գալ զբանիւք. բանից ընկեր. զբանիւք անկանել. բան արկանել, բան ի գործ առնել. լինել բանի ուրուք. չեմն ինչ բանք: Այսպես՝ բառարանը բառերով ու թարմ օրինակներով հարստացնելուց հետո, Բյուզանդացու անգնահատելի գործը նաև դարձվածքներով աղքատ բառարանի հարստա-

ցուցումն է, մի բան, որ ամենագնահատելին է: Բայց ցավոք պիտի ասեմ, որ գրաբարի այդ հմտագույն մարդը մեծ մասամբ չի բացատրել իր բերած բառերի ու դարձվածքների իմաստները, մինչդեռ աղբյուրները ձեռքի տակ չի ունեցել: Ասում են, այդ, ինչ որ արել է, արել է իր համար. նա չի մտածել, թե իր արածը լայն գործածության ոլորտներ կարող է դուրս գալ: Բացատրությունների մի մասն էլ ֆրանսերեն է:

Նորայր Բյուզանդացու եզակի ծառայությունը բնագրական աղավաղված, աղճատված բառերի վերականգնման ու սրբագրության մեջ է, մի բանասիրական գործ, որի ոլորտում ոչ մի բանասեր չէր կարող նրա հետ մրցության մտնել: Նա, ինչպես երևում է նրա հմտությունից ու գործից, ունեցել է հայ հին գրականության համարյա ամբողջական քարտարանը, այլապես այդքան վկայություններ ու բառեր մտցնել, ի մի բերել, համեմատել, ճշտել ու ընտրություն կատարել՝ անկարելի էր: Եթե նա իսկապես ունեցել է հին հայերենի քարտարանը նաև, ապա պետք է միայն մտածել նրա անհուն սիրո ու նվիրվածության մասին առ Հայոց հին լեզուն և նրա բառագանձը, որի համար նա դիմել է ինքնանահատակման: Մենակ կատարել նման հանդգնություն, այսինքն քարտարան կազմել և գլուխ բերել, միայն անհուն սիրով պետք է բացատրել, և նա սիրո հերոս էր ու նաև նրա զոհը: Բյուզանդացին բառարանում մշակել ու սրբագրել է հարյուրավոր բառեր ու արտահայտություններ՝ ի մի բերելով հին բնագրերի ու ձեռագրերի բազմապիսի վկայություններ որևէ բառի կամ արտահայտության մասին:

Բառարանը ընկրուտ բառը վերցրել է Հովհաննես կաթողիկոսից: Բյուզանդացին բառս ուղղում է ընկրուստ՝ բերելով «Արարատում» տպագրված մի հատվածից ընկրուստ ձևը, Էմինի տպագրության ընկրուստը, և ապա բառը Փիլոնի վկայությամբ հաստատում է, որ եղել է ընկրուստ: Սակայն որոշ դեպքերում այդպիսի ճշտումները համոզիչ չեն: Դրանք հավաստող փաստերը պակաս են: Օրինակ՝ հաղթ բառը, որ թակարդ է նշանակում, ունի նաև խաղթ փոփոխակը: Բառարանը երկու տարբերակի համար էլ բավականաչափ օրինակներ է բերում: Բյուզանդացին նույնպես օրինակներ է բերում դասական երկերից, ընդ որում հաղթ-ի համար երկու օրինակ, իսկ խաղթ-ի համար՝ միայն մեկ օրինակ: Բայց այդ օրինակի տակ ավելացնում է. «Խաղթ է ստոյգ գրութիւն, յորմէ են խաղթակեմ» (ասա գրեա զամենայն վկայութիւնս, որ ի հաղթ), այսինքն՝ հաղթ-ի օրինակները համարիր խաղթ և բեր խաղթ-ի տակ, ուրեմն հաղթ ձև գոյութիւն չունի: Բյուզանդացին այդ վճռի համար մի հենարան ունի՝ խաղթակեմ բայը (բռնել, ծուղակ գցել): Մինչդեռ պետք է մտածել, որ դրանք հ և խ փոխանցման հին դրսևորումներ են:

Բառարանի թերություններից մեկն էլ բառիմաստների ոչ լրիվ դրսևորումն է: Բյուզանդացու ուշադրությունը այդ կողմի վրա շատ չի ծանրացել, բայց որտեղ որ այդ հանգամանքը նկատի է առել, բավականաչափ հավելումներ է կատարել: Ագահեմ բայի համար բառարանը երկու նշանակություն է տալիս, Բյուզանդացին ավելացնում է ևս երկուսը՝ ցանկանալ, ունենալ, վնասել, հափշտակել: Ամենուրեք նա սփռում է բառագիտության-աղբյուրագիտության, քերականագիտության, բանասիրության իր գիտելիքների գանձերը՝ ուշադրությունից բաց չթողնելով գրաբարագիտության որևէ մանրուք. օրինակ՝ դնելով կմէ խմն դերանվան բացառականը՝ ավելացնում է, թե Բագրատունին վերջինիս ուղղականը

*փոխանակ* **իմն** *համարելու* **վի. վինչ** *է դնում:* **Լսել** *բայի համար բերում է* **լսեաց** *կատարյալի ձև, որ գրաբարի տեսակետից շատ տարօրինակ է: Իսկ թե որքան ուղղումներ ու սրբագրություններ է կատարել այդ հսկա աշխատանքի մեջ, արդեն պետք է միայն մտքով ընկալել:*

**Եզրակացություն.** *Մեր առջև է մշակութային մի մեծ գործ: Ն. Բյուզանդացին գիտական մեծ աշխատանք է կատարել, մեզ մնում է այնպես անել, որ այդ աշխատանքը զուր չանցնի: Այս բնագավառում առաջին քայլը՝ Բյուզանդացու աշխատանքը գիտական շրջանառության մեջ դնելը, կատարել է Մարտիրոս Մինասյանը, մնում է երկրորդ քայլը՝ այդ բառերը անցկացվեն բառարան, այսինքն դարձվեն բառարանի օրգանական մասը: Առայժմ լրացումներն ու հավելումները իրենց տեղերում չեն, պետք է տեղադրվեն:*

*Հայկազյան բառարանն ամբողջացնող այս երկրորդ քայլը պետք է կատարի Ազատ և Անկախ Հայաստանը:*

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

# Վիրահայոց թեմի Ախալցխայի շրջանի եկեղեցիների և մեկ հուշամատուռի օծումն ու վերաբացումը

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ախալցխա մեկնեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը, Ախալցխայի շրջանի հոգևոր տեսուչ Գուրգեն աբեղա Աղաբաբյանը և Մայր Աթոռի միաբան բարեշնորհ Հարություն սարկավագ Փիլավչյանը՝ կատարելու տեղի եկեղեցիների և մեկ մատուռի վերաբացման և օծման արարողությունները:

Նույն օրը, երեկոյան, եկեղեցիներում կատարվեց նավակատյաց արարողություն:

Երեքշաբթի օրը, ապրիլ 23-ին, առավոտյան ժամերգությունից հետո, հոգևոր տեսուչը և եկեղեցու պատասխանատու անդամները պատրաստություն տեսան մատաղի օրհնության: Կեսօրին տեղի ունեցավ եկեղեցու օծում: Առաջին եկեղեցին Մեծ Պամաճ գյուղի Ս. Խաչ եկեղեցին էր, ուր հավաքվել էր գյուղի ողջ բնակչությունը: Օծման արարողությունը գլխավորում էր գերաշնորհ Գևորգ արքեպս. Սերայդարյանը: 70 տարվա ընդմիջումից հետո ժողովուրդն առաջին անգամ ներկա եղավ հոգեպարար արարողության, որը ունկնդրում էր սրբարար մեծ ուշադրությամբ: Արարողության վերջում թեմի առաջնորդ սրբազանը և հոգևոր տեսուչը քարոզ խոսեցին: Իրենց հերթին շնորհակալական խոսքեր ասացին նաև մտավորականներն ու պետական պաշտոնյաները:

Օծումից հետո տեղի ունեցավ պսակադրության արարողություն. հավատացյալներն ուշադրությամբ հետևեցին սուրբ խորհրդի կատարմանը: Հետ արարողության, եկեղեցու բակում տրվեց մատաղ, որին ներկա էին բոլոր մասնակիցները: Գերաշնորհ Գևորգ սրբազանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետի անունից:

Նույն օրը հոգևորականաց դասն այցելեց Մեծ Պամաճ և Փոքր Պամաճ գյուղերի դպրոցները, որտեղ զրույց անցկացվեց աշակերտների, ապա ուսուցիչների և դպրոցի ղեկավարության հետ:

Սազել գյուղ— Հակառակ անձրևային եղանակին, ժամը 15-ին տեղի և հարակից գյուղերի բնակչությունը հավաքվել էր Ս. Խաչ եկեղեցու բակում դիմավորելու հոգևորականներին:

Սրբազան Հայրը իր օրհնությունը տալով ներկա հավատացյալ բազմությանը, հոգևոր տեսչի և սարկավագների հետ միասին կատարեց օծման արարողությունը: Նախ կատարվեց «առ դրան» արարողությունը, որից հետո «Ջողորմութեան Քո զդուռն բաց մեզ Տէր»-ով սրբազանի սրբած ձեռամբ բացվեց դուռը, և սկսվեց սրահի, խորանի, սեղանի և ավազանի օծման արարողությունը: Այնուհետև քարոզի ժամանակ սրբազան Հայրը բարձր գնահատեց հոգևոր տեսչի կատարած մեծ ծառայությունը և քրտնաջան աշխատանքը՝ եկեղեցիները վերանորոգելու գործում, որը տևել էր ընդամենը երկու տարի, նաև շնորհակալություն հայտնեց ժողովրդին և տեղական իշխանություններին՝ իրենց ջանքերն ու աջակցությունը բերելու և այդ մեծ գործը իրականացնելու համար:

Արարողության վերջում հանդես եկավ հոգևոր տեսուչը և գյուղխորհրդի նախագահ Մարտիրոս Պետրոսյանը, որից հետո տեղի ունեցավ մանկան մկրտություն: Այնուհետև Մարտիրոս Ալեքսանյանի տանը տեղի ունեցավ հյուրասիրություն:

Օծյալ եկեղեցիները այժմ բարվոք վիճակի մեջ են, իրենց վերանորոգությամբ և մաքրությամբ արժանի Աստծո տաճար կոչվելու:

Հաջորդ օրը, ապրիլի 24-ը, բացվեց անձրևի արցունքոտ պարզությամբ: Լռություն էր իջել Ախալցխա աշխարհի վրա: Թույլ քամին ասես եղեռնի նահատակաց սոսափն էր տարածում Հայոց գյուղերի վրա: Բնության մեղամաղձոտ թախանձանքին լուծվեց եկեղեցիների զանգերի տխուր ղողանջը և արձագանքն ալիք-ալիք տարածվեց հայ ընտանիքներից ներս՝ արթնության և հրավերքի լուրը տարածելով հայոց շեներում:

Հոգևորականաց դասն առավոտյան ժամը 7-ին գտնվում էր Օրալ գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Գյուղացիները խումբ-խումբ գալիս էին եկեղեցի և իրենց հոգու աղոթքը խառնում ժամերգության և հոգեհանգստյան արարողությանը ի Տեր՝ Ամենազոր Աստծուն, Հայ ազգի նահատակների և ննջեցյալների հոգու փրկության համար: Հետ արարողության, սրտաբուխ քարոզ խոսեց թեմի առաջնորդը, որից հետո ժողովրդի բազմության հետ այցելեց գյուղի Ս. Գևորգ մատուռ՝ կատարելու օծման արարողություն: Այստեղ ևս արարողությունից հետո հավուր պատշաճի քարոզ խոսեցին թեմի առաջնորդն ու հոգևոր տեսուչը: Այնուհետև հոգևոր դասը ընդունելություն գտավ եկեղեցու նորոգության բարերարի՝ Խաչիկ Սահակյանի հարկի ներքո: Իսկ ընդունելությունից հետո հոգևոր դասը սրբազան Հոր գլխավորությամբ այցելեց գյուղի տարրական դպրոց: Հանդիպումը տեղի ունեցավ դասարաններից մեկում, ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ:

**Փոքր Պամաճ**— Նույն օրը, ցերեկվա ժամը 14-ին, Մայր Աթոռի պատվիրակությունը հանդիպեց Փոքր Պամաճ գյուղի միջնակարգ դպրոցի մանկավարժների հետ: Դպրոցի ակումբում, սրբազանի Հայրական խոսքից ու օրհնությունից հետո, սկսվեց սգո ցերեկույթը՝ նվիրված Ապրիլյան եղեռնի զոհերի հիշատակին: Նմանատիպ հանդիսություններ էին կազմակերպվել նաև մյուս գյուղերում: Սգո հանդիսությունից հետո, անձրևի թածոտ արցունքների ուղեկցությամբ, հոգևոր դասը բարձրացավ գյուղից հարավ գտնվող «Կարմիր բլուր» կոչվող բարձրադիր սարահարթի կատարը՝ օծելու համար նոր կառուցված Ապրիլի 24-ի նահատակաց հուշամատուռը: Նահատակաց հուշամատուռի օծման արարողությունն անցավ անձրևի ներքո, հոծ բազմության ներկայությամբ: Օծման արարողությունից հետո, արցունքոտ աչքերով, Գևորգ արքեպս. Սերայդարյանը հոգեբուխ քարոզ խոսեց, իսկ տեղող անձրևի տակ կանգնած բազմությունը քար լռությամբ լսում էր սրբազան Հոր սգո աղոթակիր խոսքը, խոսք, որ ցնցեց մարդկային հոգիները՝ ազգային պատմական ողբերգության տխուր տեսարանների նկարագրությամբ և պապենական հավատքն ու եկեղեցին զորացնելու ազդու արտահայտություններով:

Հաջորդ օրը, հոծ բազմության ուղեկցությամբ, հոգևոր դասը ճանապարհվեց դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ իրենց հետ տանելով Ախալցխայի լեռներից իջնող քամու բարբառող սոսափը: Օրհնություն իջավ մեր աշխարհի վրա, և նորոգվեցինք մեր պապերի Աստուծով. ԱՄԵՆ:

*******************

# ԶԱՏԿԱԿԱՆ ՕՐԵՐԸ ԲԱԹՈՒՄԻԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 13-ից մինչև 16-ը Մայր Աթոռիս միաբաններ Բագրատ աբեղա Գալստյանը և Սամվել սարկավագ Հովակիմյանը, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և օրհնությամբ, գտնվում էին Վիրահայոց թեմի խնամակալության տակ գտնվող Բաթումի քաղաքում՝ Զատկական տոները տեղի հայ համայնքի հետ անցկացնելու և տոնախմբելու սրբազան առիթով:

Ուրբաթ օրը, ուշ երեկոյան, հասնելով Բաթումի, Հայր Սուրբը և Բարեշնորհ Սարկավագը դիմավորվեցին համայնքի ներկայացուցիչների կողմից՝ գլխավորությամբ «Վերածնունդ» բարեգործական ընկերության նախագահ պրն. Գևորգ Ավակովի:

Հաջորդ՝ շաբաթ օրը, առավոտյան, Մայր Աթոռիս երկու միաբանները այցելեցին Բաթումիի Հայոց Սուրբ Փրկիչ եկեղեցին, որն այսօր վերանորոգվում է: ԺԹ դարի վերջերին թուրքական կոտորածներից մազապուրծ եղած հայ գաղթականների «գոյիւ չափ զկեանս իւրեանց» ներդրված վաստակով ու աշխատանքով կառուցված այս երկնակտոր եկեղեցին, խորհրդային բռնատիրության շրջանում վերածվել էր աստղադիտարանի: Սակայն, ինչպես Սուրբ Ավետարանն է վկայում՝ «վասն Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի», այստեղ ևս ազատության շնչի ծավալումով Աստուծո Տունը վերադարձվեց իր Տիրոջը: Բաթումցի հայը այսօրվա պես հիշում է իր վերջին քահանային՝ Տեր Մկրտչին, որ 1937 թ. հալածանքների ժամանակ անհայտության մեջ զոհվեց Սիբիրի հեռավոր աքսորավայրերում:

Եվ այսօր հոգեկան տոն ու վերստին ծննդյան ներքին ուրախություն և հուսավառություն էր Բաթումիի հայության համար, որովհետև շուրջ 60 տարվա չությունից հետո դարձյալ պիտի ղողանջեին Հայոց Եկեղեցու հայաբարբառ զանգերը՝ ավետելով, թե «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց», որին ի պատասխան պիտի լսվեր հույսով և հավատքով տրոփող հայի սրտի բաբախյունը, որ «Օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի»:

Շաբաթ օրը, ժամը 16.00-ին, թեև ուշացումով և անհամապատասխան մի օր, բայց Տիրոջ տնօրինական և խորհրդալիր դեպքերից մի քանիսին ու դրանց ներքին բովանդակությանը հաղորդակից դարձնելու և դրանցով ապրելու հարկավորությունից և անհրաժեշտությունից մղված տեղի ունեցավ Ոտնլվայի սրբազան արարողությունը: Արարողությունից հետո, բնաբան ունենալով Հովհաննես Ավետարանչի խոսքերը (Հովհ. Գ) քարոզ խոսեց Բագրատ Հայր Սուրբը՝ նախ փոխանցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու ողջույնները, ապա բացատրելով Ոտնլվայի և ընդհանրապես Ավագ Շաբաթի խորհուրդը, ինչպես նաև հուսադրեց ու վստահեցրեց, որ Սուրբ Էջմիածինը իր Ազգընտիր Գահակալով, ինչպես մյուս զավակների նկատմամբ, այստեղ ևս իր կարելին պիտի ներդնի հայի քրիստոնեավայել և բնականոն կյանքին ի նպաստ:

Նույն օրը, ուշ գիշերին, ժամը 00.00-ին, մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագը: Երկարատև ընդմիջումից հետո վերստին Տիրոջ Մարմինն ու Արյունն էր պատարագվում այս Սուրբ եկեղեցում: Խորհրդանշական կերպով կարծես թե ճիշտ այս վայրկյանի համար էին արտասանված սրբազան Հայրապետի խոսքերը, որ Քրիստոս «մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց»: Իսկապես 80 տարվա մեռելությունն էր ընկրկում Տիրոջ կենդանության և հաղթանակի առջև: Սուրբ Պատարագի ընթացքում դարձյալ քարոզեց պատարագիչ Հայր Սուրբը՝ Հարության հրաշալի դեպքը կապելով Բաթումիի հայության այսօրվա կյանքի հետ: Իսկ Սուրբ Պատարագի ավարտին տեղի ունեցավ Զատկական հացի, ձվի, աղի օրհնությունը:

Կիրակի առավոտյան ժամը 11.00-ին մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ընթացքում Սամվել սարկավագը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Զատկական պատգամն ու օրհնության խոսքը: Մեծ էր նաև Սուրբ Հաղորդություն ստացողների թիվը: Տիրոջ Հարության կյանքով ու կենսախնդությամբ էր լցված ամբողջ ժողովուրդը: Սուրբ Էջմիածնից և Մայր Հայաստանից տասկ տարածությամբ հեռավորության վրա գտնվելով, նրանք ամենուր զգում էին այս երկու նվիրական օջախների ներկայությունը, որի վառ վկայությունն էին նաև հավաքտ Սուրբ Պատարագի կատարված մկրտությունները: Կրկին Սուրբ Էջմիածնի լույս Մյուռոնն էր ճառագում Սուրբ Փրկիչ եկեղեցում, որի լույսը ճեղքեց թե՛ հոգեկան և թե՛ մարմնավոր բոլոր փակ դռները՝ մուտք գործելով յուրաքանչյուրի կյանքից ներս: Սուրբ Պատարագից հետո տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի մեկ տարվա գահակալության տարեդարձի առիթով: Ներկայացվեց Վեհափառ Հայրապետի մեկ տարվա գործունեությունը և այդ ընթացքում տեղի ունեցած բոլոր իրագործումները:

Հաջորդ օրը, երկուշաբթի առավոտյան, ի հիշատակ հանգուցյալ ննջեցելոց, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն, որից հետո Հայր Բագրատն ու Սամվել սարկավագը այցելեցին նաև հայկական գերեզմանատուն, աղոթելով այստեղ հանգչող բոլոր հայ զավակների հոգիների խաղաղության և փրկության համար:

Հատկանշական և հուզիչ էր հանդիպումը հայկական դպրոցի սաների հետ, որոնց փոխանցվեց Վեհափառ Հայրապետի սերն ու օրհնությունը՝ պատվիրելով փոքրիկներին ամուր ու հարատև պահել իրենց հայրերի հավատքը, լեզուն և պատմությունը: Այս սրտառուչ հանդիպումով էլ ավարտվեց Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ տեղի ունեցած Զատկական օրերի տոնակատարությունները՝ այն հույսով և հավատքով, որ Սուրբ Էջմիածնի խաչի ճառանշն ու Սրբալույս Մյուռոնի ճառագայթը երբեք չի խամրելու նաև հայության այս փոքրիկ հատվածում:

Բ. Ա. Գ.

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Վասպուրական» հայրենակցական միության անդամներին: Հանդիպումը վերածվեց հուզիչ, սրտամոտ խոսակցության, որի ընթացքին Վեհափառ Հայրապետին ջնորհակալանքի և բարեմաղթության խոսք ասացին միության նախագահ Լևոն Միրիջանյանը, Վասպուրականի «Նոր սերունդ» հայրենակցական միության նախագահ Մարինա Վահրադյանը՝ ընդգծելով, որ իրենք այցելել են Նորին Սրբությանը նշանավոր



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

վանեցու՝ Խրիմյան Հայրիկի ծննդյան օրը:

Վեհափառ Հայրապետը հայրական ջերմ խոսքով ողջունելով հյուրերին, ասաց, որ Վանը ամեն մեկ հայի սրտի մեջ գոյություն ունի: Ուրեմն թող կենսունակ լինի վասպուրականցյան հոտը, որ իր Հայրապետի հետ է:

Գնահատանքի խոսք ասելով Խրիմյան Կաթողիկոսի մասին, Նորին Սրբությունը ավելացրեց, որ Հայոց Հայրիկը կմնա հավատքի, հայրենի հողի ամենից նվիրյալ և հավերժական պատգամաբերներից մեկը: Մեր նոր սերունդը լավ պետք է ճանաչի Խրիմյան Հայրիկին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Պահպանիչ աղոթք կարդաց, օրհնեց աջահամբույրի մոտեցող վասպուրականցիներին: Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը մեր հավատքը խորհրդանշող խաչեր նվիրեց վասպուրականցիներին, որից հետո հայրենակցական միության անդամների հոծ բազմությունը եղավ Վեհարանի այգում, որտեղ հասակ է առնում Աղթամարի Ս. Խաչ վանքից բերված նշենին:

Առաջին տարին է, որ ծաղկել է նուշը...

## ՌՈՒՍ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ «ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀ ՎԱԼԵՆՏԻՆ ՕՍԿՈՑԿԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ռուս մտավորականության «Ղարաբաղ» Կոմիտեի համանախագահ Վալենտին Օսկոցկուն՝ տիկնոջ հետ:

Հյուրին ուղեկցում էին ՀՀ նախագահի օգնական Սամվել Կարաբեկյանը և Կրոնի Գործոց պետական խորհրդի նախագահ Լազր Սուջյանը: Պրն. Օսկոցկին Վեհափառ Հայրապետին ներկայացրեց «Ղարաբաղ» Կոմիտեի գործունեությունն անցած տարիներին՝ ընդգծելով, որ այն նպատակ ունի ճշմարտությունը ներկայացնել աշխարհին Ղարաբաղի խնդրի վերաբերյալ: Կոմիտեն ստեղծվել է 1991-ին, և նրան անդամակցում են ռուս հայտնի մտավորականներ՝ գրողներ և գիտնականներ:

Վեհարանի իր աշխատասենյակում ջերմորեն ողջունելով ռուս մտավորականին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Ղարաբաղի ժողովուրդը իր ողջ գոյությամբ կապված կմնա իր հողին և անշեղ կքայլի անկախ ապրելու իր կամքի ճանապարհով: Դա Ղարաբաղի ժողովրդի արդար իրավունքն է: Հայաստանյայց Եկեղեցին իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնով զորավիգ կկանգնի Ղարաբաղի ժողովրդի այդ բնական իրավունքին և կջանա գերագույն կարելին անել, որ այդ իրավունքը ճանաչվի բոլորի կողմից:

Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց ռուս մտավորականության կատարած կարևոր դերը ճշմարտությունը և արդարությունը ասելու և տարածելու գործում: «Հավատում եմ, - ասաց Նորին Սրբությունը, - որ աշխարհի իրական ղեկավարները մտավորականներն են: Մենք ճշմարտության ձայնը պիտի հնչեցնենք»: Վեհափառ Հայրապետը կարևորեց հայ և ռուս մտավորականության գործակցությունն ու սերտ շփումը՝ ի շահ երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների զարգացման:

«Պատմության ձայնն ասում է, որ երբ մենք միասին ենք, ուժեղ ենք, երբ միասին չենք, տկար ենք», - ամփոփելով ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը Պրն. Օսկոցկուն և նրա տիկնոջը նվիրեց հուշանվերներ, որից հետո հյուրերն այցելեցին Գահասրահ, ծանոթացան Վեհարանի պատկերասրահում պահվող մշակույթի արժեքներին:

## ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ուրբաթ, Ապրիլի 12-ի առավոտյան, Երևան ժամանեցին Աստվածաշնչային Միացյալ Ընկերության (United Bible Society) ներկայացուցիչները՝ Անգլիայից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Դանիայից, Չեխիայից և Լիբանանից՝ Երևանում Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության նոր կենտրոնի բացման առիթով:



Աստվածաշնչային Ընկերության Հայաստանի հանձնախումբը, ատենապետությամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, նույն օրը հյուրերին ներկայացրեց Վեհափառ Հայրապետին: Իրենց հարգանքը մատուցելուց հետո հյուրերը հաղորդ դարձան Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի մտածումներին և ցուցումներին՝ Աստվածաշնչի տարածման գործը Հայաստանում զարգացնելու կապակցությամբ:

Ի գնահատություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցում նրանց տարած բազմօգուտ աշխատանքի, Նորին Սրբությունը նրանց հրավիրեց զրույցի, որի ընթացքում փոխանակվեցին հուշանվերներ:

Վեհափառ Հայրապետը իր խոսքի ընթացքին հատուկ կերպով շեշտեց Աստվածաշնչային Ընկերության և Հայաստանյայց Եկեղեցու սերտ գործակցության անհրաժեշտությունը: «Աստծո խոսքի տարածումը չի նշանակեր միայն գրքերի տարածում, այլ Աստծո կամքին փոխանցումը ժողովրդին, Աստվածաշնչի մեջ արտահայտված ճշմարտությունների ներթափանցումը ժողովրդի կյանքին մեջ: Սա հիմնականորեն Եկեղեցու գործն է, որին Աստվածաշնչային ընկերությունները

բերելու են իրենց մասնակցությունը՝ ամբողջական գործակցությամբ», ընդգծեց Նորին Սրբությունը:

Երեկոյան ժամը 18.00-ին տեղի ունեցավ Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության հանդիսավոր բացումը, որին նախագահեց Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա. Կաթողիկոսը:



ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ՍՏԱՑԱՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կոտայքի մարզպետ Հովհաննես Հովհաննիսյանին, որին ուղեկցում էին մարզպետի տեղակալ Քոչար Մանուկյանը, Հրազդանի քաղաքապետ Գարեգին Խաչատրյանը, մարզպետարանի աշխատակիցներ:

Կոտայքի մարզպետը, ներկայացնելով մարզի պաշտոնյաներին, Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց մարզպետարանի ծավալած գործունեության ու խնդիրների մասին: Պրն. Հովհաննիսյանը ասաց նաև, որ ստանալով Վեհափառ Հայրապետի օրհնությունը, մարզպետարանի աշխատակիցները առավել նվիրումով կլծվեն իրենց պարտականություններին:

Ողջունելով հյուրերին, Գարեգին Ա. Կաթողիկոսը օրհնեց նրանց նպատակները և մուտեցման ոգին: Նորին Սրբությունն ասաց, որ մենք այլևս պետք է մտածենք իբրև պետական ազգ, քանզի եթե մեր պետությունը զորավոր լինի, մենք կարող ենք դիմակայել արտաքին աշխարհից եկած վտանգներին: Մենք պետք է ներքնապես ամուր պահենք մեր երկիրը: Վեհափառ Հայրապետը կարևորեց պետական իշխանության և Մայր Աթոռի ներդաշնակ գործակցությունը: Այսուհետև իմ աղոթքների մեջ դուք միշտ կլինեք, ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին մարզի տարածքում նոր եկեղեցիների կառուցմանը, մարզպետարանի և Մայր Աթոռի գործակցությանն առնչվող հարցեր: Անդրադառնալով նոր եկեղեցիների կառուցման հանգամանքին, Վեհափառ Հայրապետը կարևոր համարեց, որ եկեղեցին չընկալվի իբրև հուշարձան, այլ նախ և առաջ իբրև ժողովրդի հավաքավայր:

Հանդիպման ավարտին շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Պրն. Հովհաննիսյանը Վեհափառ Հայրապետին ընծայեց մեկ գեղարվեստական կտավ և սիրով հրավիրեց Կոտայքի մարզ՝ առավել մոտից ծանոթանալու մարզի հոգևոր կյանքին:

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Հանրապետության փոխվարչապետ և Արտաքին Գործոց նախարար Ցիան Ցիչենին և նրան ընկերակցող պատվիրակությանը: Հյուրերին Մայր Աթոռում ուղեկցում էին



Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց նախարար Վահան Փափազյանը և Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թան Կեժունը:

Վեհարանի Ընդունելությունների սրահում ողջունելով Չինաստանի փոխվարչապետին, Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իբրև հնագույն քրիստոնեական Եկեղեցու հոգևոր կենտրոն: Գոհություն ենք հայտնում Աստծուն, ասաց Նորին Սրբությունը, որ դարերի ընթացքին մեր կրած բազում դժվարություններից հետո մեզ արժանացրեց մեր երազած նորանկախ պետության:

Վեհափառ Հայրապետը գնահատանքով նշեց այն իրողությունը, որ Չինաստանի Հանրապետությունը առաջին երկրներից մեկն էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը և դիվանագիտական սերտ հարաբերություններ հաստատեց մեր պետության հետ: Նորին Սրբությունը առանձնակի կարևորեց երկու ժողովուրդների եղբայրական հարաբերությունների զարգացումը: «Մեծ ժողովուրդների մեծությունը, - ասաց Գարեգին Ա. Կաթողիկոսը,- փոքր ժողովուրդների հանդեպ ունեցած սերն է»:

Ջերմ զրույցի ընթացքում շոշափվեցին նաև ազգային կյանքում Եկեղեցու դերակատարությանը, Չինաստանի հայ համայնքի կյանքին, երկու պետությունների միջև տնտեսական գործակցությանն առնչվող հարցեր:

Մեծահարգ հյուրը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի կողմից ցուցաբերված ջերմ վերաբերմունքի համար, նշեց, որ Չինաստանի և Հայաստանի հարաբերությունները գալիս են դեռ հին ժամանակներից և այժմ գտնվում են զարգացման առավել նպաստավոր պայմանների մեջ:

Հուշանվերների փոխանակությունից հետո Վեհափառ Հայրապետն անձամբ առաջնորդեց Պրն. Ծիան Ցիչենին Գահասրահ, ծանոթացրեց Վեհարանում պահվող մշակութային և հոգևոր արժեքներին:

## «ՄԵԾ ԳՈՐԾԵՐԸ ԿԻՐԱԿԱՆԱՆԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՃԻԳՈՎ»
## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ

Փետրվարի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արմավիրի մարզպետ Սերժիկ Հովհաննիսյանին, որին ուղեկցում էին մարզային իշխանության և մտավորականության ներկայացուցիչներ: Վեհարանի իր աշխատասենյակում շնորհավորելով մարզպետին՝ այդ բարձր պաշտոնում նշանակման առթիվ, Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ առաջիկայում մարզպետարանի և Մայր Աթոռի միջև սկիզբ կառնի սերտ գործակցություն: «Պիտի ջանամ, - ասաց Նորին Սրբությունը, - որ դա լինի կենսագործ աշխատանք: Եկեղեցին և պետությունը նույնը չեն, բայց նույն նպատակին կծառայեն: Ես կրոնականին դերը չեմ զատում կյանքի մյուս երեսներից և հավատում եմ, որ հավաքական ճիգով մեծ գործեր կիրականանան»:

Այնուհետև անդրադառնալով երիտասարդության և հոգևոր կյանքի խնդիրներին, Նորին Սրբությունը կարևորեց Եկեղեցու և մարզային իշխանությունների գործակցությունը նոր սերնդի դաստիարակության ասպարեզում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և աջակցության համար, պրն. Հովհաննիսյանը նշեց, որ Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը մեծ արժեք ու կշիռ ունի իշխանության ներկայացուցչի համար:

Հանդիպման վերջում տեղի ունեցավ նվերների փոխանակություն:

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Ապրիլի 4-ին, կիրակի.- Ծիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ արք. Տիգրանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց Ոտնլվայի արարողություն՝ ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

***

**Ապրիլի 6-ին, կիրակի.- Ճրագալույց Զատկի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ համապատասխան քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

**Ապրիլի 8-ին, կիրակի.- Մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***

**Ապրիլի 14-ին, կիրակի.- Կրկնազատիկ /Նոր կիրակէ/:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն արք. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ համապատասխան քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

**Ապրիլի 21-ին, կիրակի.- Աշխարհամատրան /Կանաչ կիրակէ/:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անուշավան արք. Ժամկոչյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

**Ապրիլի 24-ին, կիրակի.-** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս.

խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի տարածքում կանգնեցված Ապրիլյան նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձանի առջև կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***

Ապրիլի 28-ին, կիրակի.- /Կարմիր կիրակէ/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր վրդ. Չիփթչյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

# “ЭЧМИАДЗИН”
## ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (АПРЕЛЬ 1996 г.)


РЕДАКЦИОННАЯ

1. Христосъ воскресе изъ мертвыхъ - (стр. 3-5).

2. Е. А. А. – Эчмиадзин - алтарь воскресения (стихотворение) - (стр. 6)

3. Перечень поздравительных посланий Его святейшества Католикоса всех армян Гарегина I духовным предстоятелям церквей-сестер по поводу Светлого воскресения Христова - (стр. 7-8).

4. Пасхальное послание Его Святейшества Католикоса всех армян Гарегина I - (стр. 9-12).

5. КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ГАРЕГИН I – Беседа в день поминовения апрельских жертв, св. Эчмиадзин, апрель 1996 г. (слово по случаю 24-ого апреля) - (стр. 13-16).

6. Официальный визит в Армению общего секретаря Всемирного Совета Церквей, доктора Конрада Райзера, св. Эчмиадзин, 19-22 апреля 1996 г. - (стр. 17-23).

7. Слово общего секретаря Всемирного Совета Церквей доктора Конрада Райзера по случаю годовщины армянского геноцида. Женева, 24 апреля 1996 г. - (стр. 24).

8. 24-ое апреля в Первопрестольном Эчмиадзине - (стр. 25-26).

9. М. ВАРДАНЯН – Страстная неделя в первопрестольном Эчмиадзине - (стр. 27-31).

10. ВАРДАН ДЕВРИКЯН – Годовщина со дня интронизации Католикоса всех армян Гарегина I (стр. 32-35).

11. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе на Антипасху по случаю годовщины со дня интронизации Католикоса всех армян Гарегина I, 14 апреля 1996 г. - (стр. 36-38).

12. Торжество, посвященное годовщине со дня интронизации католикоса всех армян, 10 апреля 1996 г. - (стр. 39).

13. Концерт, посвященный годовщине со дня интронизации Его святейшества Католикоса всех армян Гарегина I - (стр. 40-41).

14. МАРИАМ ВАРДАНЯН – Торжество, посвященное годовщине со дня интронизации католикоса всех армян Гарегина I, 21 апреля 1996 г. - (стр. 42-43).

15. Награждение медалью Григория Просветителя национального благотворителя Артура Мартиросяна Католикосом Гарегином I, 7 апреля 1996 г. - (стр. 44-45).

16. Вручение диплома почетного доктора Ереванского государственного университета Католикосу Гарегину I, 27 апреля 1996 г. - (стр. 46-47).

17. **ДИАКОН МУШЕГ ЖОРОЯН** – Визит Католикоса всех армян в Национальную библиотеку, 30 апреля 1996 г. - (стр. 48-50).

18. **СТЕПАН СТЕПАНЯНЦ** – Армянская церковь в 1914 году (исследование) - (стр. 51-61).

19. **ВААН МЕЛИКЯН** – Армянская церковь и проблемы западного армянства в период февральской революции 1917 года (исследование) - (стр. 62-71).

20. **АРУТЮНЯН АВЕТИС АМАЯКОВИЧ** – Англия и армянские беженцы в годы первой мировой войны (исследование) - (стр. 72-79).

21. **ВОЛОДЯ АБРААМЯН** – Берег спасения (литературное) - (стр. 80-88).

22. **ВАРДАН ДЕВРИКЯН** – Литературное предание в топографических сочинениях Алишана (исследование) - (стр. 89-101).

23. **ВАРАГ АРАКЕЛЯН** – "Обновление армянского словаря" (исследование) - (стр. 102-107).

**ЕПАРХИАЛЬНАЯ ЖИЗНЬ**

24. Чин священия и открытие часовни и церквей грузинской епархии Армянской Апостольской церкви в Ахалцихском районе, 23-24 апреля 1996 г. - (стр. 108-109).

25. **ИЕРОМОНАХ БАГРАТ ГАЛСТЯН** – Пасхальные дни в Батумской армянской общине, 13-16 апреля 1996 г. - (стр. 110-111).

26. Приемы в Первопрестольном Эчмиадзине 27 февраля – 16 апреля 1996 г. - (стр. 112-117).

27. Церковный амвон. Вести – Описание литургий и проповедей и прочих обрядов, совершенных в Кафедральном Соборе и в Первопрестольном Эчмиадзине в апреле 1996 года - (стр. 118-119).

# "ETCHMIADZINE"

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE

(AVRIL 1996)

**EDITORIAL**


1. Aujourd'hui ill est ressuscité des morts - (pp. 3-5).

2. **E. A. A.** - Etchmiadzine l'autel de résurrecstion (poésie) - (p. 6).

3. Table des lettres de félicitations de la part de Sa Sainteté Garéguine Ier Catholicos de Tous les Arméniens, adressées aux chef spirituels des églises soeurs à l'occasion de la Résurrection mervelleuse de notre Seigneur Jésus-Crist - (pp. 7-8).

4. **GAREGUINE IER CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS** – Résurrection sur la terre et dans le ciel, Saint Etchmiadzine, le 7 avril 1996 (message de Pâques) - (pp. 9-12).

5. **GAREGUINE IER CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS** – Discours en cinq parties le jour de la commémoration des martyres du Génocide des Arméniens. Saint Etchmiadzine, avril 1996 (message à l'ccasion de 24 avril) - (pp. 13-16).

6. Visite oficielle du secrétaire général du Conseil Oecuménique (WCC) des Eglises, du docteur Conrad Riser en Arménie, Saint Etchmiadzine, le 19-22 avril 1996 - (pp. 17-23)

7. Message du secrétaire général du Conseil Oecuménique des Eglises (WCC), du docteur Conrad Riser à l'occasion de l'anniversaire du Génocide Arménien, Genève, le 24 avril 1996 - (p. 24).

8. Le 24 avril au Saint-Siège d'Etchmiadzine - (pp. 25-26).

9. **MARIAM VARDANIAN** - La Sainte Semaine au Saint-Siège d'Etchmiadzine - (pp. 27-32).

10. **VARDAN DEVRIKIAN** - La première année de l'intronisation de Sa Sainteté - (pp. 33-35).

11. Le sermon de l'Archevêque Nersès Bosabalian à l'occasion de la première anniversaire de l'intronisation, fait le Nouveau Dimanche dans la Cathédrale de Saint-Etchmiadzine, le 14 avril 1996 - (pp. 36-38).

12. Cérémonie consacrée à la première anniversaire de l'intronisation de Sa Sainteté, le 10 avril 1996 - (p. 39).

13. Consert consacré à l'anniversaire de l'intronisation de Sa Sainteté - (pp. 40-41).

14. **MARIAM VARDANIAN** - Cérémonie consacrée à l'anniversaire de l'intronisation de Sa Sainteté, le 21 avril - (pp. 42-43).

15. Le Catholicos Gareguine Ier a décerné l'ordre de Grégoire l'Illuminateur au bienfaiteur Arthur Martirossian, le 7 avril 1996 - (pp. 44-45).

16. Le diplôme du Docteur Honoraire de l'Université d'Etat d'Erévan a été remis au Catholicos Gareguine Ier, le 27 avril 1996 - (pp. 46-47).

17. **DIACRE MOUCHER JOROYAN** - La visite de Sa Sainteté à la Bibliothèque Nationale, le 30 avril 1996 (pp. 48-50).

18. **STEPAN STEPANIANTZ** - l'Eglise Arménienne en 1914 (étude) - (pp. 51-61).

19. **VAHAV MELIKIAN** - l'Eglise Arménienne et les problèmes des Arméniens de l'Arménie Occidentale à l'époque de la Révolution de Février de 1917 (étude) - (pp. 62-71).

20. **AVETIS HAROUTUNIAN** - l'Angleterre et les émigrants arméniens pendant la Première Guerre Mondiale (étude) - (pp. 72-79).

21. **VOLODIA ABRAHAMIAN** - Rivage de salut (littéraire) - (pp. 80-88).

22. **VARDAN DEVRIKIAN** - La tradition littéraire dans les volumes topographiques d'Alichan (étude) - (pp. 89-101).

23. **VARAG ARAKELIAN** - "La renouvellation de la Dictionnaire Haikazian" (étude) - (pp. 102-105).

## VIE DIOCESAINE

24. La consécration et la réouverture des Eglises et d'une chapelle de la région Akhaltzekha du diocèse arménien de la Géorgie, le 23-24 avril 1996 - (pp. 108-109).

25. **Rev.Père B. G.** - Les jours de Pâques dans la communauté Arménienne de Batoumi, le 13-16 avril 1996 - (pp. 110-111).

26. Réceptions au Saint-Siège, du 27 février au 16 avril 1996 - (pp. 112-117).

27. Du Saint Siège-Brèves informations concernant les célébrations des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religiesues qui ont eu lieu dans la Cathédrale de Saint Etchmiadzine au cours du mois d'avril 1996 - (pp. 118-119).

## "ETCHMIADZIN"

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
APRIL 1996

**EDITORIAL**

1. Today risen from the death - (pp. 3-5).

2. **BISHOP ASOGHIK ARISTAKESIAN** - The Etchmiadzin: Alter of Resurrection - (p. 6).

3. The list of the congratulatory letters, written by His Holiness Karekin I The Supreme Patriarch Catholicos of All Armenians to the Spiritual Leaders of Sister Churches on the occasion of Te Deum, Holy Resurrection feast of Savior - (pp. 7-8).

4. **KAREKIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS** - Resurrection on the Earth and in the Heaven, Holy Etchmiadzin 7 April 1996 (Paschal Message) - (pp. 9-12).

5. **KAREKIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS** - Pentamerous Discourse of the evoking Solemnity on the April martyrs - Holy Etchmiadzin, April 1996 /Message on the occasion of April 24/ - (pp. 13-16).

6. The official visit of Dr. Konrad Raiser General Secretary of WCC to Armenia, Holy Etchmiadzin, 19-22 April 1996 - (pp. 17-23).

7. The Message of Dr. Konrad Raiser General Secretary of WCC, in the occasion of the Anniversary of the Armenian Genocide, Geneva, 24 April 1996 - (p. 24).

8. The April 24 in Holy See - (pp. 25-26).

9. **M. VARDANIAN** - The Holy Week in Holy See - (pp. 27-31).

10. **VARDAN DEVRIKIAN** - The one year of the Enthronement of Supreme Patriarch - (pp. 32-35).

11. The Sermon of Archbishop Nerses Bozabalian preached in the Mother Cathedral on the Low Sunday, in the occasion of the First Anniversary of the Enthronement of His Holiness Karekin I Catholicos of All Armenians, 14 April 1996 - (pp. 36-38).

12. Festival: dedicated to the First Year Enthronement of Supreme Patriarch, 10 April 1996 - (p. 39).

13. Concert: dedicated to the First Year Anniversary of the Enthronement of His Holiness Karekin I Supreme Patriarch Catholicos of All Armenians - (pp. 40-41).

14. **MARIAM VARDANIAN** - Festival: dedicated to the Anniversary of the Enthronement of Catholicos of All Armenians - (pp. 42-43).

15. Karekin the First Catholicos granted the Saint Grigor Illuminator Insigna to the Benefactor Artur Martirossian, 7 April 1996 - (pp. 44-45).

16. The Honorary Doctor's Diploma of the State University of Yerevan has been delivered to Karekin the First Catholicos, 27 April 1996 - (pp. 46-47).

17. **DEACON MOOSHEG JOROYAN** - The Supreme Patriarch's visit to National Library, 30 April 1996 (pp. 48-50).

18. **STEPAN STEPANIANTZ** - The Armenian Church in 1914 (Study) - (pp. 51-61).

19. **VAHAN MELIKIAN** - The Armenian Church and the Problems of Western Armenians in 1917 during the period of the February Revolution (Study) - (pp. 62-71).

20. **AVETIS HAROUTIUNIAN** - Britain and the Armenian emigration in the years of the First World War (Study) - (pp. 72-79).

21. **VOLODIA ABRAHAMIAN** - Coast of Deliverance (Literary) - (pp. 80-88).

22. **VARDAN DEVRIKIAN** - The Literary Tradition of Alishan in the Topographical Volumes (Study) - (pp. 89-101).

23. **VARAG ARAKELIAN** - «The Renovation of Haikazian Dictionary» (Study) - (pp. 102-107).

**DIOCESE LIFE**

24. The Consecration and the reopening of the Churches and one Memorial Chapped in Akhaltzkha Region of the Armenian Diocese of Georgia, 23-24 April 1996 - (pp. 108-109).

25. **B.A.G.** - The Paschal Days in the Armenian Community of Batumy, 13-16 April 1996 - (pp. 110-111).

26. Receptions in Holy See, 27 February - 16 April 1996 - (pp. 112-117).

27. Ecclesiastic Stage, News - The description of the Holy Masses in the Mother Cathedral, the delivered Sermons and the Festivals in the Holy See during the April month - (pp. 118-119).

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала.
Rédaction de la revue, Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 26.07.1996 թ.: Ստորագրված է տպագրության 16.08.1996 թ.: Տպագրական 8 մամուլ, թուղթ 70×108 $^{1}/_{16}$, պատվեր 259, տպաքանակը՝ 1200: Տպագրությունը՝ օֆսեթ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան